



ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ
2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

* Առաջին նախագծի մշակման աշխատանքները ավարտվել են 2025 թվականի մայիսի 6-ին, շրջանառության մեջ է դրվել մայիսի 7-ից

* Վերջնական տարբերակը մշակվել է 2025 թվականի հունիսի 6-ին, հրապարակվել է հունիսի 9-ին

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագրի 2023-2024 թվականներին իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների զեկույցը պատրաստվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համագործակցությամբ:

Զեկույցից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱ, 2025

ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7. գրասենյակ 2

Հեռախոս՝ +37410 540199

Էլ. փոստ՝ info@armla.am

Վեբ կայք՝ <https://armla.am/>

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱ, 2025

ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7. գրասենյակ 2 (Քարտուղարության գրասենյակ)

Հեռախոս՝ +37410 540199

Էլ. փոստ՝ info@aac.am

Վեբ կայք՝ <https://aac.am/>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ.....	9
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	10
ՄՇՏԱՂԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	12
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱՂԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	18
I. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ.....	18
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.1 Վերանայել հանձնաժողովի անդամների ընտրության, պատասխանատվության կարգերը.....	18
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.2 Բարելավել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների ընթացակարգերը, սահմանել դրանց առանձնահատկությունները, և հստակեցնել ԿԿՀ գործառնությունները՝ որպես վարչարարություն իրականացնող մարմին.....	19
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.3. Կատարելագործել բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտը.....	20
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.4. Բարելավել էթիկայի հանձնաժողովների գործունեությունը	22
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.5. Բարելավել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման թվային կառուցակարգեր.....	24
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.6. Ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության առկա գործիքակազմը	25
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.7. Երաշխավորել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությունը՝ մշակվող ակտերի (ex ante) և անհրաժեշտության դեպքում՝ դրանց հիմքում ընկած կամ դրանց հետ փոխկապակցված իրավական ակտերի (ex post) փորձաքննությունը ...	26
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.8. Միասնականացնել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրությունը.....	27
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.9. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ ներդնելուն ուղղված քայլերի իրականացում.....	28
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.10. Ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը	28
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.13. Տարանջատել բարեվարքության ուսումնասիրությունը հանրային պաշտոնում նշանակման կամ առաջխաղացման համար և ընթացիկ բարեվարքության ուսումնասիրությունը (շրջանակը, մեխանիզմները).....	29
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.14. Բարձրացնել ԿԿՀ կողմից բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների հիման վրա նշանակում իրականացնող մարմնի հաշվետվողականությունը.....	30
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.15. Սահմանել ԿԿՀ բարեվարքության վերաբերյալ եզրակացության եզրափակիչ մասի հրապարակայնության պահանջ.....	31
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.16. Ամրապնդել բարեվարքության ուսումնասիրության համակարգի արդյունավետությունը	33

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.17. Մեծացնել կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների արդյունավետությունը	33
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.18. Կատարելագործել վարքագծի կանոնագրքերը՝ հիմք ընդունելով ԿԿՀ հաստատած տիպային կանոնները, և դրանց կիրարկման կառուցակարգերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում	34
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.19. Երաշխավորել շահերի բախման նոր սահմանման իրացումը	35
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.20. Զարգացնել նվերների ընդունման սահմանափակումների իրացման կառուցակարգերը	36
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.21. Զարգացնել անհամատեղելիության պահանջների բացահայտման և վերահսկողության գործիքները	38
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.23. Ներդնել լոբբիստական գործունեության (ոչ իրավաչափ ազդեցության) վերաբերյալ կարգավորումներ	40
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.25. Ներդնել բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների կիրառման միասնական համակարգ	41
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ	43
II. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԶՈՐԱՑՈՒՄ	44
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.1. Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման կարգը	44
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.2. Երաշխավորել Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ հզորացումը	46
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.4. Անցկացնել կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով մասնա գիտական վերապատրաստումներ և պատրաստումներ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների համար	46
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.6. Մշակել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ	48
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.7. Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների աշխատանքներին ներգրավել տնտեսագիտական/ ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների	49
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.8. Անցկացնել վերապատրաստումներ հակակոռուպցիոն դատարանների դատավորների համար	50
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.10. Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների աշխատանքներին ներգրավել տնտեսագիտական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների	52
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.11. Սահմանել կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգ և կատարելագործել առկա կառուցակարգերը	53

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.12. Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաները ներառել դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների ուսուցման և վերապատրաստման ծրագրերում	54
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.13. Կատարելագործել և արդիականացնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը	56
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.14. Կատարելագործել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերը	59
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.17. Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը	60
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.18. Զարգացնել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը	62
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.19. Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը	63
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.20. Կատարելագործել ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները, դիտարկել ազդարարման խրախուսման մեխանիզմների նախատեսման նպատակահարմարությունը	64
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	66
III. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ	67
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.1. Մշակել և ներդնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում 5-6 տարեկան երեխաների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր	67
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.2. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողների համար մշակել և ներդնել էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիր	69
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.3. Հանրակրթության շրջանակում կատարելագործել «Հասարակագիտություն» առարկայի առարկայական ծրագիրը	70
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.4. Մշակել և ներդնել «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը	71
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման շրջանակում ներդնել էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր, մանկավարժական անձնակազմի համար նախատեսել նշված թեմաներով վերապատրաստումներ	72
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.6. Հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում պետական մարմինների պատվերով իրականացնել հակակոռուպցիոն բնագավառի գիտական հետազոտություններ	74
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.7. Ստեղծել հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակ՝ «Հայկական կրթական միջավայր» պորտալում նախատեսելով դրա համար առանձին բաժին	75

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.8. Բարձրագույն ուսումնական հաստատություններում վերջիններիս համաձայնությամբ մշակել և ներդնել ուսանողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն դասընթաց/բաղադրիչ.....	75
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.9. Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն վերապատրաստումների ծրագիր.....	76
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.10. Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներդնել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմիններում ուսանողական պրակտիկայի և փորձնակության անցկացման ծրագրեր, նախատեսել հակակոռուպցիոն ոլորտում արտասահմանյան ուսումնական հաստատություններում սովորելու համար կրթաթոշակների տրամադրման հնարավորություններ.....	78
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.11. Նպաստել ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականաց մանր՝ դպրոցներում հիմնելով աշակերտական հակակոռուպցիոն ակումբներ, իսկ ԲՈԻՀ-երում՝ Հակակոռուպցիոն լաբորատորիաներ (R&D)՝ հակակոռուպցիոն հետազոտություններ, իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն անցկացնելու և հակակոռուպցիոն ծրագրերին հետազոտական և անալիտիկ բնույթի այլ աջակցություն տրամադրելու նպատակով.....	79
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.12. Մշակել և ներդնել հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագիր, այդ թվում՝ հանրային իրազեկման ծրագրի իրականացման արդյունքների գնահատման համակարգ.....	80
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.13. Զարգացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունները հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում	82
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.14. Հզորացնել ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների ցանցերի կարողությունները՝ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆոնդայթայթման իրականացման նպատակով	83
«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	85
IV. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ.....	86
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.1. Գործարար ոլորտում ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր՝ զարգացնելով կորպորատիվ կառավարման մշակույթը.....	86
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.2. Պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր, կատարելագործել հաշվետվողականության մեխանիզմները.....	87
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.3. Պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգեր	87

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.4. Հգորացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ կարողությունները՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության համատեքստում ...	89
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.5. Բարձրացնել բիզնես համայնքի իրազեկվածության մակարդակն իրենց իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության և հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ.....	90
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.7. Ներդնել իրական շահառուների բացահայտման ինստիտուտի արդյունավետությունը ապահովող մեխանիզմներ	91
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.8. Արդիականացնել և կատարելագործել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը և կարգավորումները	93
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.9. Բարձրացնել հարկային վարչարարության արդյունավետությունը, կատարելագործել ստվերային տնտեսության դեմ պայքարի գործիքակազմը և մեղմացնել բիզնես-հարկային մարմին փոխհարաբերություններում սուբյեկտիվիզմը ու կոռուպցիոն ռիսկերը	95
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.10. Կատարելագործել հանրային գնումների ոլորտում շահերի բախման և հակակոռուպցիոն կառուցակարգերը	96
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.11. Կատարելագործել մրցակցության ոլորտի իրավա խախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերը, մշակել այդ գործիքների կիրառման ուղեցույցներ	97
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.13. Շարունակաբար կատարելագործել հանրային գնումների գործընթացների թափանցիկության և հրապարակայնության համակարգերը.....	98
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.14. Կատարելագործել և բարելավել հանրային գնումների ոլորտում հաշվետվողականության կառուցակարգերը՝ հանրության և մասնավոր ոլորտի շրջանում գնումների գործընթացի վերաբերյալ վստահության բարձրացման և ամրապնդման ուղղությամբ	99
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.15. Կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման արդյունավետության բարձրացման նպատակով շարունակաբար զարգացնել և կատարելագործել ինստիտուցիոնալ կառուցակարգերը և մեխանիզմները.....	100
«ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 4-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	103
V. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ	104
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.1. Գործարկել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակ.....	104
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.2. Բարելավել մոնիթորինգի և գնահատման իրականացման ընթացակարգը	104
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.3. Վերանայել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությանն առնչվող կարգավորումները և ներառականության շրջանակը	106

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.4. Սահմանել կոռուպցիայի դեմ պայքարի, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման կառուցակարգերը և ապահովել դրանց իրագործումը.....	106
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.5. Զարգացնել Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունները՝ վերապատրաստումների իրականացման և ուղեցույցների մշակման եղանակներով	107
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.6. Դոնորների բնականոն աշխատանքների համակարգման մեխանիզմի ապահովում.....	109
«ՀԱԿԱԿՈՌՈՒԹՅՈՒՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	111
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	112
1. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ	112
2. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.....	112
3. ՎԵՐ ՀԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	113
Ա. Մեթոդական խնդիրներ և առաջարկներ.....	113
Բ. Բովանդակային խնդիրներ և առաջարկներ.....	114

Հապավումների ցանկ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԲՏԱՆ	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցիացիա
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄՊՀ	Մրցակցության պաշտպանության հանձնաժողով
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՌՆ	Ռազմավարական նպատակ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔԾԳ	Քաղաքացիական ծառայության գրասենյակ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖԽՔ	Ֆոկլուս խմբային քննարկում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կառավարությունը 2023 թվականի հոկտեմբերի 26-ին N 1871-Լ¹ որոշմամբ հաստատեց «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը» (այսուհետ նաև՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն կամ Ռազմավարություն):

Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակներն են՝ կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգերի ամրապնդումը, կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործումը, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործումը, գործարար բարեվարքության, գործարար իրավունքների պաշտպանության և պետություն-քիզնես վարչարարության դյուրացումը, հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործումը:

Ռազմավարության 2023-2024 թվականներին կատարման ենթակա 69 գործողությունները ներկայացված են հինգ ռազմավարական նպատակի ներքո, որոնցից 21-ը՝ կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգերի ամրապնդման, 15-ը՝ կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործման, 14-ը՝ հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործման, 13-ը՝ գործարար բարեվարքության, գործարար իրավունքների պաշտպանության և պետություն-քիզնես վարչարարության դյուրացման և 6-ը՝ հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործման ոլորտում:

Աղյուսակ 1. Հակակոռուպցիոն ռազմավարության ոլորտները և 2023-2024 թվականներին իրականացման ենթակա գործողությունների թիվը

Ոլորտներ	2023-2024 թվականներին իրականացման ենթակա գործողությունների թիվը ²
Ոլորտ 1: Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգերի ամրապնդում	21
Ոլորտ 2: Կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի կատարելագործում	15
Ոլորտ 3. Հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործում	14
Ոլորտ 4. Գործարար բարեվարքության, գործարար իրավունքների պաշտպանության և պետություն-քիզնես վարչարարության դյուրացում	13
Ոլորտ 5. Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործում	6
Ընդամենը 2023-2024 թվականներին իրականացման ենթակա՝	69

¹ 26.10.2023 թվականի N 1871-Լ որոշումը հասանելի է այստեղ.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674>

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն՝ համագործակցելով Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ, և հիմնվելով ՀՀ 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարության այն ձևակերպման վրա, ըստ որի առավել համապարփակ ու բազմակողմանի գնահատում ունենալու նպատակով քաղաքացիական հասարակության կազմակերպությունները յուրաքանչյուր տարի կարող են իրականացնել անկախ մոնիթորինգ և գնահատում, իրականացրել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառման ծրագրի 2023-2024 թվականներին իրականացման ենթակա գործողությունների կատարման մշտադիտարկում: Մշտադիտարկման դաշտային աշխատանքներն իրականացվել են 2025 թվականի փետրվար-մայիս ամիսներին և **մշտադիտարկել են այն գործողությունները, որոնք նախատեսված էին կատարման 2023-2024 թվականների ընթացքում:** Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն զեկույցը ընդգրկում է ՀՀ 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարության միջանկյալ տարվա՝ 2023-2024 թվականների գործողությունների կատարողականը, հետևապես ակնկալվում է, որ այն կօժանդակի ՀՀ ԱՆ-ին՝ գործող հակակոռուպցիոն ռազմավարությունը բարելավելու նպատակով կատարել փոփոխություններ, ինչպես նաև ապագայում նոր ռազմավարություն մշակելու աշխատանքներում:

ա. Մշտադիտարկման նպատակներ

Ռազմավարության գործողությունների ծրագրերի մշտադիտարկման և գնահատման նպատակներն են՝

- 1) գնահատել ՀՀ 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի՝ 2023-2024թթ. իրականացման ենթակա գործողությունների կատարման ընթացքը,
- 2) պարզել այն գործողությունները, որոնք կատարվել են, կատարվել են մեծամասամբ, կատարվել են մասնակի կամ չեն կատարվել, դրանց պատճառները, կատարել այդ գործողությունների ընթացակարգային (քանակական) գնահատումներ,
- 3) ըստ ընտրանքի կատարել որոշ գործողությունների ազդեցության մակարդակի (որակական) գնահատումներ:

բ. Գնահատման աղյուսակ

Մշտադիտարկման են ենթարկվել այն գործողությունները, որոնք իրականացվել են 2023-2024թթ.-ին, հետևապես գնահատման արդյունքները վերաբերում են 2023-2024թթ.-ին նախատեսված գործողությունների (կատարողականի թիրախների) ստուգման միջոցների և ուղղակի արդյունքային քանակական և որակական (ըստ ընտրանքի որոշ գործողությունների դեպքում) ցուցանիշների միջանկյալ արդյունքի հարաբերակցությանը և թե ինչքանով է կատարված գործողությունը նպաստել ակնկալվող ազդեցությանը: Ռազմավարության և գործողությունների ծրագրի բաժնի արդյունքային մոնիթորինգի ցուցիչները մշտադիտարկման չեն ենթարկվել, քանի որ դա ենթադրում է ոչ թե տարեկան գործողությունների ծրագրի կատարողականի մշտադիտարկում, այլ ամբողջ ռազմավարության կատարողականի եզրափակիչ գնահատումը: Ռազմավարության 2023-2024 թթ. իրականացման ենթակա գործողությունների, դրանց ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշների, ինչպես նաև ստուգման միջոցների ուսումնասիրությունը թույլ է տալիս այս գործողությունների իրականացումը գնահատող ցուցանիշները բաժանել երկու խմբի, ինչպես ներկայացված է ստորև՝

› Ընթացակարգային (քանակական) ցուցանիշներ

Ընթացակարգային ցուցանիշներն ընդհանուր առմամբ անդրադառնում են այն գործողություններին, որոնք ուղղված են որոշակի ընթացակարգերի ավարտին, օրինակ՝ իրավական փաստաթղթի նախագիծը Կառավարություն կամ ԱԺ ներկայացնելը, վերլուծության կամ ուսումնասիրության իրականացումը, խնդիրների գույքագրումը, հակակոռուպցիոն կանոնակարգերի ներդրումը և այլն: Ընթացակարգային ցուցանիշները վերաբերում են ելքային մակարդակի արդյունքներին և գնահատվում են արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման (անգլերեն՝ results-based monitoring) հիման վրա: Ակնկալվում է, որ 2023-2024 թվականի ընթացքում իրականացվելիք գործողությունները գնահատման իրականացման ժամանակահատվածում, որն է՝ 2025 թվականի փետրվար-մայիս ամիսները, արդեն իսկ պետք է ավարտված լինեն: Անհրաժեշտ է նշել, որ գործողությունների ծրագիրն ընդգրկում է հիմնականում ընթացակարգային ցուցանիշներ

ենթադրող գործողություններ: Ընթացակարգային ցուցանիշների դեպքում մշտադիտարկումն արձանագրում է՝ թե որ փուլում է գտնվում գործընթացը:

Ընթացակարգային ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել են գնահատման հետևյալ կատեգորիաները՝

- 1 **Գործողությունը կատարվել է** - գործողությունը գնահատվում է «կատարված է», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են դարձել վկայող փաստեր (անգլերեն՝ evidence) առ այն, որ դիտարկվող ժամանակահատվածի համար գործողության 91-100%-ը կատարվել են:
- 2 **Գործողությունը կատարվել է մեծամասամբ** - գործողությունը գնահատվում է «կատարվել է մեծամասամբ», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ դիտարկվող ժամանակահատվածի համար գործողության 71-90%-ը կատարվել են:
- 3 **Գործողությունը կատարվել է մասնակի** - գործողությունը գնահատվում է «կատարվել է մասնակի», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ դիտարկվող ժամանակահատվածի համար գործողության 31-70%-ը կատարվել է:
- 4 **Գործողությունը կատարված չէ** - գործողությունը գնահատվում է «կատարված չէ», եթե դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ, կամ կատարվել է նախատեսված աշխատանքների մինչև 30%-ը, կամ տվյալ գործողության վերաբերյալ մշտադիտարկման խմբին որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Ըստ վերևում նշված ընթացակարգային ցուցանիշների կատարողականի գնահատման կատեգորիաների արդյունքների, դիտարկվող ժամանակահատվածի՝ 2023-2024 թվականների (միջանկյալ) գնահատման արդյունքն արտահայտված է հետևյալ վարկանիշային ցուցանիշներից որևէ մեկով.

- 1 **կատարված է ամբողջությամբ** (դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված աշխատանքներն իրականացվել են)՝ **1 միավոր.**
- 2 **կատարված է մեծամասամբ** (դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված աշխատանքների կեսը կամ կեսից ավելին են կատարվել)՝ **0.75 միավոր.**
- 3 **կատարված է մասնակի** (դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված որոշ աշխատանքներ կատարվել են, սակայն դրանք չեն գերազանցում նախատեսված աշխատանքների կեսը)՝ **0.5 միավոր.**
- 4 **կատարված չէ** (դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ)՝ **0 միավոր:**

Գնահատումն իրականացվել է վարիացիոն շարքի համակշռված միջինի մեթոդով հետևյալ բանաձևով՝ $(\text{ամբողջությամբ կատարված գործողությունների քանակ} \times 1 + \text{մեծամասամբ կատարված գործողությունների քանակ} \times 0.75 + \text{մասնակի}$

կատարված գործողությունների քանակ $\times 0.5 +$ կատարված գործողությունների քանակ $\times 0$)/69³ $\times 100$:

Մշտադիտարկման շրջանակներում դիտարկման են ենթարկվել թվով 69 գործողություն, որոնք ենթակա էին կատարման 2023-2024 թվականների ընթացքում: Ընդ որում, գործողություններից մեկը նախատեսված էր կատարել ն՝ 2023 թվականին, ն՝ 2024 թվականին: Հարկ է նշել, որ ընթացակարգային (քանակական կամ գործոնային) ցուցանիշների կատարողականի գնահատման և դրա արդյունքների հաշվարկման մեթոդոլոգիան համապատասխանում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից կիրառված գնահատման մեթոդոլոգիային⁴, բացառությամբ Ծանոթագրություն 1-ում նշված գնահատման սկզբունքների:

Ծանոթագրություն 1. Ի տարբերություն ՀՀ արդարադատության նախարարության մշտադիտարկման մեթոդոլոգիայի, սույն զեկույցը ներառում է նաև այնպիսի գործընթացներ, որոնք ավարտին են հասել 2025 թվականի առաջին եռամսյակում, սակայն որոնց նախապատրաստական փուլերը և հիմնական բաղադրիչները իրականացվել են 2024 թվականի ընթացքում: Այս գործընթացները ընդգրկվել են սույն զեկույցում՝ յուրաքանչյուր նման գործողության ներքո հստակ նշելով դրանց ժամանակային շրջանակի առանձնահատկությունները:

՝ Ազդեցության մակարդակի (որակական) ցուցանիշներ

Որակական ցուցանիշներն անդրադառնում են [ազդեցության մակարդակի \(որակական\) արդյունքներին](#) և Գործողությունների ծրագրերի ներքո իրականացվող գործողությունը կապում են ռազմավարական խնդիրների մակարդակում ակնկալվող ազդեցության և/կամ ուղղակի որակական ցուցանիշների հետ: Սույն մշտադիտարկման շրջանակներում ազդեցության մակարդակի գնահատումը կատարվել է գործողությունների ծրագրով նախատեսված **իրազեկման աշխատանքների և տարբեր թիրախային խմբերի համար կազմակերպված վերապատրաստումների մասով**: Այս ցուցանիշները գնահատվել են մշտադիտարկման խմբի փորձագետների կողմից և վերաբերվում են կատարված գործողությունների միջոցով ռազմավարական նպատակների և մասնավոր նպատակների մակարդակներում սպասվող արդյունքներին և ելքային իրավիճակում ներկայացված խնդիրների հասցեագրման պոտենցիալին: Այս գնահատման ընթացքում հաշվի են առնվել նաև ստուգման միջոցների օբյեկտիվությունն ու ամբողջականությունը: Գնահատումը իրականացվել է ՀՀ արդարադատության նախարարությանը (ՀՀ ԱՆ)՝ որպես հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող և մոնիթորինգ ու գնահատում իրականացնող իրավասու մարմնին ուղղված ռազմավարության և գործողությունների ծրագրի վերաբերյալ տեղեկատվական հարցումներին՝ հարցաշարերին տրված պաշտոնական պատասխանների, ֆոկուս խմբային քննարկումներ (ՖԽՔ) և

³ Բանաձևում 69-ը 2023-2024 թվականներին կատարման ենթակա գործողությունների թիվն է:

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների Հակակոռուպցիոն ռազմավարությունը, էջեր 78-79: Հասանելի է այստեղ. https://www.arlis.am/Annexes/7/2023_N1871hav.1.pdf

Տե՛ս նաև ՀՀ Արդարադատության նախարարության կողմից հրապարակված Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման 2024 թվականի հաշվետվությունը, էջեր 8-9: Հասանելի է այստեղ. <https://moj.am/storage/uploads/.....pdf>

գրասենյակային ուսումնասիրության/փաստաթղթերի վերլուծության արդյունքում դուրսբերված տեղեկատվության հիման վրա:

Այս ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել են գնահատման երեք չափանիշ.

- 1 **Գործողությունը իրականացված է** - գործողությունը գնահատվում է «իրականացված է», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ գործողության իրականացումը ապահովվել է ռազմավարական նպատակի և մասնավոր նպատակի մակարդակներում սպասվող արդյունքը:
- 2 **Գործողությունը իրականացված է ոչ ամբողջական** - գործողությունը գնահատվում է «իրականացված է ոչ ամբողջական», եթե տվյալ գործողության իրականացումը չի ապահովել ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ ամբողջական արդյունքը (ապահովել է մասնակի արդյունք) կամ չի հանդիսացել նպաստող գործոն այդ արդյունքի ամբողջական նվաճման համար կամ տվյալ գործողության իրականացման համար պատասխանատու պատկան մարմինների կողմից մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել փաստեր, որոնք կվկայեն ռազմավարական նպատակի և մասնավոր նպատակի մակարդակներում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքի ամբողջական իրականացումը:
- 3 **Գործողությունը իրականացված չէ** - գործողությունը գնահատվում է «իրականացված չէ», եթե տվյալ գործողության իրականացման ուղղությամբ որևէ էական միջոցառումներ չեն ձեռնարկվել կամ ձեռնարկված միջոցառումները ուղղված չեն ապահովելու ռազմավարական նպատակի և մասնավոր նպատակ մակարդակներում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքը կամ չեն հանդիսացել նպաստող գործոն այդ արդյունքի համար կամ տվյալ գործողության իրականացման համար պատասխանատու պատկան մարմինների կողմից մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել փաստեր, որոնք կվկայեն ռազմավարական խնդրի մակարդակում սպասվող վերջնական կամ միջանկյալ արդյունքի իրականացումը:

Օրինակ՝ մեկ միջոցառման համար որպես կատարողական թիրախ 2024 թվականի երկրորդ կիսամյակի համար նախատեսված է՝ «Ծրագրի հաստատումից հետո հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 30%-ը վերապատրաստվել է: Որպես ուղղակի արդյունքային որակական ցուցանիշ նախատեսված է՝ «Վերապատրաստումների զեկույցներ: Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ»: Տվյալ պարագայում վերապատրաստումների զեկույցները, գիտելիքների գնահատման հաշվետվությունները և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումները չեն կարող ամբողջապես ապահովել «Հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ հզորացում» մասնավոր նպատակի ներքո ակնկալվող այն ազդեցությունը, որը վերաբերում է ըստ տարիների հակակոռուպցիոն հակազդման մարմինների բարելավմանը, ինչպես նաև հակակոռուպցիոն դատարանների գործունեության արդյունավետությանը, թափանցիկությանը, պրոֆեսիոնալությանը, մասնագիտացվածության՝ ի համեմատություն 2022 թ. տվյալների, ինչպես նաև սույն գործողության համար

մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել այնպիսի փաստեր, որոնք կվկայեն մասնավոր նպատակի մակարդակում ակնկալվող ազդեցության իրականացումը, հետևապես սույն միջոցառման կատարումը գնահատվում է **Իրականացված է ոչ ամբողջական**:

Յուրաքանչյուր ոլորտի համար այս գնահատման ընթացքում փորձագիտական թիմի կողմից հաշվարկվել է **կատարողական ցուցանիշ**, որն իրենից ներկայացնում է «իրականացված» գործողությունների միջոցով տվյալ ռազմավարական խնդրի մակարդակում միջանկյալ կամ վերջնական արդյունքի նվաճումը:

գ. Գնահատման մեթոդներ

Մշտադիտարկման նպատակներին հասնելու համար կիրառվել է [արդյունքների համադրման մոտեցումը](#)⁵՝ համադրելով որակական և քանակական տվյալները: Տվյալները հավաքագրվել են առաջնային և երկրորդային աղբյուրներից: Հետազոտության մեթոդները ներառում են տեղեկատվության հարցումները, գրասենյակային ուսումնասիրությունը/փաստաթղթերի վերլուծությունը, այդ թվում՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մոնիթորինգի 2023 և 2024 թվականների հաշվետվությունը, միջազգային կազմակերպությունների զեկույցները, համապատասխանության գնահատումները և խորհրդատվական եզրակացությունները, ՖԽԲ-ները: Կազմակերպվել է 2 ՖԽԲ՝ ներառական և մասնակցային ձևաչափով, որին մասնակցել են գործողությունների կատարման համար պատասխանատու պետական գերատեսչությունների և այլ շահագրգիռ կառույցների ու ՔՀԿ-ների ներկայացուցիչներ, ոլորտային փորձագետներ և իրավաբաններ: Նաև հարկ է նշել, որ սույն զեկույցը ձեռնպահ է մնացել ՀՀ ԱՆ-ի հրապարակած մոնիթորինգի հաշվետվություններում առկա տեղեկությունները **ամբողջապես** արտացոլելուց, որը կծանրաբեռներ զեկույցի ծավալը, հետևապես, հետաքրքրված անձինք Ռազմավարության առանձին գործողությունների արդյունքների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու նպատակով կարող են ուսումնասիրել մոնիթորինգային զեկույցները⁵:

Աղյուսակ 2. ՖԽԲ -ների պետական մարմինների, այլ շահագրգիռ կառույցների և մասնակիցների ցանկը

#	Անվանումը	Ներկայացուցիչների թիվը
1.	Արդարադատության նախարարություն (ԱՆ)	3
2.	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (ԿԿՀ)	6

⁵ ՀՀ արդարադատության նախարարության կողմից հրապարակված Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման 2024 թվականի հաշվետվությունը հասանելի է այստեղ. <https://moj.am/storage/uploads/.....pdf>
ՀՀ արդարադատության նախարարության կողմից հրապարակված 2023 թվականի երկրորդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների իրականացման մասին հաշվետվությունը հասանելի է այստեղ. <https://shorturl.at/7QFog>

3.	Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ (ՔՄԳ)	1
4.	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՄՆ)	2
5.	Հակակոռուպցիոն կոմիտե	1
6.	Քննչական Կոմիտե (ՔԿ)	1
7.	Բարձրագույն դատական խորհուրդ (ԲԴԽ)	1
8.	Մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ)	1
9.	ՀՀ արդարադատության ակադեմիա	1
10.	Հանրային հեռարձակող խորհուրդ	1
11.	Բարձրագույն ուսումնական հաստատություններ (ԲՈՒՀ)	4
Ընդհանուր		
ՔՀԿ-ներ, փորձագետներ, իրավաբաններ		
1.	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ-ներ), փորձագետներ, իրավաբաններ	12
Ընդհանուր		34

Մշտադիտարկման արդյունքների հիման վրա մշակվել է ՀՀ 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի՝ **2023-2024թթ. իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների զեկույցի նախագիծը** (այսուհետ՝ Ձեկույցի նախագիծ)։ Ձեկույցի նախագիծը ներկայացվել է գործողությունների կատարման համար պատասխանատու պետական գերատեսչությունների և այլ շահագրգիռ կառույցների կարծիքի, որի արդյունքում ստացված դիտարկումների ու առաջարկությունների մի մասը տեղ են գտել Ձեկույցի վերջնական տարբերակում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՈՒՊՑԻՈՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐ

I. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ
ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.1 Վերանայել հանձնաժողովի անդամների ընտրության, պատասխանատվության կարգերը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում	Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության են արժանացել Կառավարության և կողմից և ներկայացվել են ՀՀ ԱԺ	ՀՀ ԱՆ	ԿԿՀ Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ ՔՀԿ	Իրավական ակտի առկայություն Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**՝ նշելով, որ իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն՝ ներպետական կարիքների հաշվառմամբ: Ուսումնասիրության ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ԿԿՀ-ի անդամների պատասխանատվության մեխանիզմների և կարգապահական պատասխանատվության կիրառման ընթացակարգերին: Ուսումնասիրության արդյունքում ԱՆ-ի կողմից մշակվել է «ԿԿՀ-ի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագիծը ներկայացվել է շահագրգիռ մարմինների կարծիքին: Ստացված կարծիքի հիման վրա լրամշակվել է և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում է Նախագծի լրամշակման աշխատանքները:

Մշտադիտարկման արդյունքում գործողությունը գնահատվել է որպես մասնակի կատարված, քանի որ թեև քայլեր են ձեռնարկվել ԿԿՀ անդամների ընտրության և պատասխանատվության

կարգերի վերանայման ուղղությամբ, սակայն գործընթացն ամբողջական չէ և բացակայում է ակնկալվող արդյունքը՝ Կառավարության կողմից հավանության արժանացած և ՀՀ ԱԺ ներկայացված իրավական ակտը:

Մշտադիտարկման խմբի կողմից առաջ քաշվել մտահոգությունն առ այն, որ մրցութային խորհրդի արդյունավետությունը և ԱԺ-ի ներգրավվածությունը ԿԿՀ անդամների ընտրության գործընթացում հանդիսանում են խնդրահարույց հարցեր, դրանք ուղղակիորեն կապված է գործողության հիմնական նպատակի հետ: Մրցութային խորհուրդը հանդիսանում է ԿԿՀ անդամների ընտրության գործընթացի առանցքային մեխանիզմ, և այն դեպքում, երբ ԱԺ մեծամասնությունը չի մասնակցում քվեարկությանը⁶, էականորեն խաթարվում է ընտրության գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունը, ինչն էլ իր հերթին կարող է վտանգել հանձնաժողովի անկախությունը:

Նախատեսված օրենսդրական փոփոխությունների նախագծում ներառված երկու ՔՀԿ ներկայացուցիչների ներգրավումը դրական քայլ է, սակայն այն չի լուծում մրցութային խորհրդի արդյունավետության և ԱԺ-ի կողմից ընտրության գործընթացին մասնակցության համակարգային խնդիրները: Հետևաբար, չնայած որոշակի առաջընթացին, գործողության լիարժեք իրականացման համար էական է անդրադառնալ նաև այս հարցերին, քանի որ դրանք անմիջականորեն բխում են գործողության տրամաբանությունից և նպատակից՝ ԿԿՀ անդամների ընտրության և պատասխանատվության կարգերի արդյունավետ վերանայումից⁷:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Ե ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.2 Բարելավել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների ընթացակարգերը, սահմանել դրանց առանձնահատկությունները, և հստակեցնել ԿԿՀ գործառույթները՝ որպես վարչարարություն իրականացնող մարմին

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի	ՀՀ ԱՆ	ԿԿՀ	Իրավական ակտի առկայություն (2025թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Ե

⁶ Տե՛ս օրինակ՝ ԿԿՀ անդամի թեկնածու Նարինե Ավետիսյանի թեկնածության քննարկումն ու քվեարկությունը <https://www.hetq.am/hy/article/162658>

Նույն իրավիճակը տեղի էր ունեցել նաև 2025 թվականին, սակայն ներկայում սա չի քննարկվում պայմանավորված այն հանգամանքով, որ դուրս է գնահատման ժամանակահատվածից.

<https://iravaban.net/515101.html>

⁷ <https://www.e-draft.am/projects/7873/about>

	արդյունքային և քանակական ցուցանիշներ				
--	---	--	--	--	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարվել է ամբողջությամբ**, քանի որ մշակվել է «ԿԿՀ-ի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը: Նախագծերով նախատեսվում է սահմանել Հանձնաժողովի կողմից հարուցվող վարույթների առանձնահատկությունները: Միաժամանակ առաջարկվում է բարեփոխել Հանձնաժողովների կողմից իրականացվող հայտարարագրերի ստուգման գործընթացի արդյունավետությունը՝ սահմանելով ստուգման հասկացությունը, դրա հիմքերը, իրականացման ժամկետները: Նույն աղբյուրի համաձայն, դիտարկվող ժամանակահատվածում հիշյալ նախագծերը չեն հրապարակվել և ներկայացվել հանրային քննարկման:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ սույն գործողության մասով 2024 թվականի համար սահմանված չէ ստուգման միջոց: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության մեջ անդրադարձ չի կատարվում նրան, թե այդ նախագծերի մեջ նախատեսվող փոփոխությունների և լրացումների համար ինչ ուսումնասիրություններ են կատարվել, և ինչով է հիմնավորվում ընտրված փոփոխությունների անհրաժեշտությունը: Ինչպես նաև տեղեկություն չկա այն մասին, թե ովքեր են մասնակցել նախագծի մշակմանը, արդյոք ներգրավված են եղել քաղաասարակության ներկայացուցիչներ կամ ինչքանով են հաշվի առնվել մասնագիտական հանրույթի առաջարկությունները: Հիշյալը առավել կարևորվում է այն հանգամանքի հաշվառմամբ, որ 1.1 գործողությանն անդրադառնալիս՝ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում նշվել է ԲՀԿ-ների կարևոր դերակատարությունը:

Նման պայմաններում, առկա են որոշակի մտահոգություններ, որոնք կապված են ստուգման միջոցի բացակայության, իրավական ակտի նախագիծը դիտարկվող ժամանակահատվածում հանրային քննարկման չներկայացնելու, ինչպես նաև հաշվետվությամբ ներկայացված ոչ ամբողջական տեղեկատվության հետ, ըստ ներկայացված տվյալների՝ քանակական առումով գործողությունը կատարված է ամբողջությամբ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.3. Կատարելագործել բարելավքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային և քանակական որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման (2024թ) միջոց	Մշտադիտարկման արդյունք
---	---	----------------	--------------------	------------------------	------------------------

Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում	Գույքագրված տվյալների հիման վրա անհրաժեշտության դեպքում վերանայվել է պետական և ՏԻՄ-երում բարեվարքության հարցերով կազմակերպչի կարգավիճակը:	ԿԿՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	ԱՆ	Իրավական ակտի առկայություն	Գործողությունը է ԿԱՏԱՐՎԵԼ ՄԱՍՆԱԿԻ
---	---	--	----	----------------------------	-----------------------------------

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **մեծամասամբ կատարված**, քանի որ գույքագրվել են պետական և ՏԻՄ-երում բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառնությունների իրականացման խոչընդոտները և կատարվել է ուսումնասիրություն բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակի վերաբերյալ, իսկ որպես արդյունքային քանակական ցուցանիշ է եղել նախատեսված մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթի ներկայացումը ԱԺ:

Մշտադիտարկման խմբին ԱՆ-ի կողմից տրամադրած հավելյալ տեղեկատվության հիման վրա՝ ԿԿՀ-ն 2023 թվականին կազմել էր բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդում: Հաղորդմամբ ներկայացված է, որ 86 բարեվարքության հարցերով կազմակերպիչների հետ իրականացվել է հարցում՝ իրավական և գործառնական խնդիրների գույքագրման նպատակով: Նաև նշված է, որ ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հանրային իշխանության մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպչի ինստիտուտը դեռևս ձևավորման փուլում է, առանձին դեպքերում անգամ բացակայում է:

Նշված փաստաթուղթը իրենից մեծ կարևորություն է ներկայացնում, սակայն այն ամբողջապես չի պարունակում հայցվող տեղեկատվությունը, մասնավորապես միջազգային ինչպիսի՞ փորձ է ուսումնասիրվել, ի՞նչ հանգամանքներ են հաշվի առնվել և ի՞նչ հիմնավորումներով: Ու նաև 2024 թվականին կատարված ուսումնասիրությունների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների իրականացման խոչընդոտների գույքագրման վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ: Միննույն ժամանակ ՖԻՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ 2024 թվականի խնդիրների գույքագրման վերաբերյալ հաղորդումը կներկայացվի 2025 թվականին: Ի լրումն, հարցի վերաբերյալ ԿԿՀ-ը 2024 թվականի ապրիլ ամսին կազմակերպել էր միջգերատեսչական աշխատաժողով, որի շրջանակներում քննարկվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակի վերանայման հարցը⁸:

Մշտադիտարկման խմբի կողմից ՖԻՔ-ի ընթացքում տրամադրված տեղեկատվությունից պարզ է դարձել, որ նախագծերը շարունակում են մնալ մշակման փուլում, և վերջնական տարբերակ դեռևս չկա: Բացի այդ, դեռևս հստակեցված չէ բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթների բաշխումը, քանի որ օրենսդրական կարգավորումները գտնվում են մշակման փուլում: Նախագծերի վերաբերյալ նաև դիրքորոշում է ներկայացրել ԿԿՀ-ը: Նման պայմաններում, քանակական առումով գործողությունը կատարված է մասնակի:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.4. Բարելավել էթիկայի հանձնաժողովների գործունեությունը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատ անող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում :	Մշակվել են անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ օրենսդրական փոփոխությունները պետական և համայնքային	ԱՆ ԿԿՀ	Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ	Իրավական ակտի առկայություն	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

⁸ <https://cpcarmenia.am/news/teghi-e-unecel-barevarquty-an-harcerov-kazmakerpichneri-institut-y-khndirner-y-ev-barepokhman-herankarnery-khoragrov-mijgerateschakan-ashkhatazhoghov-qnnarkum/>

	առանձին տեսակները կարգավորող օրենքներում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:				
--	--	--	--	--	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ**, հաշվի առնելով գործողության կատարողականի թիրախով նախատեսված էր օրենսդրական փոփոխությունների փաթեթի հաստատում Կառավարության կողմից և ընդունման նպատակով ԱԺ ներկայացում:

Մշտադիտարկման խմբին ԱՆ-ի կողմից տրամադրվել հավելյալ տեղեկատվություն, որը վերաբերում էր հանրային ծառայության ոլորտում էթիկայի հանձնաժողովների համակարգի գործունեության իրավական խնդիրների վերաբերյալ վերլուծությանը: Փաստաթղթում նշված է, որ համապատասխան օրենքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ օրենքներում **առանձին էթիկայի հանձնաժողովների ձևավորման վերաբերյալ կարգավորումների սահմանման օրենսդրական պահանջը ոչ բոլոր դեպքերում է ստացել իր հետագա հետևողական շարունակականությունը** և համապատասխան օրենսդրական փոփոխություններ չեն կատարվել պետական ծառայության որոշ տեսակները և համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներում: **Էթիկայի հանձնաժողովների վերաբերյալ կարգավորումների բացակայության պարագայում էթիկայի հանձնաժողովներ չեն ձևավորվել**, և պրակտիկայում էթիկայի հանձնաժողովներին վերապահված լիազորություններն իրացվում են տվյալ մարմնում ծառայողական քննության ընդհանուր ընթացակարգերի շրջանակներում՝ ներքին ստորաբաժանման (օրինակ՝ ներքին անվտանգության վարչություն) կամ ծառայողական քննություն իրականացնող հանձնաժողովի կամ կարգապահական հանձնաժողովի կողմից:

ՖնԲ-ի ընթացքում պարզ դարձավ, որ հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների գործունեության բարելավման ուղղությամբ առկա խնդիրները գույքագրվել են, ինչի հիման վրա մշակվել է իրավական ակտի նախագիծ: Վերջինս տեղադրվել է e-draft հարթակում՝ հանրային քննարկումների նպատակով: Ստացված կարծիքներն ամփոփվել են և ներկայացվել կառավարություն, սակայն նախագիծը վերադարձվել է դիտարկումներով: Հարկ է նշել, որ համայնքների կողմից ներկայացված խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվություն փաստացի առկա չէ, ինչը բաց է թողնում համայնքային մակարդակի լիարժեք պատկերացումը:

Ինչ վերաբերում է պատգամավորների էթիկայի հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգին, նշվեց, որ համապատասխան նախագիծն արդեն մշակվել է և ներկայում գտնվում է ԱԺ-ի տիրություն: Սակայն դրա ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն այս փուլում առկա չէ:

Այսպիսով սույն գործողության ներքո նախատեսված երկու իրավական ակտերը նախագծվել են և գտնվում են լրամշակման փուլում, ինչի արդյունքում քանակական առումով գործողությունը մասնակի կատարված է:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.5. Բարելավել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման թվային կառուցակարգեր

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման (2024թ) միջոց	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում	Մշակվել են կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանություն և ուղեցույցներ:	ԿԿՀ	ԱՆ	Ուղեցույցի միասնական մեթոդաբանության առկայություն Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ Մամուլի հաղորդագրություններ ՋԼՄ հրապարակումներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** ԿԿՀ-ը շրջանառել է բարեվարքության համակարգի վերաբերյալ վիճակագրության հավաքագրման առցանց հարցաթերթիկ՝ հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ մարմիններում առկա վիճակագրությունը ստանալու նպատակով: Ըստ ԿԿՀ-ի տրամադրած տեղեկության՝ 2024 թվականի վիճակագրությունը հավաքագրվել է ուղեցույցով նախատեսված կարգով, ներկայացվել է Վիճակագրական կոմիտե՝ հրապարակման: Վիճակագրության բովանդակային բաղադրիչը ներկայացվել է Հանձնաժողովի 2024 թվականի տարեկան հաղորդմամբ, ինչպես նաև առաջիկայում կհրապարակվի բարեվարքության համակարգի 2024 թվականի տարեկան զեկույցի շրջանակներում:

ԿԿՀ-ի կողմից մշակվել և 2024 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ հաստատվել է՝ կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանական ուղեցույցը¹⁰:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.6. Ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության առկա գործիքակազմը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգի զարգացում	Մշակվել է թվայնացման հայեցակարգ: Կատարելագործված և արդիականացված են գործող էլեկտրոնային գործիքակազմերը կամ ներդրված են նոր էլեկտրոնային գործիքակազմեր:	ԿԿՀ	ԱՆ ԲՏԱ Գլխավոր դատախազություն Քննչական կոմիտե Հակակոռուպցիոն կոմիտե ԿԸՀ	Թվայնացման հայեցակարգ Գործարկվող էլեկտրոնային գործիքներ Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Հանձնաժողովին վերապահվել է բարեվարքության ուսումնասիրության լրացուցիչ գործիքակազմ, 2024 թվականին ԱՄՆ ՄԶԳ կազմակերպության փորձագետի աջակցությամբ՝ «Միներջի» ընկերության կողմից մշակվել է թվայնացման հայեցակարգը, Հանձնաժողովի իրավասության շրջանակներում հաստատվել են մի շարք իրավական ակտեր:

⁹ <https://cpcarmenia.am/news/hastatvel-e-korupciayi-kankhargelman-olortum-tvayin-vichakagrutyany-varman-metodabanakan-ughecuycy/>
¹⁰ Ուղեցույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/09/FOR-PUBLISHING.pdf>

Ըստ նույն աղբյուրի՝ որպես **միջոցառման իրականացմանը խոչընդոտող հանգամանքը նշված է Ռազմավարության գործողությունների ծրագրի 1; 1.1; 1.2; 1.3; 1.5 կետերում ներկայացված կատարողականի թիրախների անհամապատասխանությունը 1.6 գործողության և ելակետային տվյալների հետ, որի կապակցությամբ ԿԿՀ-ն ներկայացրել է իր դիտարկումները ՀՀ ԱՆ-ին:**

Այսպիսով, թվայնացման հայեցակարգի հաստատման մասին տեղեկատվություն առկա չէ, ինչպես նաև հաշվետվության շրջանակներում անդրադարձ չի կատարվում գործողության մյուս կատարողականի թիրախների և ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշների կարգավիճակին, ինչպես նաև չեն մանրամասնվում ԿԿՀ-ի կողմից ընդունված «մի շարք իրավական ակտերի» վերաբերյալ հստակ տեղեկություն:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.7. Երաշխավորել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությունը՝ մշակվող ակտերի (ex ante) և անհրաժեշտության դեպքում՝ դրանց հիմքում ընկած կամ դրանց հետ փոխկապակցված իրավական ակտերի (ex post) փորձաքննությունը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համալստարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննություն	Օրենսդրական փոփոխությունները «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: Իրավական ակտերի նախագծերի փորձաքննության լիազոր մարմինը գործում է:	ԱՆ	ԿԿՀ Վարչապետի աշխատակազմի քԾԳ	Իրավական ակտի առկայություն Ձևավորված մարմին/ստորաբաժանում	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Իրականացվել է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության լավագույն մոդելի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն՝ ներպետական կարիքների հաշվառմամբ: Ուսումնասիրված միջազգային

փորձի հիման վրա մշակվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Այսպիսով, գործողության կատարողականի թիրախով նախատեսված էր նաև օրենսդրական փոփոխությունների փաթեթի հաստատում Կառավարության կողմից, ընդունման նպատակով ՀՀ ԱԺ ներկայացում և իրավասու մարմնի սահմանում, որոնք չեն կատարվել:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.8. Միասնականացնել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրությունը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համա կատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԿԿՀ ԱՆ	Վարչապետի աշխատակազմի ԲԾԳ	Իրավական ակտի առկայություն (2025թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ**: Օրենսդրական ակտի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները հստակեցվել են: Նախագծի մշակման աշխատանքները գտնվում են ընթացիկ փուլում:

ՖԽԲ-ի ընթացքում բարձրացված հարցերից մեկը վերաբերում էր նրան, թե արդյո՞ք միասնական իրավական ակտը կանխարգելման ոլորտին է միայն վերաբերվում, թե՞ դրանում ներառվելու է նաև հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկումը: Ի պատասխան, արձանագրվեց, որ այս փուլում մոտեցումը դեռևս պարզ չէ, այն քննարկման փուլում է:

Այսպիսով, կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրության միասնականացման գործընթացը գտնվում է նախագծի լրամշակման փուլում, և այս պահին վերջնական տարբերակ դեռևս առկա չէ: Այդ պատճառով դժվար է միանշանակ գնահատել՝ հակակոռուպցիոն կրթության և իրազեկման բաղադրիչը կներառվի՞ միասնական իրավական ակտի շրջանակում, թե՞ ոչ: Նաև հարկ է նշել, որ ԿԳՄՄՆ-ն մեկ միասնական հակակոռուպցիոն կրթության վերաբերյալ օրենքի ընդունումը նպատակահարմար չի դիտարկում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.9. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ ներդնելուն ուղղված քայլերի իրականացում

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիայի կանխարգելման և բարելավարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԱՆԿԿՀ	ՏԿԵՆ Պետական կառավարման համակարգի մարմիններ	Իրավական ակտի առկայություն (2025թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվությամբ՝ գործողությունը գնահատվել է կատարված է ամբողջությամբ: Նախագծերը մշակվել են: Շահագրգիռ պետական մարմինների և ՀԿ-ների կողմից ներկայացված կարծիքների հիման վրա լրամշակվել և ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է ԿԱՏԱՐՎԵԼ Է:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.10. Ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
---	---	----------------	--------------------	------------------------	------------------------

Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԱՆ	ԿԿՀ ՏԿԵՆ	Իրավական ակտի առկայություն (2025թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է
---	---	----	----------	------------------------------------	----------------------------------

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: «Հանրային ծառայության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, որով նախատեսվում է ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը, ինչպես նաև հայտարարատու բոլոր պաշտոնատար անձանց համար սահմանել շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.13. Տարանջատել բարեվարքության ուսումնասիրությունը հանրային պաշտոնում նշանակման կամ առաջխաղացման համար և ընթացիկ բարեվարքության ուսումնասիրությունը (շրջանակը, մեխանիզմները)

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համալսարան	Մտուցման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԱՆ	ԿԿՀ	Իրավական ակտի առկայություն (2025 թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ :

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ**: Ուսումնասիրվել են ՀՀ միջազգային առկա հանձնառությունները, միջազգային մոնիթորինգային մարմինների կողմից ինչպես ՀՀ-ին, այնպես էլ այլ երկրներին տրված հանձնարարականները: Ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև միջազգային լավագույն փորձին, ուսումնասիրված երկրներում տարբեր պետական մարմինների և պաշտոնատար անձանց բարեվարքության ուսումնասիրության առանձնահատկություններին: Կատարվել են օրենսդրական փոփոխություններ, որոնց

արդյունքում սահմանվել են բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության կառուցակարգեր դատավորների, դատախազների և քննիչների համար:

Այսպիսով, սույն գործողության համար դիտարկվող ժամանակահատվածի համար նախատեսված էր երեք խումբ գործողություն: Առաջին՝ վերանայել այն հանրային պաշտոնները, որոնցով բարեվարքության ուսումնասիրությունը վերապահված չէ ԿԿՀ-ին, համապատասխան մարմնում իրականացնելու կառուցակարգը: Երկրորդ և երրորդ գործողություններն են՝ ընտրել պետական մարմիններում, ՏԻՄ-երում և պետական մասնակցությամբ ընկերություններում բարեվարքության ուսումնասիրության ստուգման պատշաճ և գործող կառուցակարգեր, ինչպես նաև մշակել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր՝ հստակեցնելով ընթացիկ բարեվարքության ուսումնասիրության շրջանակը, ստուգող մարմինները, ինչպես նաև իրականացման մեխանիզմները:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ օրենսդրական որոշ փոփոխություններ արդեն իրականացվել են, սակայն պաշտոնների ցանկի ընդլայնում այս պահի դրությամբ դեռ չի իրականացվել և գտնվում է ընթացքի մեջ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.14. Բարձրացնել ԿԿՀ կողմից բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների հիման վրա նշանակում իրականացնող մարմնի հաշվետվողականությունը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում	Օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: Նշանակումներ կատարելիս ԿԿՀ եզրակացությունները	ԱՆ	ԿԿՀ	Իրավական ակտի առկայություն	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

	հաշվի չառնելու դեպքում տրվում է պատճառաբանություն:				
--	--	--	--	--	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: ԱՆ-ը իրականացրել է ուսումնասիրություն բարեվարքության ուսումնասիրության չափորոշիչների միջազգային լավագույն փորձի վերաբերյալ: Ուսումնասիրությունն իրականացվել է նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Այսպիսով, նախագծերը մշակվել են, բայց շահագրգիռ պետական մարմինների և ՀԿ-ների կողմից ներկայացված կարծիքների հիման վրա լրամշակվել և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Ե ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.15. Սահմանել ԿԿՀ բարեվարքության վերաբերյալ եզրակացության եզրափակիչ մասի հրապարակայնության պահանջ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համա կատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման ն արդյունք
Գործույցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում	Օրենսդրական փոփոխությունները «Գործույցիայի կանխար գելման հանձնաժողովի մասին» օրենքում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները հրապարակվում են ԿԿՀ կայքում:	ԱՆ	ԿԿՀ	Իրավական ակտի առկայություն Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային և հաշվետվություններ Մամուլի հաղորդագրությ ուններ ԶԼՄ հրապարակում ներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Ե ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: ԱՆ-ի կողմից ԱՄՆ ՄԶԳ և ԵՄ աջակցությամբ իրականացվել է ԿԿՀ-ի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության եզրափակիչ մասը հրապարակային դարձնելու անհրաժեշտության մասին ուսումնասիրություն: Նշվածի շրջանակներում ուսումնասիրվել է բարեվարքության ուսումնասիրության արդյունքների հրապարակման միջազգային լավագույն փորձը և միջազգային զեկույցներով արձանագրված խնդիրները: ԱՆ-ի կողմից մշակվել և շահագրգիռ մարմիններին կարծիքի է ներկայացվել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Իրականացվում է նախագծերի վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքների ամփոփման աշխատանքները:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ ՏՀԶԿ-ն Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցում¹¹ դատական իշխանության անկախությունը, դատախազների և քննիչների նշանակման գործընթացը գնահատելիս արձանագրում է, որ նախատեսված չէ ԿԿՀ-ի բարեվարքության ստուգման եզրակացությունների հրապարակում, միաժամանակ զեկույցով առաջարկում է, որ այդպիսի եզրակացությունները պետք է ավելի մեծ ազդեցություն ունենան դատական ընտրության որոշումների վրա¹²:

Նույն աղբյուրի համաձայն որպես մտահոգություն ներկայացված է ԿԿՀ-ի բարեվարքության եզրակացությունների դիտարկման հարցը, նշելով, որ ԲԴԽ-ն մի շարք դեպքերում ընտրել և առաջարկել է թեկնածուներ, որոնք ունեցել են ԿԿՀ-ի բացասական եզրակացություն կամ բարեվարքության մտահոգություններ առաջացնող եզրակացություն¹³:

Մշտադիտարկման շրջանակներում ՔՀԿ-ների և փորձագետների հետ տեղի ունեցած ՖԽԲ-ի ընթացքում ևս որպես մտահոգություն ներկայացվեց ԿԿՀ-ի բարեվարքության եզրակացությունների գաղտնիության ռեժիմը: Մասնավորապես, բարեվարքության եզրակացությունները պետք է ունենան որոշակի մակարդակի հրապարակայնություն, որը չափազանց կարևոր է նաև ԿԿՀ-ի հաշվետվողականության և թափանցիկության ապահովման տեսանկյունից: Նաև նշվեց, որ ԲԴԽ-ը դեռևս բավարար ուշադրություն չի դարձնում բարեվարքությանը, ինչը խիստ կարևոր է հատկապես դատավորների թեկնածուների նշանակման գործընթացում:

Սույն գործողությունը ընտրված էր նաև որակական ստուգման համար, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ որպես այդպիսին, իրավական ակտը կամ դրա նախագիծը առկա չէր, որակական գնահատում իրականացնելը հնարավոր չէր:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿՄՏԱՐՎԵԼ Ե ՄԱՍՆԱԿԻ**:

¹¹ ՏՀԶԿ-ն Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.oecd.org/en/publications/baseline-report-of-the-fifth-round-of-monitoring-of-anti-corruption-reforms-in-armenia_fb158bf9-en.html

¹² Տե՛ս ՏՀԶԿ-ն Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցը, էջ 99

¹³ Տե՛ս նույն տեղում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.16. Ամրապնդել բարեվարքության ուսումնասիրության համակարգի արդյունավետությունը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործում	Օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:	ԿԿՀ	ԲՏԱ ԱՆ	Իրավական ակտի առկայություն	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: 2024 թվականի մայիսի 17-ին ուժի մեջ են մտել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-160-Ն օրենքը, իսկ նույն տարվա օգոստոսի 5-ին՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «ՀՀ քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքները, որոնցով սահմանվել են բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը էլեկտրոնային համակարգում ներկայացնելու կարգը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.17. Մեծացնել կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների արդյունավետությունը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիայի կանխարգելման և	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի	ԱՆ	ԿԿՀ ԿԸՀ	Իրավական ակտի առկայություն	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

բարեվարքության ամրապնդման մեխանիզմների կատարելագործո ւմ	արդյունքային և քանակական ցուցանիշներ		ՔՀԿ	(2025թ)	
---	--	--	-----	---------	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: ԿԿՀ-ի կողմից մշակվել է ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Զուգահեռաբար ԱԺ-ի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունվել է «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Արդյունքում, ի թիվս այլնի, բարելավվել է նաև կուսակցություններին կատարվող նվիրատվությունների, կուսակցությունների պետական ֆինանսավորման, կուսակցությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների վերաբերյալ առկա կարգավորումները: Հստակեցվել է նախընտրական գործընթացում կուսակցությունների նախընտրական հիմնադրամների ձևավորման, ֆինանսական տեղեկատվության ներկայացման հետ կապված առկա կառուցակարգերը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.18. Կատարելագործել վարքագծի կանոնագրքերը՝ հիմք ընդունելով ԿԿՀ հաստատած տիպային կանոնները, և դրանց կիրարկման կառուցակարգերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համա կատարող մարմին	Մտուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Բարեվարքության և համակարգի շարունակական կատարելագործում	Օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և	ԿԿՀ	ՏԿԵՆ ԱՆ Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ	Իրավական ակտի առկայություն Կիսամյա կային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ Մամուլի հաղորդագրություններ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

	ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:			ԶԼՄ հրապարակումներ	
--	-----------------------------------	--	--	--------------------	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանությունների ուղեցույցը ԿԿՀ-ի կողմից ԵՖ համագործակցությամբ մշակվել է 2023 թվականին¹⁴: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի, տիպային կանոնների մեկնաբանությունների և ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրառման ուղեցույցները մշակվել են: ԿԿՀ-ը 2023 թվականին նաև մշակել է Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման ուղեցույցը, որի հիման վրա 2023-2024թթ. մի շարք մարմինների կողմից մշակվել են ոլորտային կանոնագրքեր: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ հաշվետվությամբ չի տրամադրվել մանրամասն տեղեկատվությունը, թե որոնք են համարվում ոլորտային մարմինները, և թե արդյոք այդ ցանկն ընդգրկում է այն բոլոր մարմիններին, որոնք նախատեսված էին Ռազմավարության Գործողությունների ծրագրով:

ԱՆ-ի կողմից մշակվել է «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Նախագծերը ներկայացվել է շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Իրականացվում է Նախագծերի լրամշակման աշխատանքներ:

ԿԿՀ-ը նաև տեղեկացրել է, որ 2024 թվականի տարեկան հաղորդմամբ անդրադարձել է տիպային կանոնների տեղայնացման խնդրին՝ վերհանելով բոլոր դեպքերը, երբ ոլորտային կանոնագրքերը կա՛մ դեռևս մշակված չեն, կա՛մ չեն համապատասխանում տիպային կանոններին: Այս կապակցությամբ, ԿԿՀ-ը նաև դիմել է համապատասխան մարմիններ՝ առաջարկելով մշակել/լրամշակել կանոնագրքերը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.19. Երաշխավորել շահերի բախման նոր սահմանման իրացումը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի)	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
---	---	----------------	--------------------	------------------------	------------------------

¹⁴ Ուղեցույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/12/Int-Manual-to-Model-COC-of-Public-Servants_03.12.2024_final.pdf

մակարդակում					
Բարելարքությա ն համակարգի շարունակական կատարելագործո ւմ	Օրենսդրական փոփոխությունների և այլ անհրաժեշտ իրավական ակտերի փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ- ի ընդունմանը:	ԱՆ ԿԿՀ	ԲԴԽ ՏԿԵՆ ԿԿՀ Վարչա պետի աշխատ ակազմի ՔԾԳ	Իրավական ակտի առկայություն Կիսամյա կային և տարեկան մոնիթո րինգային հաշվետվու թյուններ Մամուլի հաղորդա գրություններ ԶԼՄ հրապարա կումներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ**: ԱՆ-ի կողմից մշակվել են «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերը 2024 թվականի մայիսին ներկայացվել են շահագրգիռ մարմինների կարծիքին և դրվել են հանրային քննարկման: Նախագծերով առաջարկվում է «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված առանձին ծառայությունների տեսակների գործունեությունը կարգավորող իրավական ակտերում վերանայել կամ լրացնել շահերի բախման վերաբերյալ առկա կառուցակարգերը՝ դրանք համապատասխանեցնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին:

Նաև հարկ է նշել, որ հիշյալ օրենսդրական փոփոխություններով ծառայության առանձին տեսակների գործունեությունը կարգավորող օրենքներով վերանայվում են շահերի բախման կարգավորումները, սակայն, փոփոխությունները չեն անդրադառնում որոշ պաշտոնների, ում համար շահերի բախման ներկայիս կարգավորումները կիրառելի չեն: Ըստ ԿԿՀ-ի՝ դրանք ենթակա են հավելյալ տեղայնացման:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.20. Զարգացնել նվերների ընդունման սահմանափակումների իրացման կառուցակարգերը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Բարեվարքության և համակարգի շարունակական կատարելագործում	Օրենսդրական փոփոխությունների փաթեթը՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում, «Հանրային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: Կառավարության որոշումներով սահմանվել են պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման կարգը, շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքերի ցանկը, շուտ փչացող գույքի ոչնչացման դեպքերը, կարգը և տնօրինման եղանակները, առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնա հատկությունները, տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը, տնօրինման եղանակի վերաբերյալ եզրակացության տրամադրման կարգը: Ձևավորվել և գործարկվել է նվերների ռեեստրը:	ԱՆ ԿԿՀ		Իրավական ակտի առկայություն Մամուլի հաղորդագրություններ ՋԼՄ հրապարակումներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: 2024 թվականի առաջին կիսամյակի կատարողականի թիրախի շրջանակում ընդունվել են համապատասխան իրավական ակտերը: Միաժամանակ, ռեեստրի գործարկման ժամկետի երկարաձգումը պայմանավորված է եղել կազմակերպության ընտրության համար անցկացված մրցույթի ժամկետների փոփոխմամբ, քանի որ առաջին փուլով հայտեր չեն ներկայացվել: Ամբողջ գործընթացն իրականացվել է ԱՄՆ ՄԶԳ կողմից՝ կազմակերպության ընթացակարգերի և դրանց ժամկետների համաձայն: Այդուհանդերձ, երկրորդ կիսամյակի կատարողականի թիրախով սահմանված՝ ռեեստրի ստեղծմանն ուղղված աշխատանքները Հանձնաժողովի կողմից ամբողջ ծավալով իրականացվել են:

ՖԽՔ-ի ընթացքում մշտադիտարկման խմբին ներկայացված տեղեկատվության համաձայն՝ նվերների հաշվառման ռեեստրի ստեղծման աշխատանքներն այս պահին լիարժեք իրականացված չեն: Ռեեստրն ու դրա հետ փոխկապակցված գործիքակազմը դեռևս հասանելի չեն: Ֆինանսավորման բացակայության պատճառով գործողությունները չեն հասցվել ավարտին: Որպես միջանկյալ լուծում՝ ԿԿՀ-ի կողմից ներկայում հաշվառումը կատարվում է էլեկտրոնային ձևաթղթերի (excell) միջոցով: Մակայն հարկ է ընդգծել, որ այս ձևաթուղթը իր էությանմբ չի համապատասխանում «ռեգիստրի» ընդունված ստանդարտներին, քանի որ այն չի բավարարում նման համակարգերին բնորոշ մի շարք էական հատկանիշների: Գործող մեխանիզմն ըստ էության սոսկ ձեռքով տվյալների հավաքագրման միջոց է, և ոչ թե հստակ կառուցվածքային, կարգավորված և ինքնաշխատ համակարգ:

Ռազմավարությամբ նախատեսված ռեգիստրը ենթադրում է տեղեկատվության կանոնակարգված դաշտ՝ հստակ կառուցվածքով, որոնողական, դասակարգման և վերլուծական գործիքակազմով, ինչպես նաև ինքնաշխատության նվազագույն մակարդակով: Առկա մեխանիզմը չունի այս հատկանիշները և ըստ էության ծառայում է միայն որպես տվյալների հավաքման միջոց՝ առանց ռեգիստրին հատուկ գործառնությունների: Այսպիսով, ձևաթուղթը չի կատարող դիտարկվել որպես նվերների ռեեստր:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.21. **Զարգացնել անհամատեղելիության պահանջների բացահայտման և վերահսկողության գործիքները**

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Բարեվարքության և համակարգի շարունակական կատարելագործում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԿԿՀ	ԱՆ ՔՀԿ	Իրավական ակտի առկայություն (2025թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ԶԷ :

			Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ		
--	--	--	---------------------------	--	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ոչ առևտրային կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման գործառնություններով օժտված պաշտոնների զբաղեցումը գործող օրենսդրությամբ արդեն իսկ կարգավորված է: Կոռուպցիայ կանխարգելման հանձնաժողովի դիրքորոշմամբ՝ թեև այլ վճարովի աշխատանքի վերաբերյալ կարգավորումները և թույլատրելի աշխատանքի շրջանակը ենթակա է ընդլայնման, այդուհանդերձ, գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի պարագայում ոլորտային կազմակերպությունների անգամ մոտավոր ցանկի սահմանումը խիստ ռիսկային է և չի բխում նաև Ռազմավարության ու դրա գործողությունների նախանշված նպատակներից: Միաժամանակ, նման ցանկի սահմանման գործընթացն ինքնին կարող է պարունակել կոռուպցիոն բնույթի ռիսկեր, ավելին՝ այն կարող է հանգեցնել նաև հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց՝ օրենքի իմաստով թույլատրելի համարվող աշխատանքի իրականացման իրավունքի չհիմնավորված սահմանափակումների:

Այսպիսով, սույն գործողությունը ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները.

1. Ոչ առևտրային կազմակերպություններում պաշտոններ զբաղեցնելու սահմանափակման մեխանիզմների ներդրում (միջազգային փորձի հիման վրա)
2. Գիտական, կրթական և ստեղծագործական գործունեության շրջանակների հստակեցում և համապատասխան կազմակերպությունների ու գործունեության տեսակների ցանկերի սահմանում
3. Առողջապահության, սպորտի, լրագրության և հումանիտար այլ ոլորտներում վճարովի աշխատանք կատարելու դրույթների և վերահսկողության կառուցակարգերի դիտարկում
4. Գույքի հավատարմագրային կառավարման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն և ռեեստրի ու վարման կարգի սահմանում

Գործողության ստուգման միջոցը սահմանված է որպես՝ *«Իրավական ակտի առկայություն» (2025 թվականի համար)*:

Մշտադիտարկման շրջանակներում կատարված աշխատանքների վերլուծությունը հանգեցնում է հետևյալին.

Գիտական, կրթական և ստեղծագործական գործունեության շրջանակների հստակեցման մասով ԿԿՀ-ն գտնում է, որ կազմակերպությունների ցանկի սահմանումը *«խիստ ռիսկային է»* և *«կարող է պարունակել կոռուպցիոն բնույթի ռիսկեր»*: Փոխարենը առաջարկում է *«թիրախը վերաշարադրել»*, որի մասով հավելյալ տեղեկատվություն ներկայացված չէ, սակայն սահմանված գործողությունը չի իրականացվել: Այսինքն՝ գործողության սույն բաղադրիչը ընդհանրապես չի կատարվել:

Այլ ոլորտներում վճարովի աշխատանք կատարելու դրույթների դիտարկման մասով հարկ է նշել, որ չկա հստակ տեղեկատվություն առողջապահության, սպորտի, լրագրության և հումանիտար այլ ոլորտներում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից այլ վճարովի աշխատանք կատարելու դրույթների դիտարկման և վերահսկողության կառուցակարգերի մասին: Փոխարենը, տրված է միայն ընդհանրական տեղեկատվություն, որ «մշակվել է օրենսդրական փոփոխությունների հայեցակարգ», որը նախատեսում է հանրային ծառայության ոչ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց դեպքում այլ վճարովի աշխատանք թույլատրել: Սակայն, հայեցակարգի բովանդակությունը չի ներկայացվում, չի հիմնավորվում միջազգային փորձի ուսումնասիրության իրականացումը և ոչ մի կոնկրետ տեղեկատվություն չի ներկայացվում առողջապահության, սպորտի, լրագրության, հումանիտար այլ ոլորտների վերաբերյալ, ինչը պահանջվում էր գործողությամբ:

Գույքի հավատարմագրային կառավարման մասով հաշվետվությամբ նշվում է, որ «Հանձնաժողովի կողմից իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություն», ինչը ենթադրում է, որ ուսումնասիրությունը դեռևս ընթացքի մեջ է և չի ավարտվել: Չեն ներկայացվում ուսումնասիրության արդյունքները, և չի նշվում գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստրի վերաբերյալ որևէ կարգավորում: Հաշվի առնելով ներկայացված վերլուծությունը և գործողության կատարման համար սահմանված ստուգման միջոցը՝ «Իրավական ակտի առկայություն», եզրահանգում ենք, որ Գործողություն 1.21-ը գնահատվում է որպես «կատարված չէ», քանի որ.

- Գործողության բաղադրիչների ճնշող մեծամասնությունը չի իրականացվել կամ ներկայացված չեն դրանց կատարման վերաբերյալ հստակ ապացույցներ
- Բացակայում է ստուգման միջոցով պահանջվող իրավական ակտի նախագիծը
- Ներկայացվում են հիմնավորումներ, թե ինչու որոշ գործողություններ չեն կատարվել կամ ինչու դրանք նպատակահարմար չէ իրականացնել, ինչը չի կարող դիտարկվել որպես գործողության կատարման հիմնավորում
- Առկա չէ ոչ մի ավարտված աշխատանք, որը կարտացոլի ռազմավարությամբ նախանշված նպատակների կատարումը
- Նույնիսկ նախնական փուլերում գտնվող աշխատանքների (օրինակ՝ միջազգային փորձի ուսումնասիրություն, հայեցակարգի մշակում) մասին տեղեկատվությունը խիստ սակավ է և հնարավորություն չի տալիս գնահատելու դրանց ամբողջականությունը և որակը

Հարկ է նշել, որ նույնիսկ եթե որոշ քայլեր ձեռնարկվել են, կատարողականը չի գերազանցում նվազագույն շեմը, քանի որ ստուգման միջոցով պահանջվող իրավական ակտի նախագիծը բացակայում է, իսկ բաղադրիչների կատարման արդյունքները ներկայացված չեն:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.23. Ներդնել լոբբիստական գործունեության (ոչ իրավաչափ ազդեցության) վերաբերյալ կարգավորումներ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Բարեվարքության և համակարգի շարունակական կատարելագործում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԱՆ	ԿԿՀ ՔՀԿ	Իրավական ակտի առկայություն (2025թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: ԱՆ-ի կողմից ուսումնասիրվել է լոբբիստական գործունեության կարգավորումների միջազգային լավագույն փորձը: Համաձայն ուսումնասիրության, ի լրումն այլնի, լոբբիստական գործունեության կարգավորումն ուղղված է հանրային իշխանության գործունեության թափանցիկության բարձրացմանը, պետական կառույցների նկատմամբ հանրության վստահության ամրապնդմանը և պետական մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացին մասնակցության՝ օրենսդրորեն կարգավորված կառուցակարգերի սահմանմանը: Այս նպատակով ընդունվում են ինչպես առանձին՝ լոբբիստական գործունեության կարգավորմանն ուղղված օրենքներ, այնպես էլ գործող օրենքների շրջանակներում դրվում են առանձին դրույթներ: Հիմք ընդունելով առկա միջազգային փորձը, մշակվել է «Լոբբիստական գործունեության մասին» օրենքի նախագիծը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1.25. Ներդնել բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների կիրառման միասնական համակարգ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Բարեվարքության և համակարգի շարունակական կատարելագործում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԿԿՀ Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ	ԱՆ	Իրավական ակտի առկայություն (2025)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: ԿԿԿ-ը մշակել է վերլուծական փաստաթուղթ՝ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, շահերի բախման կարգավորումների խախտման հիմքով պատասխանատվության կիրառման դաշտում առկա խնդիրների վերաբերյալ, որոնց գույքագրումը կարևոր է դրանց լուծման՝ այդ թվում օրենսդրական անհրաժեշտ փոփոխությունների նախանշման համար: Փաստաթուղթն անդրադառնում է նաև պատասխանատվության միջոցների կիրառման՝ ԿԿՀ-ում, ինչպես նաև հանրային իշխանության առանձին մարմիններում ձևավորված պրակտիկային: Ուսումնասիրել է նաև ներպետական օրենսդրական կարգավորումները, միջազգային փորձը և իրավակիրառ պրակտիկան:

Նույն աղբյուրի համաձայն՝ ուսումնասիրության արդյունքում Վարչապետի աշխատակազմի ՔԾԳ-ը ներկայացել է դիրքորոշում ԱՆ, ըստ որի՝ բարեվարքության համակարգի տարրերի խախտման դեմ ուղղված պատժամիջոցները միասնական չեն կարող լինել: Մասնավորապես՝ հանրային ծառայության պաշտոն և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար (բոլոր սուբյեկտների) բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվություն սահմանող միասնական պատասխանատվության սանկցիաներ նախատեսելը խնդրահարույց է և չի բխում առաջին հերթին համաչափության սահմանադրական սկզբունքի պահանջից:

Այսպիսով, ԿԿՀ-ը մշակել է վերլուծական փաստաթուղթ, որը իրենից ենթադրում է թիրախի առաջին մասի՝ գույքագրման իրականացում:

Երկրորդ թիրախը վերաբերում է իրավական ակտերի նախագծերի մշակման: Այս մասով հարկ է նշել, որ ԱՆ-ի կողմից մշակվել է «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որով կարգավորվում է նաև հանրային ծառայության և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով իրականացվող քննություններին վերաբերող կառուցակարգերը: Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի, ստացված կարծիքների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում են Նախագծերի լրամշակման աշխատանքները:

Այսպիսով, ստացվում է, որ թիրախում նշված է «...որոնցով ներդրվել են... կառուցակարգեր», սակայն հաշվետվությունից պարզ է դառնում, որ նախագծերը դեռևս ամբողջությամբ չեն ընդունվել և ներդրվել, քանի որ «*ներկայումս իրականացվում են Նախագծերի լրամշակման աշխատանքները*»:

Այնուհետև, ՔԾԳ-ի դիրքորոշման համաձայն, բարեվարքության համակարգի տարրերի խախտման դեմ ուղղված պատժամիջոցները միասնական չեն կարող լինել: Մասնավորապես, գրասենյակը գտնում է, որ բոլոր սուբյեկտների համար միասնական պատասխանատվության սանկցիաներ նախատեսելը խնդրահարույց է և չի բխում համաչափության սահմանադրական սկզբունքի պահանջից: Մա հակասում է թիրախի պահանջներին, քանի որ թիրախում հստակ նշված է «*ներառյալ միասնական և հստակ պատասխանատվության սանկցիաները բոլոր սուբյեկտների համար*»:

Իր հերթին, ըստ ԿԿՀ-ի՝ մշակված առաջարկներում անդրադարձ է կատարվում ոչ թե հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար պատասխանատվության միջոցների մեկ միասնական կառուցակարգին, այլ ընդգծվում է ծառայության տեսակների

դեպքում միննույն արարքի համար տարբերակված սանկցիաների կիրառման ռիսկերի, կամ որոշ դեպքերում ոլորտային օրենքներով առհասարակ սանկցիաների չհստակեցման մասին:

Մշտադիտարկման ընթացքում պարզ դարձավ նաև, որ փաստաթղթից չի երևում, թե արդյոք մշակված նախագծերը պարունակում են թիրախում նշված բոլոր կարևոր տարրերը, մասնավորապես՝ «համապարփակ կառուցակարգեր» և «միասնական և հստակ պատասխանատվության սանկցիաներ բոլոր սուբյեկտների համար»: Այս անորոշությունը լրջորեն խոչընդոտում է ամբողջական գնահատմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը, գործողությունը չի կարող համարվել ամբողջությամբ կատարված հետևյալ պատճառներով.

- 1. Նախագծերը դեռևս չեն ընդունվել և գտնվում են լրամշակման փուլում, մինչդեռ թիրախն արդեն իրականացված կառուցակարգեր է պահանջում:
- 2. ՔԾԳ-ը դեմ է արտահայտվել միասնական սանկցիաների ներդրմանը, ինչը հակասում է թիրախի հիմնական պահանջներից մեկին՝ «միասնական և հստակ պատասխանատվության սանկցիաները բոլոր սուբյեկտների համար»:
- 3. Չկա բավարար տեղեկատվություն, թե արդյոք առաջարկվող նախագծերը համապատասխանում են թիրախի բոլոր պահանջներին:

Գործողությունը գնահատվում է մասնակի կատարված, քանի որ առաջին թիրախը՝ խնդիրների գույքագրումը, իրականացվել է, սակայն երկրորդ թիրախի իրականացումը թերի է՝ հաշվի առնելով առկա հակասությունները և այն, որ նախագծերը դեռևս ընդունված չեն:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

«ԿՈՌՈՐ-ՊՑԻՍՑԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊԵՂՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թ.		
ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	21	100 %
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	7	33.33%
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	3	14.29%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	10	47.62%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	1	4.76%

II. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. ՀԱԿԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԶՈՐԱՅՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.1. Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման կարգը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համալսարան	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն և հակազդման իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ հզորացում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԱՆ	Հակակոռուպցիոն կոմիտե	Իրավական ակտի առկայություն (2026թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության երաշխիքներն ապահովվելու, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և վերջինիս տեղակալների նշանակման ընթացակարգում փոփոխություն կատարելու նպատակով ԱՆ-ը իրականացել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Ուսումնասիրված երկրների մեծամասնությունում հակակոռուպցիոն իրավապահ մարմինների ղեկավարների նշանակումներն ու պաշտոնանկությունները հաստատվում են խորհրդարանի կամ գործադիր մարմնի կողմից՝ ապահովելով հաշվետվողականություն և ժողովրդավարական վերահսկողություն: Որոշ երկրներում ընդունված է բաց մրցութային ընթացակարգ, որտեղ թեկնածուները գնահատվում են բազմաբնույթ մասնագիտական և հանրային կազմակերպությունների կողմից:

Մշտադիտարկման խմբի կողմից գործողությունը չափազանց դժվար է գնահատել որպես ամբողջությամբ կատարված՝ հաշվի առնելով Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության հարցում առկա խնդիրները, որոնք ցայտուն դրսևորվեցին 2024թ. նոյեմբերի 18-ին¹⁵: ԱՆ-ի կողմից միջազգային փորձի ուսումնասիրությունն իրականացվել է, սակայն այդ ուսումնասիրության արդյունքների գործնական կիրառությունը բացակայում է:

ՏՀԶԿ-ի Հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի 5-րդ փուլի զեկույցի 8.3 ցուցիչը հստակ բացահայտում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի նշանակման և պաշտոնանկության հետ կապված լուրջ խնդիրները: Զեկույցում նշվում է, որ *Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի ընտրության ներկայիս համակարգը թույլ է տալիս կառավարությանը կատարել հայեցողական որոշում՝ ընտրելով մրցույթի արդյունքում առաջարկված երեք*

¹⁵ <https://armeniatoday.am/hy/politics/818697/>

թեկնածուներից մեկին՝ առանց որևէ պարտավորության ընտրել առավելագույն միավորներ հավաքած թեկնածուին: Սա նշանակում է, որ վերջնական որոշումը կարող է պայմանավորված լինել քաղաքական կամ այլ նկատառումներով¹⁶:

Այս խնդրահարույց ընթացակարգի դրսևորում կարող է համարվել այն, որ օրինակ 2024 թվականին Հակակոռուպցիոն կոմիտեի նոր նախագահի ընտրության մրցույթի արդյունքներով, երբ մրցութային խորհուրդը Կառավարության հաստատմանը ներկայացրեց երեք թեկնածուի, վարչապետը առանձնազրույց ունեցավ երեք թեկնածուների հետ և հայտնեց, որ Կառավարության հաստատմանն է ներկայացնելու նրանցից միայն մեկի թեկնածությունը¹⁷, այնինչ համաձայն «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 12-մասի 8-րդ համաձայն՝ *Մրցութային խորհուրդը կազմում և Կառավարություն է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը (...)*¹⁸: Սա ենթադրում է, որ բոլոր երեք թեկնածուները պետք է դիտարկվեն Կառավարության նիստի ընթացքում, ինչը կապահովի գործընթացի թափանցիկությունն ու օբյեկտիվությունը: Օրենսդրական նորմի նպատակն է երաշխավորել, որ Կառավարության անդամներն ունենան հավասար հնարավորություն՝ ծանոթանալու յուրաքանչյուր թեկնածուի որակավորումներին, փորձառությանն ու տեսլականին, նրանց ուղղելու հարցեր և կայացնելու հիմնավորված որոշում¹⁹:

Առավել մտահոգիչ է պաշտոնանկության հետ կապված օրենսդրական կարգավորումների անկատարությունը: ՏՀԶԿ զեկույցը Հակակոռուպցիոն մարմինների ղեկավարների նշանակմանը նվիրված 8.3 ցուցիչով հաստուկ ընդգծում է, որ *«պաշտոնանկության հիմքերից որոշները հստակ ձևակերպված չեն»*²⁰, իսկ *«քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքի խախտման»* հիմքը²¹ նույնպես հստակ չէ:

Ստացվում է, որ սույն գործողության ներքո ԱՆ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունը կարող է լինել սոսկ տեսական:

Բացի այդ, մրցութային խորհրդի կազմավորման մեջ ՔՀԿ-ների ներգրավման տեսանկյունից նույնպես առկա էին խնդիրներ՝ կապված նրանց անկախության և հնարավոր շահերի բախման հետ: Այս հանգամանքը ևս կասկածի տակ է դնում Կոմիտեի ղեկավարի ընտրության գործընթացի բովանդակային թափանցիկությունն ու օբյեկտիվությունը²²:

Գործողության թիրախը սահմանել է, որ ուսումնասիրությունը պետք է կատարվի 2024թ., իսկ ստուգման միջոցը նախատեսված է 2025թ. դրությամբ իրավական ակտի առկայությունը: **Այս տեսանկյունից ուսումնասիրությունը թեև ՁԵՎԱԿԱՆՈՐԵՆ կատարվել է, սակայն կոմիտեի անկախության հիմնահարցերը դեռևս առկա են:**

¹⁶ Տե՛ս ՏՀԶԿ-ն Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցը, էջեր 139-140:

¹⁷ <https://www.azatutyun.am/a/hakakorupsiioni-ghekovari-varchapeti-nakhyntrats-teknatsun-artur-nahapetyann-e/33350470.html>

¹⁸ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203930>

¹⁹ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում նշանակումը կատարվել է 2025 թվականի մարտի 20-ին, սակայն ներկայացված ամփոփ վերլուծությունը ներառվել է 2024 թվականի հաշվետվությունում, քանի որ այս գործընթացին նպաստող բոլոր հիմնական նախապատրաստական աշխատանքները և իրադարձությունները տեղի են ունեցել 2024 թվականի ընթացքում:

²⁰ Տե՛ս ՏՀԶԿ-ն Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցը, էջ 140:

²¹ Տե՛ս նույն տեղում:

²² <https://iravaban.net/504623.html>

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է ԿԱՏԱՐՎԵԼ Է:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.2. Երաշխավորել Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ հզորացումը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ հզորացում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	Հակակոռուպցիոն կոմիտե		Իրավական ակտի առկայություն (2026թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

Համաձայն ՀՀ ԱԼ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող 120 պաշտոններից համալրված է 77-ը, ինքնավար 80 պաշտոններից՝ 71-ը: 2024 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թափուր հաստիքներում նշանակվել են 26 թեկնածու՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող և 24 թեկնածու՝ ինքնավար պաշտոններում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է ԿԱՏԱՐՎԵԼ Է:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.4. Անցկացնել կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով մասնա գիտական վերապատրաստումներ և պատրաստումներ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների համար

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք

Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ հզորացում	Վերապատրաստման/ պատրաստման ծրագրերը ներդրվել և գործում են Կոռուպցիայի հակազդման իրավապահ մարմիններում:	Հակա կոռուպցիոն կոմիտե Գլխավոր դատախազություն	ԱՆ	Տեխնիկական բնութագրերի, մշակված ծրագրերի առկայություն Վերապատրաստումների զեկույցներ Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ Մամուլի հոդորդագրություններ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է: Մասնավոր խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՋԱԿԱՆ:
---	--	--	----	---	---

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** 2024 թվականի ընթացքում մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանցից 11-ը համապատասխան վերապատրաստման դասընթաց են անցել ՆԳՆ կրթահամալիրում, իսկ ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանցից 7-ը մասնագիտական պատրաստում են անցել Արդարադատության ակադեմիայում: 2024 թվականին սահմանված կարգով պարտադիր վերապատրաստում են անցել 19 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք՝ Արդարադատության ակադեմիայում, իսկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման 35 ծառայողներ՝ ՆԳՆ կրթահամալիրում: Այսպիսով, ըստ հաշվետվության՝ ապահովված է գրեթե 30 տոկոս քննիչների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին: 2024 թվականին սահմանված կարգով վերապատրաստում են անցել 133 դատախազ:

Մշտադիտարկումը ցույց է տալիս, որ թեև վերապատրաստումների քանակական ցուցանիշները կատարվել են (դատախազներ, քննիչներ և օպերատիվ-հետախուզական աշխատակիցներ մասնակցել են դասընթացներին), սակայն բացակայում է դրանց որակական գնահատումը: Բացակայում են վերապատրաստումների արդյունավետության չափման գործիքները: Միայն դասընթացի ավարտին անանուն հարցաթերթիկների լրացումը բավարար չէ ռազմավարական

նպատակի ամբողջական իրականացման համար: Չեն ստուգվում ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի համադրել արդյունքները:

Ներկայացված փաստերը ցույց են տալիս, որ ապահովվել է միայն մասնակի արդյունք, բայց բացակայում են ապացույցներ, որ վերապատրաստումներն իրապես նպաստել են մասնավոր նպատակի իրագործմանը:

Այսպիսով, գործողությունը իրականացված է ոչ ամբողջական, քանի որ՝

- Իրականացվել են վերապատրաստումներ թիրախային խմբերի համար (քանակական ցուցանիշ)
- Սակայն ապահովվել է միայն մասնակի արդյունք, քանի որ չկան ազդեցության գնահատման մեխանիզմներ
- Բացակայում են փաստեր, որոնք կվկայեն մասնավոր խնդրի և ապա՝ ռազմավարական նպատակի մակարդակում սպասվող արդյունքի ամբողջական իրականացումը

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ, այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ հզորացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.6. Մշակել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մտուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ հզորացում	Մշակվել են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ և տարածվել են համապատասխան իրավապահ մարմինների շրջանում	Հակակոռուպցիոն կոմիտե Գլխավոր դատախազություն	ԱՆ Արդարադատության նախարարություն	Ուղեցույցի և միասնական մեթոդիկայի առկայություն Վերապատրաստումների զեկույցներ Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

				աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ	
				Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ	
				Մամուլի հաղորդագրություններ	
				ԶԼՄ հրապարակումներ	

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Ներկայումս վերանայման փուլում է գտնվում Գլխավոր դատախազի՝ 22.03.2022թ. թիվ 35 հրամանով հաստատված «Կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության առանձնահատկությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը», որի ընդունման ձգձգումը պայմանավորված է համապատասխան փորձագետ ներգրավելու հետ կապված դժվարություններով:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.7. Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների աշխատանքներին ներգրավել տնտեսագիտական/ ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակարգող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ	Գնահատվել են հակակոռուպցիոն հակազդման իրավապահ	Հակակոռուպցիոն	ԱՆ	Իրավական ակտի առկայություն	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ :

մարմինների ինստիտուցիոնա լ հզորացում	մարմիններում ֆինանսական գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման կարիքները: Տնտեսագիտական/ ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետները ներգրավվել են կոռուպցիայի հակազդման իրավապահ բոլոր մարմինների աշխատանքներին:	ն կոմի տե Գլխա վոր դատ ախա զույթ ուն		Մամուլի հաղորդագրությ ուններ ԶԼՄ հրապարակում ներ	
--	---	--	--	---	--

Համաձայն ՀՀ ԱԼ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ**: Հակակոռուպցիոն կոմիտեում ներգրավված է 4 փորձագետ, որից 2-ը փորձագետ-տնտեսագետ են: Հակակոռուպցիոն կոմիտեում նախատեսվել են ավագ օպերիվագոր-տնտեսագետի, օպերիվագոր-տնտեսագետի, ավագ օպերիվագոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի, օպերիվագոր-կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի հաստիքները: Նշված հաստիքները համալրվելու դեպքում ծառայողներն, ըստ էության, իրականացնելու են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև տնտեսագիտության ոլորտներում բնորոշ գործառնություններ: Այս փոփոխությամբ պայմանավորված Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքացուցակում, ինչպես նաև ներքին իրավական ակտերում ևս կատարվել են համապատասխան լրացումներ: Բացի այդ, նշված հաստիքները համալրելու համար 2024 թվականի ընթացքում հայտարարվել է երկու մրցույթ: Կատարված կարիքների գնահատման հիման վրա դեռևս առկա է անհրաժեշտություն ներգրավել տնտեսագետ/ֆինանսիստ փորձագետներ Գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության համար:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.8. Անցկացնել վերապատրաստումներ հակակոռուպցիոն դատարանների դատավորների համար

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատ արող մարմ ին	Համա կատ արող մարմ ին	Մտուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկմա ն արդյունք
--	---	---------------------------	-----------------------------------	---------------------------	----------------------------

Հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ հզորացում	Վերանայվել են հակակոռուպցիոն դատարանների դատավորների վերապատրաստման, ինչպես նաև դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերը: 20րագրերում ներառվել են կոռուպցիոն բնույթի գործերի քննության առանձնահատկությունները, այդ թվում՝ միջազգային առկա ստանդարտները, ներառող մոդուլներ	ԱՆ Արդարադատության ակադեմիա	Ընդհանուր ժողովի Ուսումնական հանձնաժողով ԲԴԽ	Ուսուցման, վերապատրաստման ծրագրեր Վերապատրաստումների զեկույցներ Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է: Ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՍԲՈՂՋԱԿԱՆ:
---	--	-----------------------------	--	--	---

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** 2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում վերապատրաստվել են Հակակոռուպցիոն դատարանի 15 դատավոր /94%/, 1 դատավոր չի վերապատրաստվել, քանի որ ընթացիկ տարում Արդարադատության ակադեմիայում անցել է մինչ նշանակվելը մասնագիտական պատրաստում Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 12 դատավոր /100%/ և Վճռաբեկ դատարանի Հակակոռուպցիոն պալատի 10 դատավոր/100%/:

Մշտադիտարկումը ցույց է տալիս, որ թեև վերապատրաստումների քանակական ցուցանիշները կատարվել են (Հակակոռուպցիոն դատարանի դատավորները մասնակցել են դասընթացներին), սակայն բացակայում է դրանց որակական գնահատումը:

Բացակայում են վերապատրաստումների արդյունավետության չափման գործիքները: Չեն ստուգվում ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլինեի համադրել արդյունքները:

Ներկայացված փաստերը ցույց են տալիս, որ ապահովվել է միայն մասնակի արդյունք, բայց բացակայում են ապացույցներ, որ վերապատրաստումներն իրապես նպաստել են մասնավոր նպատակի իրագործմանը:

Այսպիսով, գործողությունը իրականացված է ոչ ամբողջական, քանի որ՝

- Իրականացվել են վերապատրաստումներ թիրախային խմբերի համար (քանակական ցուցանիշ)
- Սակայն ապահովվել է միայն մասնակի արդյունք, քանի որ չկան ազդեցության գնահատման մեխանիզմներ
- Բացակայում են փաստեր, որոնք կվկայեն մասնավոր խնդրի և ապա՝ ռազմավարական նպատակի մակարդակում սպասվող արդյունքի ամբողջական իրականացումը

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ, այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ հզորացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.10. Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների աշխատանքներին ներգրավել տնտեսագիտական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մտուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ հզորացում	Գնահատվել են հակակոռուպցիոն դատարաններում ֆինանսական գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման կարիքները: Տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետները ներգրավվել են հակակոռուպցիոն բոլոր դատարանների աշխատանքներին:	ԲԴԽ	ԱՆ	Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ :

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ**: Դատական դեպարտամենտը գնահատել է Հակակոռուպցիոն դատարանի, Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի և Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կարիքները տնտեսագիտական և այլ անհրաժեշտ գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման վերաբերյալ: Արդյունքում, տնտեսագիտական գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման գործողության շրջանակներում՝ Հակակոռուպցիոն դատարանին տրամադրվել է թվով 2 հաստիք, իսկ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանին՝ 1 հաստիք: Նշված հաստիքները որակյալ մասնագետներով համալրելու ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր՝ հաստիքները համալրելու անհրաժեշտության մասին տեղեկացման միջոցով, սակայն համալրումը դեռևս չի իրականացվել:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.11. Սահմանել կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգ և կատարելագործել առկա կառուցակարգերը:

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ հզորացում	Մշակվել է կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական կարգ:	Հակա կոռուպցիոն կոմիտե Գլխավոր դատախազություն ԲԴԽ	ԱՆ ԲՏԱ	Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: ԲՏԱ-ի օժանդակությամբ մշակվել և ավարտական փուլին է հասցվել դատախազի աշխատանքի վիճակագրական տվյալների վերաբերյալ էլեկտրոնային վիճակագրության համակարգը, որը, ի թիվս այլնի, ներառելու է յուրաքանչյուր կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Արդիականացվել են Գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության վիճակագրության վարման մեխանիզմները: Առանձին հաշվառվում են դատաքննության փուլում գտնվող վարույթները, բողոքարկված դատական ակտերը:

Հարկ է նկատի ունենալ, որ ձեռնարկված քայլերը բավարար չեն միջոցառման կատարումն ապահովելու համար: Որպես կատարողական թիրախ մատնանշվում է վիճակագրության վարման **միասնական** կարգի առկայություն, որը հնարավոր է ապահովել միայն իրականացվող աշխատանքները Գլխավոր դատախազության և ԱՆ-ի կողմից համապատասխանաբար մինչդատական և դատական վարույթների մասով փոխհամաձայնեցված համակարգելու միջոցով:

Գործողության կատարման հետաձգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հակակոռուպցիոն կոմիտեն 2024թ. նոյեմբերին ԱՆ-ին առաջարկ է ներկայացրել վերանայել Գործողությունների ծրագրի 2.11-րդ գործողության կատարման ժամկետը և կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական կարգի ստեղծումը նախատեսել

2025 թվականի առաջին կիսամյակում, իսկ կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման համար օրենսդրական հիմքերի և ծրագրային/տեխնիկական լուծումների ապահովումը նախատեսել 2025 թվականի երկրորդ կիսամյակում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.12. Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաները ներառել դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների ուսուցման և վերապատրաստման ծրագրերում

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն և գործողությունների դատական համակարգում	Վերանայվել են դատավորների վերապատրաստման, ինչպես նաև դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերը: Ծրագրերում ներառվել են կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մոդուլներ:	Արդարադատության ակադեմիա ԲԴԽ	ԱՆԿԿՀ Ընդհանուր ժողովի Ուսումնական հանձնաժողով	Ուսուցման, վերապատրաստման ծրագրեր: Վերապատրաստումների զեկույցներ Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային և հաշվետվություններ Մամուլի հաղորդագրություններ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ: Ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ:

				ԶԼՄ հրապարակումներ	
--	--	--	--	--------------------	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: Դատավորների, դատավորների թեկնածուների և դատավորների թեկնածուների հավակնորդների 2024 թվականի ուսումնական ծրագրերում նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր» վերտառությամբ դասընթացը: Դասընթացը ընդգրկվել է դատավորների և թեկնածուների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացների մոդուլում և նախատեսվել է բոլոր դատավորների և թեկնածուների համար՝ անկախ մասնագիտացումից, ինչպես նաև ներառվել է բոլոր մասնագիտացումներով դատավորների թեկնածուների հավակնորդների մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերում:

Այսպիսով, ուսումնասիրելով Արդարադատության ակադեմիայում իրականացված վերապատրաստումների տվյալները, պարզվում է, որ 2024 թվականի ընթացքում զգալի թվով մասնակիցներ անցել են կոռուպցիայի կանխարգելման թեմատիկ դասընթացները: Մասնավորապես, վերապատրաստվել են 247 դատավոր, ինչպես նաև 30 դատավորի թեկնածու և 10 դատավորի թեկնածուի հավակնորդ: Վերապատրաստումներն անցկացվել են Արդարադատության ակադեմիայում՝ հիմնվելով կառավարման խորհրդի հաստատած չափանիշների վրա: Սակայն, մշտադիտարկման տեսանկյունից առկա է հիմնական խնդիր. բացակայում են տվյալներ դատավորների թեկնածուների ընդհանուր թվի վերաբերյալ: Նման պայմաններում անհնար է հաշվարկել, թե արդյոք հասանելի է եղել ռազմավարությամբ նախատեսված 30% թիրախը: Թեև հայտնի է, որ վերապատրաստվել են 30 դատավորի թեկնածու, սակայն առանց ընդհանուր թվի իմացության հնարավոր չէ հաշվարկել, թե դա դատավորների թեկնածուների ընդհանուր քանակի քանի տոկոսն է կազմում: Քանակական գնահատման տեսանկյունից, մշտադիտարկումն արժեքավոր տեղեկություններ է տրամադրում իրականացված գործողությունների մասին, սակայն չի ապահովում թիրախային ցուցանիշների հետ համեմատության հնարավորություն, ինչը սահմանափակում է այս գործողության լիարժեք գնահատման հնարավորությունը:

Բացի այդ, բացակայում են վերապատրաստումների արդյունավետության չափման գործիքները: Չեն ստուգվում ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլինեի համադրել արդյունքները:

Ներկայացված փաստերը ցույց են տալիս, որ ապահովվել է միայն մասնակի արդյունք, բայց բացակայում են ապացույցներ, որ վերապատրաստումներն իրապես նպաստել են մասնավոր նպատակի իրագործմանը:

Այսպիսով, գործողությունը իրականացված է ոչ ամբողջական, քանի որ՝

- Իրականացվել են վերապատրաստումներ թիրախային խմբերի համար (քանակական ցուցանիշ)
- Սակայն ապահովվել է միայն մասնակի արդյունք, քանի որ չկան ազդեցության գնահատման մեխանիզմներ

- Բացակայում են փաստեր, որոնք կվկայեն մասնավոր խնդրի և ապա՝ ռազմավարական նպատակի մակարդակում սպասվող արդյունքի ամբողջական իրականացումը

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ, այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ հզորացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.13. Կատարելագործել և արդիականացնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ձեռք բերված, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի և կառավարման կառուցակարգերի կատարելագործում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	Գլխավոր դատախազություն	ԱՆԲՏԱ	Իրավական ակտի առկայություն (2025թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ :

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Ըստ նույն աղբյուրի՝ Գլխավոր դատախազության կողմից ուսումնասիրվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի վերաբերյալ ԵԽ կողմից ներգրավված միջազգային փորձագետների խորհրդատվական կարծիքը, որը հաշվի կառնվի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելիս:

Մշտադիտարկման խումբը ուսումնասիրելով կատարված գործողությունները և սույն գործողության կատարողականը՝ «Կատարելագործել և արդիականացնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը», գնահատում է որպես «կատարված չէ» հետևյալ պատճառաբանությամբ:

2024 թվականի թիրախային արդյունքը սահմանում է կոնկրետ պահանջներ, որոնք պետք է կատարված լինեին այդ ժամանակահատվածում: Այն է՝ միջազգային փորձի հաշվառմամբ պետք է վերհանված լինեին ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի, այդ թվում՝ կառավարող մարմնի, բռնագանձված գույքի կառավարման մոդելի, քննչական և դատախազական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման հարթակի, կառավարման հանձնված ակտիվների շտեմարանի ստեղծման վերաբերյալ խնդիրները: Ընդ որում, թվարկվածներից կառավարող մարմնի և բռնագանձված գույքի կառավարման մոդելի վերաբերյալ իրավական ակտերի նախագծերը (կամ մեկ միասնական իրավական ակտը) պետք է մշակվեն 2025 թվականին:

ԱՆ-ի ներկայացրած հաշվետվության համաձայն, Գլխավոր դատախազությունը ուսումնասիրել է ԵԽ փորձագետների խորհրդատվական կարծիքը: Ուսումնասիրության արդյունքները հանրայացված չեն, սակայն նախատեսվում է դրանք «հաշվի առնել» ապագայում օրենքում փոփոխություններ կատարելիս:

Ստացվում է, որը 2024 թվականին նախատեսված գործողությունները պետք է իրականացվեն 2025 թվականին, որոնց հիման վրա նախատեսված է մշակել իրավական ակտերի փոփոխություններ՝ հաշվի առնելով 2025 թվականի ապրիլի 16-ին ՀՀ սահմանադրական դատարանի կայացրած «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ որոշումը²³: Ռազմավարության Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետներին համապատասխան այս խումբ գործողությունների կատարման համար մնացել է ընդամենը 8 ամիս: Հարց է առաջանում, թե արդյոք հնարավոր է այդ ժամանակահատվածում իրականացնել նման ամբողջական և իրավական առումով անխոցելի բարեփոխումներ:

Այսպիսով, սույն գործողության ներքո հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները չեն համապատասխանում թիրախային արդյունքին, քանի որ՝

1. Միջազգային փորձի հաշվառմամբ վեր հանված չեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, այդ թվում վերը նշված չորս ուղղություններով խնդիրները
2. Միայն «ուսումնասիրում» և «հաշվի առնելու» մտադրություն հայտնելը չի կարող համարվել միջազգային փորձի հաշվառմամբ խնդիրների վերհանում
3. Գործողությունների ծրագրում նշված «ստուգման միջոցին» (իրավական ակտի առկայություն) հասնելու գործողությունները բացակայում են, ու թեև երկու իրավական ակտերի (կամ մեկ միասնական իրավական ակտի) մշակումը նախատեսված է 2025թ-ին, սակայն միջազգային փորձի հաշվառմամբ չորս ուղղությունների խնդիրների վերհանումը և համապատասխան առաջարկությունների մշակումը պետք է արդեն իսկ կատարված լինեի 2024թ-ին:

Հաշվետու ժամանակահատվածում ուշադրության արժանի են ոչ միայն գործողություն 2.13-ի շրջանակներում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի

²³ 2025 թվականի ապրիլի 16-ի ՀՀ սահմանադրական դատարանի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ որոշումը հասանելի է հետևյալ հղմամբ.

https://www.concourt.am/decision/decisions/6807363e2d4aa_SDV-1776.pdf

կատարելագործման ուղղակի միջոցառումները, այլև այս ոլորտը համակարգող պաշտոնատար անձանց նշանակման գործընթացների թափանցիկությունն ու օբյեկտիվությունը՝ որպես ինստիտուցիոնալ արդյունավետության առանցքային բաղադրիչ²⁴:

Այս համատեքստում հատկանշական է ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի պաշտոնի մրցույթային գործընթացը: Թեև տեղակալի նշանակումը տեղի է ունեցել 2025 թվականի հունվարի 27-ին²⁵, այս գործընթացի նախապատրաստական աշխատանքները և մրցույթի հիմնական փուլերն իրականացվել են հաշվետու ժամանակահատվածում, ինչն անմիջականորեն առնչվում է ապօրինի գույքի բռնագանձման ինստիտուտի կառավարման համակարգի արդիականացման և կատարելագործման ռազմավարական նպատակներին:

Գործընթացի ուսումնասիրությունը վեր է հանել մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են ռազմավարական խնդրի իրագործումը՝ վտանգելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի և կառավարման կառուցակարգերի արդյունավետությունը²⁶:

Նախ, **որակավորման հանձնաժողովի կազմի անկախությունը խնդրահարույց էր**. անդամների մեծամասնությունը ուղղակիորեն կապված էին դատախազության հետ: Փորձագետներին նշանակել էր Գլխավոր դատախազը՝ առանց բաց մրցույթի, ինչը առաջացրել է ողջամիտ կասկածներ այդ անձանց անկախության և հնարավոր փոխկապակցվածության մասով:

Երկրորդ, **առկա էր շահերի բախման հնարավոր իրավիճակ**: Ուշագրավ է, որ հաղթող թեկնածուն մինչև 2025թ. հունվարի 8-ը եղել է հանձնաժողովի անդամ և դադարեցրել է իր անդամությունը միայն մրցույթին մասնակցելուց առաջ:

Երրորդ, **արձանագրվել են թափանցիկության լուրջ խնդիրներ**. մրցույթի արդյունքները հրապարակվել են «Դատախազության մասին» ՀՀ օրենքով պահանջվող ժամկետից մեկ օր ուշ՝ հունվարի 23-ին: Հրապարակվել է միայն հաղթող թեկնածուի անունը՝ առանց ներկայացնելու քվեարկության արդյունքների մանրամասները:

Չորրորդ, **ողջամիտ հարցումներ են առաջացել փորձագետների որակավորման շուրջ**: Օրինակ՝ Գլխավոր դատախազությունը հրաժարվել է տրամադրել փաստաթղթեր, որոնք կհաստատեին տեղական փորձագետի համապատասխանությունը «Դատախազության մասին» ՀՀ օրենքով օրենքով սահմանված որակավորման պահանջներին:

Այս խնդիրները ողջամիտ կասկածներ և մտահոգություններ են առաջացրել ոչ միայն մրցույթի թափանցիկության և արդյունքների հիմնավորվածության վերաբերյալ, այլև կարող են վտանգել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի կատարելագործման և արդիականացման գործընթացում առկա մարտահրավերների մասին: Ներկայացված թերությունները կարող են բացասաբար անդրադառնալ ինստիտուտի իրավական և ինստիտուցիոնալ երաշխիքների ամրապնդման վրա, ինչը կհանգեցնի ռազմավարական խնդրի

²⁴ ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի պաշտոնում նշանակումը կատարվել է 2025 թվականի հունվարի 27-ին, սակայն ներկայացված ամփոփ վերլուծությունը ներառվել է 2024 թվականի հաշվետվությունում, քանի որ այս գործընթացին նպաստող նախապատրաստական աշխատանքները և իրադարձությունները մեկնարկել են 2024 թվականին:

²⁵ <https://iravaban.net/509199.html>

²⁶ <https://iravaban.net/510420.html>

(մասնավոր նպատակի) մակարդակում նախատեսված միջանկյալ արդյունքների ձեռքբերման խոչընդոտներին:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ԶԷ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.14. Կատարելագործել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ.)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մտուգման միջոց	Մշտադիտարկման արդյունք
Կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ձեռք բերված, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի և կառավարման կառուցակարգերի կատարելագործում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	Գլխավոր դատախազություն	Պետական գույքի կառավարման կոմիտե	Իրավական ակտի առկայություն (2025թ.)	Գործողությունը է ԿԱՏԱՐՎԵԼ և ՄԱՍՆԱԿԻ:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի:** Կատարվել է ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի պատշաճ կառավարման մեխանիզմներ նախատեսող միջազգային իրավական ակտերի ուսումնասիրություն, որը հիմք կհանդիսանա համապատասխան իրավական ակտերի մշակման համար:

Ըստ նույն աղբյուրի՝ ՀՀ կառավարության 05.12.2024թ.-ի 1922-Ն որոշմամբ սահմանվել են քրեական վարույթներով պետությանը, համայնքին, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին և պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցների վճարման միասնական կարգավորումներ: Բացի այդ, հիշյալ որոշմամբ կարգավորվել է նաև քրեական վարույթներով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի վերականգնման կարգը, ինչպես նաև վերականգնված դրամական միջոցների և արգելադրված դրամական միջոցների վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը:

Մշտադիտարկման խումբը ուսումնասիրելով կատարված գործողությունները և սույն գործողության կատարողականը՝ «Կատարելագործել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերը», գնահատում է որպես «կատարվել է մասնակի» հետևյալ պատճառաբանությամբ:

2024 թվականի համար թիրախային արդյունքը սահմանում է, որ պետք է մշակվեն և ներդրվեն կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի պատշաճ կառավարման մեխանիզմներ նախատեսող իրավական ակտեր:

Ներկայացված կատարողականի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ կառավարության 05.12.2024թ.-ի 1922-Ն որոշմամբ մշակվել և ներդրվել են քրեական վարույթներով պետությանը, համայնքին և այլ կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցների վճարման միասնական կարգավորումներ: Սակայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթով պետությանն անցած գույքի կառավարման համակարգային լուծումներ, ինչպես նշվեց վերևում, դեռևս ներդրված չեն:

Այսպիսով, թիրախային արդյունքի մի մասը իրականացվել է (ընդունվել է իրավական ակտ քրեական վարույթներով վնասի վերականգնման կարգավորման համար), սակայն մյուս մասը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման մեխանիզմների մասով, դեռևս ներդրված չէ, ուստի գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մասնակի»:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.17. Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համա կատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ազդարարման համակարգի կատարելագործում և արդիականացում	«Ազդարարման համա կարգի մասին» ՀՀ օրենքում և հարակից իրավական ակտերում փոփոխությունների նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:	ԱՆ	Գլխավոր դատախազություն	Իրավական ակտի առկայություն (2024-2025թթ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՍՄԱՍՄԲ:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ**: Ազդարարման համակարգի հետ կապված գործնական խնդիրները գույքագրվել են: ԱՆ-ի կողմից «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ԻՀԱ) աջակցությամբ մշակվել է «ՄԻՊ-ի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի, «ԿԿՀ-ի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնցով նախատեսվել է արտաքին ազդարարման դեպքում ազդարարումը նաև լիազորված անձին ներկայացնելու իրավական հնարավորությունը, հատկեցվել ներքին և արտաքին ազդարարման տեսակներով հաղորդումը ստանալուց հետո լիազորված անձի կողմից դրանք քննելու և լուծելու նպատակով՝ իրավասու մարմիններին ներկայացնելու կարգը, ինչպես նաև սահմանվել է ազդարարի հետ՝ իր ներկայացրած հաղորդման ընթացքի վերաբերյալ հետադարձ կապ ապահովող սուբյեկտին:

Ըստ նույն աղբյուրի՝ ազդարարման համակարգի հետ կապված գործնական խնդիրների գույքագրման նպատակով ԱՆ-ի կողմից պատրաստվել են հարցումներ և շրջանառվել բոլոր պետական մարմիններին և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ հանդիսացող ՀԿ-ներին: Բացի այդ, խնդիրների գույքագրման նպատակով ԱՆ-ի կայքէջում, ինչպես նաև ֆեյսբուքյան էջում տեղադրվել են համապատասխան հայտարարություններ: Արդյունքում, ԱՆ-ը գույքագրել է ազդարարման համակարգի վերաբերյալ առկա խնդիրները, որոնք ամփոփված են «Ազդարարման համակարգի խնդիրներ» վերատառությամբ վերլուծական փաստաթղթում: Փաստաթուղթը կազմվել է ԻՀԱ-ի, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և ՔՀԿ-ների կառուցողական երկխոսության ցանցի հետ համագործակցությամբ, ԵՄ-ի և «Բաց կառավարման գործընկերություն. Եվրոպա» հիմնադրամի օժանդակությամբ իրականացվող «Ազդարարման բազմակողմանի խթանում Հայաստանում» ծրագրի շրջանակներում իրականացված ազդարարման համակարգի կատարելագործմանն ուղղված փորձագիտական վերլուծությունների, այլ կառույցների և ծրագրերի կողմից իրականացված վերլուծությունների, ինչպես նաև պետական մարմինների կողմից արձանագրված խնդիրների հաշվառմամբ:

Մշտադիտարկման խումբը ուսումնասիրելով կատարված գործողությունները արձանագրել է էական առաջընթաց ազդարարման ինստիտուտի կայացման ուղղությամբ: Օրինակ՝ ընտրվելով բաց մրցույթի միջոցով՝ ԻՀԱ-ն՝ ՀՀ ԱՆ-ի հետ համատեղ իրականացրել է լայնածավալ վերապատրաստումներ և իրազեկման միջոցառումներ Երևանում և բոլոր մարզերում (Սյունիք, Շիրակ, Տավուշ, Լոռի, Գեղարքունիք, Արագածոտն, Կոտայք, Արմավիր, Վայոց ձոր, Տավուշ)՝ ընդգրկելով 788 մասնակցի՝ ուսուցիչների, դպրոցականների, դասախոսների, բուհերի ուսանողների, գործարար համայնքի ներկայացուցիչների, համայնքային և քաղաքացիական ծառայողների մասնակցությամբ²⁷: Վերապատրաստումները ներառել են ազդարարման համակարգի, ազդարարների իրավունքների, Azdararir.am առցանց հարթակի, թվային անվտանգության, հարթակից օգտվելու և անանուն հաղորդումներ ներկայացնելու վերաբերյալ:

²⁷ <https://www.moj.am/article/4024> , <https://www.moj.am/article/4030> , <https://www.moj.am/article/4217>

Վերապատրաստումների արդյունավետությունը գնահատելու նպատակով, փորձագիտական թիմի կողմից ներդրվել էր գործիք՝ ազդարարման համակարգի ընկալումների և գիտելիքների ելակետային, և ապա՝ վերջնական արդյունքները ստուգելու նպատակով, ինչի արդյունքում գնահատվել է՝ վերապատրաստման արդյունավետությունը, գրանցվել է վերապատրաստված անձանց ընկալումների և գիտելիքների աճ: Մասնավորապես, վերապատրաստման առաջին փուլում, որին մասնակցել են **222 քաղաքացիական և համայնքային ծառայողներ** Երևանում և ՀՀ մարզերում, վերջնարդյունքում **գիտելիքի գնահատման արդյունքում գրանցվել է 35%:** Երկրորդ փուլում, որին մասնակցել են ընդհանուր թվով **566 համայնքային ծառայողներ, ուսուցիչներ, աշակերտներ, ուսանողներ, դասախոսներ և մասնավոր ոլորտի ներկայացուցիչներ** Երևանում և ՀՀ մարզերում, վերջնարդյունքում **գիտելիքի գնահատման արդյունքում գրանցվել է 55.64%:**

Ազդարարման ընկալումների և վարքագծի փոփոխման, հանրային գիտակցությունը բարձրացնելու նպատակով վերոհիշյալ թեմաներով մշակվել են հատուկ ուսումնական և իրազեկման նյութեր²⁸: Բացի այդ, ԻՀԱ-ն ՀՀ ԱՆ-ի հետ համագործակցությամբ մշակել է Տեղական ինքնակառավարման մարմինների²⁹ և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներքին ազդարարման համակարգի մեթոդոլոգիական ուղեցույցներ³⁰՝ ազդարարման համակարգի համապետական իրազեկման արշավի շրջանակում: Նաև մշակվել է «Ազդարարման Ձեր թվային իրավունքը» ձեռնարկը³¹, որում ներկայացվում է ուղեցույց այն մասին, թե ինչպես ապահովել գաղտնի, անանուն հաղորդման ներկայացումը՝ միաժամանակ մատնանշելով հաղորդման արդյունավետ քննության համար անհրաժեշտ և բավարար պայմանները:

Գործողությունը գնահատվում է «կատարված է մեծամասամբ» այն պատճառաբանությամբ, որ չնայած նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի և այժմ գտնվում է լրամշակման փուլում, որպես արդյունքային ցուցիչ նախատեսված է իրավական ակտի ընդունումը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.18. Զարգացնել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը

Միջանկյալ արդյունքները՝	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող	Համա կատարող	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
-------------------------	---	---------	--------------	------------------------	------------------------

²⁸ Ազդարարման համակարգի զարգացման, հանրային ընկալումներն ու վարքագիծը փոփոխելու վերաբերյալ կատարված աշխատանքներին և իրազեկման նյութերին կարող եք ծանոթանալ այստեղ.

<https://armla.am/?s=%D5%A1%D5%A6%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D6%80>

<https://armla.am/?s=%D5%A1%D5%A6%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6>

²⁹ Տեղական ինքնակառավարման մարմինների ներքին ազդարարման համակարգի մեթոդոլոգիական ուղեցույցը հասանելի է հետևյալ հղմամբ. <https://armla.am/54360.html>

³⁰ Մասնավոր հատվածի կազմակերպությունների ներքին ազդարարման համակարգի մեթոդոլոգիական ուղեցույցը հասանելի է հետևյալ հղմամբ. <https://armla.am/wp-content/uploads/2025/01/Internal-WB-Methodological-Guide-Private-Sector-final-241024.pdf>

³¹ «Ազդարարման Ձեր թվային իրավունքը» ձեռնարկը հասանելի է հետևյալ հղմամբ. https://armla.am/wp-content/uploads/2025/01/Handbook_Azdararir.am_.pdf

ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում		մարմին	մարմին		
Ազդարարման համակարգի կատարելագործում և արդիականացում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԱՆ	Գլխավոր դատախազություն ԲՏԱ	Իրավական ակտի առկայություն (2025 թ.)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ**: ԱՆ-ի կողմից ԻՀԱ-ի աջակցությամբ մշակվել են «ՄԻՊ-ի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ԿԿՀ-ի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը: Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Ներկայումս իրականացվում է նախագծերի լրամշակման աշխատանքները:

Մշտադիտարկման խումբը ուսումնասիրելով կատարված գործողությունները արձանագրել է, որ ՄԻՊ գրասենյակը չի իրականացնում ստացված տվյալների բովանդակային վերիֆիկացիա, այլ սահմանափակվում է միայն տարբեր գերատեսչություններից ստացված թվային տվյալների մեխանիկական հավաքագրմամբ և ամփոփմամբ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է «կատարված է մեծամասամբ» այն պատճառաբանությամբ, որ իրավական ակտի նախագիծը մշակված է և քննարկումների արդյունքում գտնվում է լրամշակման փուլում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.19. Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համալսող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք

Ազդարարման համակարգի կատարելագործում և արդիականացում	Տեխնիկական բնութագիրը մշակված և հաստատված է:	ԱՆ Գլխավոր դատախազություն	ՔՀԿ ԲՏԱ	Տեխնիկական բնութագրերի առկայություն:	Գործողությունը է ԿԱՏԱՐՎԵԼ և ՄԱՍՆԱԿԻ
--	--	------------------------------	------------	--------------------------------------	-------------------------------------

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Ազդարարման էլեկտրոնային հարթակի ծրագրային ապահովման իրականացումը մասնավոր ընկերության կողմից «Ekeng» էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին հանձնելու վերաբերյալ ԱՆ-ը հայտնել է, որ հարցը քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ, որոնք առարկություններ չեն ներկայացրել և պատրաստակամություն են հայտնել մասնակցել հարցի շուրջ հետագա քննարկումներին: Իրականացված ուսումնասիրության շրջանակներում վեր են հանվել ազդարարման էլեկտրոնային հարթակի հիմնական խնդիրները:

Մշտադիտարկման խմբի կողմից ներկայացված կատարողականի վերլուծությունը ցույց է տալիս, որ սույն գործողություն շրջանակներում վեր են հանվել ազդարարման էլեկտրոնային հարթակի հիմնական խնդիրները, որը համապատասխանում է առաջին թիրախին: Երկրորդ թիրախով ԱՆ-ը դիմել է համապատասխան շահագրգիռ մարմիններին հարթակի ծրագրային ապահովման «Ekeng»-ին հանձնելու հարցով, և ստացել է պատրաստակամություն հետագա քննարկումներին մասնակցելու վերաբերյալ, սակայն կոնկրետ որոշում այս հարցով չի կայացվել, միայն դիտարկվել է այդ հնարավորությունը: Միևնույն ժամանակ, առկա չեն փաստեր այն մասին, որ իրականացվել է երրորդ թիրախը՝ մշակվել է ազդարարման էլեկտրոնային հարթակի նոր տեխնիկական բնութագիրը:

Այսպիսով, քանի որ առանցքային բաղադրիչը՝ տեխնիկական բնութագիրը, չի մշակվել, իսկ ստուգման միջոցը հենց դա էր նախատեսում, գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մասնակի»:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ և ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2.20. Կատարելագործել ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները, դիտարկել ազդարարման խրախուսման մեխանիզմների նախատեսման նպատակահարմարությունը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակարգող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
---	---	----------------	-------------------	------------------------	------------------------

Ազդարարման համակարգի կատարելագործում և արդիականացում	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԱՆ ԿԿՀ Գլխավոր դատախազություն	ՔՀԿ ՄԻՊ	Իրավական ակտի առկայություն (2025թ.)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է
--	---	---	------------	-------------------------------------	----------------------------------

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: ԱՆ-ի կողմից շրջանառվել են համապատասխան գրություններ բոլոր պետական մարմիններին ու Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ հանդիսացող հասարակական կազմակերպություններին: Նույն աղբյուրի համաձայն, խնդիրների գույքագրման նպատակով ԱՆ-ի կայքէջում³², ինչպես նաև ֆեյսբուքյան էջում³³ տեղադրվել են համապատասխան հայտարարություններ:

Մշտադիտարկման խմբի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում, պարզվեց, որ ԱՆ-ի կողմից մշակվել են նախագծեր, որոնք ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված առաջարկությունների հիման վրա նախագծերը լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ:

Հաշվի առնելով, որ գործողությունների ծրագրով նախատեսված բոլոր քանակական ցուցիչներն իրականացվել են, մշտադիտարկման խումբն այս գործողությունը գնահատում է որպես ամբողջությամբ կատարված:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է**:

³² https://www.moj.am/announcements/view/article/2950#_ftn2

³³ <https://www.facebook.com/mojofarmenia/posts/pfbid025CkuPmY2yzhJijbJcgMGP5Tni3w5NFikBRyX92fozA7jo4iuP61csceeuHAt5DyCl>

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶՂՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	15	100 %
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	5	33.33%
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	4	26.67%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	5	33.33%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	1	6.67%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 3-ը համապատասխանում էին սահմանված հատկանիշներին, որոնց գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	3	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	3	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

III. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.1. Մշակել և ներդնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում 5-6 տարեկան երեխաների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում 5-6 տարեկան երեխաների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն ծրագիրը մշակվել և հաստատվել է, մեթոդաբանությունը մշակվել և հաստատվել է: Ծրագիրը ներդրվել և գործում է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 50% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական բնակավայրերում:	ԿԳՄ ՄՆ	ԿԿՀ Կրթության տեսչական մարմին ՏԻՄ ՏԿԵՆ ՔՀԿ	Մշակված և կիրառվող ծրագրեր, ներառյալ հստակ մեթոդաբանությունները և մոդուլները, պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշները Տեսչական մարմինների մոնիթորինգային այցելությունների հաշվետվություններ Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** 13.05.2021թ.-ի ՀՀ կառավարության 744-Ն որոշմամբ հաստատվել է «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը», որը հանդիսանում է հանրակրթության պետական կրթական չափորոշիչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ, և որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:

Նույն աղբյուրի համաձայն, 16.11.2021թ.-ի N 58-Լ հրամանով հաստատված «Նախադպրոցական ավագ խմբի կրթական ծրագրի» ծրագրում ներառված են էթիկայի և բարեվարքության վերաբերյալ թեմաներ, մասնավորապես՝ «Բարեկիրթ վարքագիծ», «Իմ իրավունքներն ու պարտականությունները», «Անվտանգ միջավայր, անվտանգ վարքագիծ»:

Այսպիսով, 2024 թվականի կատարողականի թիրախում սահմանված էին հետևյալ պահանջները՝

- Մշակել և հաստատել ՆՈՒՀ-երում բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները
- Մշակել պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշները
- Ընտրել պիլոտային ՆՈՒՀ-երը
- Մշակել գիտելիքների գնահատման համակարգը
- Կատարել գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված ՆՈՒՀ-երում
- Պիլոտային ծրագիրն իրականացնել ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում

Ներկայացված տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2021 թ.-ին արդեն իսկ հաստատվել է «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը», որում ներառված են որոշ թեմաներ՝ կապված էթիկայի և բարեվարքության հետ («Բարեկիրթ վարքագիծ», «Իմ իրավունքներն ու պարտականությունները», «Անվտանգ միջավայր, անվտանգ վարքագիծ»): Ընտրության չափանիշ է սահմանվել «նոր չափորոշիչի անցումը հաստատության կողմից»: Ծրագիրը ներդրված է 542 ՆՈՒՀ-երում, որոնք ներառում են ՀՀ բոլոր մարզերը և Երևան քաղաքը: Սակայն կատարողականի մասին տեղեկատվությամբ չեն հիշատակվում թիրախային արդյունքների մի շարք կարևոր բաղադրիչներ՝

- Չի հստակեցվում, թե արդյոք մշակվել են հատուկ հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագրի մոդուլներ, թե հիմք է ընդունվել ընդհանուր չափորոշիչը
- Բացակայում է գիտելիքների գնահատման համակարգի մշակման մասին տեղեկատվությունը
- Բացակայում է գիտելիքների ելակետային գնահատման մասին տեղեկատվությունը
- Չի հստակեցվում, թե ինչպես է ընտրվել 542 ՆՈՒՀ-ը, արդյոք եղել է պիլոտային 20 ՆՈՒՀ-երի նախնական ընտրություն և փորձարկում, ինչպես պահանջվում էր թիրախային արդյունքում

Համաձայն մեթոդոլոգիայի, գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մասնակի», քանի որ ներկայացված տեղեկատվությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կատարվել է նախատեսված գործողությունների մի մասը: Փաստեր կան, որ իրականացվել են էթիկայի և բարեվարքության վերաբերյալ որոշակի ուսուցողական գործողություններ, սակայն թիրախային արդյունքի մի շարք կարևոր բաղադրիչներ կամ բացակայում են, կամ չեն ներկայացվել:

Ավելին, ներկայացված տեղեկատվությունը վերաբերում է 2021 թ.-ին ընդունված ծրագրերին, այդպիսով չի հստակեցվում, թե ինչ նոր գործողություններ են կատարվել 2023-2024թթ. ընթացքում՝ համաձայն Ռազմավարության:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.2. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողների համար մշակել և ներդնել էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիր

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակարգող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն վերապատրաստումների ծրագիրը մշակվել և հաստատվել է: Ծրագիրը ներդրվել և գործում է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 50% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում	ԿԳՄ ՍՆ	ԿԿՀ ՏԻՄ ՏԿԵՆ ՔՀԿ	Վերապատրաստումների ծրագրեր Տեսչական մարմինների մոնիթորինգային այցելությունների հաշվետվություններ Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: ՆՈՒՀ-երի մանկավարժական աշխատողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիրը մշակվել է, իսկ վերապատրաստումները կկազմակերպվեն 13.05.2021 թ.-ի ՀՀ կառավարության 744-Ն որոշմամբ հաստատված «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը» ներդրած համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների շրջանում: Պիլոտային նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընտրելու համար որպես չափանիշ է սահմանվել նոր չափորոշիչի անցումը հաստատության կողմից: Վերը նշված կարգի համաձայն 2024 թվականին վերապատրաստվել է շուրջ 1500 մանկավարժական աշխատող, ներառյալ ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում:

Այսպիսով, 2024 թ.-ի կատարողականի թիրախում սահմանված հետևյալ պահանջները կատարվել են՝

- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիրը մշակվել է
- Սահմանվել է պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշ՝ նոր չափորոշչի անցումը հաստատության կողմից
- 2024 թվականին վերապատրաստվել է շուրջ 1500 մանկավարժական աշխատող
- Վերապատրաստումներն իրականացվել են ներառյալ ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է :**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.3. Հանրակրթության շրջանակում կատարելագործել «Հասարակագիտություն» առարկայի առարկայական ծրագիրը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մտուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	Ներդրված է «Հասարակագիտություն» առարկայի առարկայական ծրագիրը, որում ներառված են հակակոռուպցիոն կրթության հիմնական բաղադրիչները:	ԿԳՄ ՄՆ	ԿԿՀ Կրթության տեսչական մարմին ՏԿԵՆ ՔՀԿ	Մշակված և հաստատված «Հասարակագիտություն» առարկայի ծրագիր:	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մայիսի 7-ի N 38-Ն հրամանով հաստատված «Հասարակագիտություն» առարկայի առարկայական լրամշակված ծրագրերում ներառված է հակակոռուպցիոն բաղադրիչը, որը ներդրված է Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները հաստատված են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N 11-Ն հրամանով, որով կարգավորվում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման հետ կապված իրավահարաբերությունները:

ԿԿՀ-ն՝ մշակել և ԿԳՄՍ նախարարություն է ներկայացրել «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը՝ Հանձնաժողովի առաջարկը, նախատեսված կրթության կազմակերպիչների, հանրակրթական դպրոցների ուսուցիչների և հակակոռուպցիոն, ինչպես նաև ժողովրդավարության խմբակներ վարողների համար

Այսպիսով, 2024 թվականի կատարողականի թիրախում սահմանված էին հետևյալ կոնկրետ պահանջները՝

- Հակակոռուպցիոն կրթական բաղադրիչի մշակման համար տեխնիկական առաջադրանքը պատրաստվել և հաստատվել է
- Ընտրվել են պիլոտային դպրոցները
- Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը
- Կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված դպրոցներում

Ներկայացված տեղեկատվության ավելի մանրակրկիտ վերլուծությունը ցույց է տալիս, որ՝

- Իրականացվել է «Հասարակագիտություն» առարկայի առարկայական ծրագրի լրամշակումը՝ ներառելով հակակոռուպցիոն բաղադրիչ (N 38-Ն հրաման)
- Մշակվել է «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը
- Պիլոտային կերպով ծրագիրը ներդրվել է Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում

Սակայն չի նշվում, թե կոնկրետ ինչ չափանիշներով են ընտրվել պիլոտային դպրոցները (միայն նշվում է, որ դրանք Տավուշի մարզում են) և չկա որևէ հիշատակում, որ կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված դպրոցներում, որը թիրախային արդյունքներից վերջինն էր և կարևոր նշանակություն ունի ծրագրի արդյունավետության ապագա չափման համար: Բացի այդ, մշակվել է, սակայն դեռևս չի հաստատվել «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը:

Քանի որ ներկայացված տեղեկատվությունը հաստատում է, որ թիրախային արդյունքների միայն մի մասն է իրականացվել և գիտելիքների ելակետային գնահատման մասին ընդհանրապես տեղեկատվություն չի ներկայացվել, գործողությունը գնահատվում է որպես «կատարված է մասնակի»:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Ե ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.4. Մշակել և ներդնել «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համալատ արող մարմին	Մտուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկմա և արդյունք

(մասնավոր նպատակի) մակարդակում					
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	Դպրոցների ուսուցիչների համար վերապատրաստումների ծրագիրը մշակվել և հաստատվել է: Ծրագիրը ներդրվել և գործում է ՀՀ դպրոցների ընդհանուր թվի 50% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Գիտելիքների գնահատման արդյունքներով ապահովվել է տարեկան 40% աճ: :	ԿԳՄ ՄՆ	ԿԿՀ Կրթության տեսչական մարմին ՔՀԿ	Մշակված և հաստատված ծրագիր Վերապատրաստումների զեկույցներ Գիտելիքների գնահատման հաշվե տվյալներ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված եզրափակիչ զեկույցի՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: Մշակված վերապատրաստման ծրագրի հիման վրա կազմակերպվել են շուրջ 1000 ուսուցիչ վերապատրաստումներ ՀՀ մարզերի և Երևանի դպրոցներից: Վերապատրաստումներին մասնակցել են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների «Հասարակագիտություն» առարկան դասավանդող բոլոր ուսուցիչները:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ 2024 թ.-ի կատարողականի թիրախում սահմանված պահանջների համեմատ ներկայացված տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ բացակայող կամ թերի իրականացված բաղադրիչները.

- Չեն նշվում պիլոտային դպրոցների ընտրության չափանիշները
- Չկա հաստատում գիտելիքների գնահատման համակարգի մշակման վերաբերյալ
- Չկա տեղեկատվություն ընտրված դպրոցներում գիտելիքների ելակետային գնահատման իրականացման մասին
- Չեն ներկայացվել գիտելիքների գնահատման արդյունավետության վերաբերյալ տվյալներ

Այսպիսով, գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մասնակի», քանի որ ներկայացված տեղեկատվությունից բխում է, որ դիտարկվող ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները կատարվել են ոչ ամբողջական:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման շրջանակում ներդնել էթիկայի, բարեվարքության և

հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր, մանկավարժական անձնակազմի համար նախատեսել նշված թեմաներով վերապատրաստումներ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	Կրթական ծրագիրը ներդրվել և գործում է ուսումնական հաստատությունների ընդհանուր թվի 30% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում:	ԿԳՄ ՄՆ	ԿԿՀ Կրթության տեսչական մարմին ՔՀԿ	Մշակված և հաստատված ծրագիր Վերապատրաստումների զեկույցներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: Կազմակերպվել է համատեղ հանդիպում-քննարկում ՀՀ ԿԳՄՄՆ, ՄԿՈԻ զարգացման ազգային կենտրոնի և ԿԿՀ-ի աշխատակիցների մասնակցությամբ:

Նույն աղբյուրի համաձայն՝ ԿԿՀ-ն մշակել է «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈԻ ոլորտում» մոդուլի մեթոդական ձեռնարկը, որը քննարկվել և լրամշակվել է ՄԿՈԻ զարգացման ազգային կենտրոնի հետ: Վերը նշված ձեռնարկի հիման վրա կազմվել է վերապատրաստման դասընթացի ծրագիր՝ «Կոռուպցիայի կանխարգելումը կրթության միջոցով» թեմայով, որին մասնակցել է մասնակիցներ ուսումնական հաստատությունների ընդհանուր թվի 30% հաստատություններից, որոնցից կեսը գյուղական համայնքներից:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ 2024 թ.-ի կատարողականի թիրախում սահմանված պահանջների համեմատ ներկայացված տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ բացակայող կամ թերի իրականացված բաղադրիչները.

- Չեն նշվում պիլոտային ուսումնական հաստատությունների ընտրության չափանիշները
- Չկա հաստատում, որ գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է
- Բացակայում է տեղեկատվությունն այն մասին, որ իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են

Այսպիսով, գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մասնակի», քանի որ ներկայացված տեղեկատվությունը վկայում է, որ դիտարկվող ժամանակահատվածի համար բացակայում են թիրախի մի շարք կարևոր բաղադրիչներ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.6. Հետքուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում պետական մարմինների պատվերով իրականացնել հակակոռուպցիոն բնագավառի գիտական հետազոտություններ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԿԳՄ ՄՆ	ԿԿՀ ԱՆ ՔՀԿ	Մշակված և ֆինանսավորված ծրագիր	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: Միջոցառման շրջանակներում ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից, հակակոռուպցիոն բնագավառի ուղղությամբ գիտական հետազոտություններ կատարելու նպատակով՝ 2024 թ.-ի 1-ին կիսամյակում հետքուհական մասնագիտական կրթություն իրականացնող թվով 11 հաստատություններին տրամադրված շուրջ 30 թեմաներից 5 հաստատություններում հաստատվել են մի շարք ատենախոսության թեմաներ³⁴, տարբեր կրթական ծրագրերով իրականացվել և իրականացման փուլում են գտնվում մագիստրոսական թեզեր:

Նույն աղբյուրի համաձայն՝ գիտական հետազոտությունների ֆինանսավորումը իրականացվում է՝ ելնելով կատարվող հետազոտության բնույթից և ֆինանսավորման առանձնահատկություններից:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է**:

³⁴ Սույն գործողության շրջանակներում հաստատված թեմաներն են՝ «Կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական և քրեագիտական բնութագրերը», «Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան, մինչդատական վարույթի առանձնահատկությունները», «Կոռուպցիայի կանխարգելումը ՀՀ-ում և կանխարգելիչ մարմնի դերը», «Կոռուպցիայի կանխարգելման հիմնախնդիրները հանրային իշխանության մարմիններում», «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը, որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև», «Ապօրինի հարստանալու հանցակազմի քրեաիրավական որակման հիմնախնդիրները» և այլն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.7. Ստեղծել հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակ՝ «Հայկական կրթական միջավայր» պորտալում նախատեսելով դրա համար առանձին բաժին

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակարգող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԿԳՄ ՄՆ	ԿԿՀ ԲՈԻՀ ՔՀԿ	Հարթակը ներդրված է և գործում է (2026թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: <https://lib.armedu.am/category/33> կայքում գործում է հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված առանձին բաժին, որում համապատասխան հակակոռուպցիոն թեմատիկ նյութերով համալրելու աշխատանքներ են իրականացվում:

Այսպես, սույն մշտադիտարկման մեթոդոլոգիայի համաձայն, քանի որ ստուգման միջոցը՝ «Հարթակը ներդրված է և գործում է», ապահովված է, գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է»: Միննույն ժամանակ, չնայած այս գնահատականին, հարկ է նշել, որ գործողության թիրախային արդյունքում հստակ նշված է «տեխնիկական բնութագրի մշակում», «տեխնիկական նկարագրի հաստատում» և «ֆինանսական միջոցների հատկացում», սակայն կատարողականի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը բացարձակապես չի անդրադառնում այս կետերին: Նաև անհասկանալի է «գործողության կատարման համար ֆինանսավորում» նախատեսելը որպես գործողության առանձին բաղադրիչ: Ռազմավարության իրականացման համար ֆինանսավորման նախատեսումը չի կարող դիտարկվել որպես առանձին գործողություն, քանի որ ֆինանսավորումը գործողության իրականացման նախապայման է և ոչ թե արդյունք:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.8. Բարձրագույն ուսումնական հաստատություններում վերջիններիս համաձայնությամբ մշակել և ներդնել ուսանողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն դասընթաց/բաղադրիչ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակարգող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԿԳՄ ՄՆ	ԿԿՀ ԲՈԻՀ ՔՀԿ	Տիպային մշակված դասընթաց	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: ՀՀ պետական բուհերում, մասնավորապես, Երևանի պետական, Մ. Հերացու անվան պետական բժշկական, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի ազգային ագրարային, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական համալսարաններում, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում և ՀՀ պետական կառավարման ակադեմիայում տարբեր կրթական ծրագրերի ուսումնական պլաններով մշակված և 2022-2023 ուսումնական տարում ներդրված են հակակոռուպցիոն բնագավառին առնչվող (կամընտրական կամ պարտադիր) դասընթացներ: Միջոցառման շրջանակներում, հակակոռուպցիոն դասընթացների թեմաներին վերաբերող միասնական մոտեցում ցուցաբերելու նպատակով, վերոնշյալ բուհերի հետ համագործակցության արդյունքում 2024 թվականին մշակվել է տիպային դասընթացի մոդել, որն ներկայացվել է բուհերին՝ վերջիններիս համաձայնությամբ պարտադիր ուսումնական ծրագրի մեջ ընդգրկելու համար:

Մշտադիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ դասընթացի մշակման շրջանակում կազմակերպվել են վերապատրաստումներ բուհերի դասախոսական կազմի համար: Սակայն բուհերին չեն տրամադրվել խորհրդատվական աջակցություն դասընթացների մշակման հարցում: Իրավիճակից բխող մտահոգությունը կարող է լինել այն, որ ԿԿՀ-ի, ԿԳՄՄՆ-ի և բուհերի միջև՝ այս ուղղությամբ համագործակցությունը թույլ է, իսկ հաշվի առնելով նեղ մասնագիտացումը այդ հարցում՝ բուհերը կարող են բավարար չափով վերապատրաստված չլինել և դասընթացը արդյունավետ չլինել:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.9. Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն վերապատրաստումների ծրագիր

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համալսարան	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	Բարձրագույն ուսումնական հաստատություններում պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիրը մշակվել և հաստատվել է:	ԿԳՄ ՄՆ	ԿԿՀ ԲՈՒՀ ՔՀԿ	Վերապատրաստումների զեկույցներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ: Ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ՍԱԲՈՋԱԿԱՆ:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** ԿԿՀ-ի կողմից բուհերին տրամադրած՝ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ծրագրի շրջանակներում, միջազգային և տեղական համանման փորձի հիման վրա մշակված «Կոռուպցիայի կանխարգելումը բուհական համակարգում» և «Վարքագծի կանոնները» թեմաներով բուհական մոդուլների նախագծերը ուսումնասիրվել, լրամշակվել և վերջիններիս կողմից, որպես պիլոտային ծրագիր ներդրվել են բոլոր կրթական ծրագրերի պարտադիր կամ կամընտրական դասընթացների ցանկում:

Մշտադիտարկման խմբի կողմից 2024 թվականի կատարողականի թիրախում սահմանված պահանջների համեմատ ներկայացված տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս բացակայող կամ թերի իրականացված հետևյալ բաղադրիչներ՝

- Չեն ներկայացվել պիլոտային բուհերի ընտրության հստակ չափանիշները
- Թեև իրականացվել են վերապատրաստումներ բուհերում, սակայն չկա տեղեկատվություն թե Երևանի և ՀՀ 4 մարզերի որ բուհերում են իրականացվել պիլոտային ծրագրերը, ինչպես սահմանված էր թիրախային արդյունքում
- Բացակայում են (հաշվետվության մեջ այդ մասին նշված չէ, ինչպես նաև առկա չէ բաց աղբյուրներում) վերապատրաստումների վերաբերյալ զեկույցները, որոնք սահմանված էին որպես ստուգման միջոց

Այսպիսով, թեև վերապատրաստումների քանակական ցուցանիշները կատարվել են, սակայն բացակայում է դրանց որակական գնահատումը: Բացակայում են բուհերում կազմակերպված վերապատրաստումների արդյունավետության չափման գործիքները: Չեն ստուգվել ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլինեք համադրել արդյունքները: Բացի այդ, ներկայացված տեղեկատվության մեջ չի հստակեցվում, թե արդյո՞ք վերապատրաստման ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները պաշտոնապես ընդունելի են եղել կամ համաձայնեցվել են պատասխանատու գերատեսչության հետ:

Ներկայացված փաստերը ցույց են տալիս, որ ապահովվել է միայն մասնակի արդյունք, բայց բացակայում են ապացույցներ, որ վերապատրաստումներն իրապես նպաստել են ռազմավարական նպատակի իրագործմանը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ, այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ հզորացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.10. Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներդնել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմիններում ուսանողական պրակտիկայի և փորձնակության անցկացման ծրագրեր, նախատեսել հակակոռուպցիոն ոլորտում արտասահմանյան ուսումնական հաստատություններում սովորելու համար կրթաթոշակների տրամադրման հնարավորություններ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	Հակակոռուպցիոն մարմինների և ուսումնական հաստատությունների միջև համագործակցության հուշագրերը ստորագրված են: Ուսանողական պրակտիկայի և փորձնակության գործնական ծրագրերը մշակված և հաստատված են:	ԿԳՄ ՍՆ	ԿԿՀ ԲՈՒՀ ՔՀԿ	Ստորագրված են հուշագրերը Հուշագրերի հիման վրա իրականացվում են ուսանողական պրակտիկայի և փորձնակության ծրագրեր	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: Ստորագրվել են համագործակցության հուշագրերը ԿԿՀ-ի և երկու բուհերի միջև. ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան:

Մշտադիտարկման խմբի կողմից 2024 թվականի կատարողականի թիրախում սահմանված պահանջների համեմատ ներկայացված տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ

հուշագրերը կնքվել են միայն ԿԿՀ-ի հետ, այն ինչ գործողությամբ նախատեսված էր մեկից ավելի հակակոռուպցիոն մարմինների հետ կնքում:

Համաձայն մշտադիտարկման մեթոդաբանության, գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մեծամասամբ», քանի որ հուշագրերը կնքվել են միայն ԿԿՀ-ի հետ, այլ հակակոռուպցիոն մարմիններ այս գործընթացում ներգրավված չեն եղել:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Ե ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.11. Նպաստել ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացմանը՝ դպրոցներում հիմնելով աշակերտական հակակոռուպցիոն ակումբներ, իսկ ԲՈՒՀ-երում՝ Հակակոռուպցիոն լաբորատորիաներ (R&D)՝ հակակոռուպցիոն հետազոտություններ, իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն անցկացնելու և հակակոռուպցիոն ծրագրերին հետազոտական և անալիտիկ բնույթի այլ աջակցություն տրամադրելու նպատակով

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակարգող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	ՀՀ դպրոցների ընդհանուր թվի առնվազն 30% հաստատություններում հակակոռուպցիոն ակումբների հիմնում: ԲՈՒՀ-երի ընդհանուր թվի առնվազն 30% հաստատություններում հակակոռուպցիոն լաբորատորիաների առկայություն:	ԿԳՄ ՄՆ	ԿԿՀ ԲՈՒՀ ՔՀԿ	Մշակված ծրագրեր Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Ե ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** Հանրակրթական ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման նպատակով, վերահանված կարիքների հիման վրա, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից մշակվել է «Հակակոռուպցիոն կրթություն» խմբակի ծրագրի նախագիծ 11-րդ դասարանի սովորողների համար: Ծրագիրը 2025 թ.-ին կներդրվի հանրակրթական

ուսումնական հաստատություններում՝ որը կնպաստի հանրակրթական ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացմանը: ԲՈՒՀ-երում հակակոռուպցիոն լաբորատորիաների (R&D)՝ հակակոռուպցիոն հետազոտությունների, իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն անցկացնելու և հակակոռուպցիոն ծրագրերին հետազոտական և անալիտիկ բնույթի այլ աջակցություն տրամադրելու նպատակով վեր է հանվել հակակոռուպցիոն բնագավառի ուղղությամբ գիտական հետազոտությունների իրականացման շուրջ 30 թեմաներ, որոնց ուղղությամբ հետազոտություններ կատարելու նպատակով դրանք տրամադրվել են բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնող թվով 11 ուսումնական հաստատությունների, որը կազմում է բուհերի շուրջ 30%-ը: Բուհերում իրականացվում է համապատասխան հետազոտական աշխատանքները:

Մշտադիտարկման խմբի կողմից 2024 թ.-ի կատարողականի թիրախում սահմանված պահանջների համեմատ ներկայացված տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ բացակայող կամ թերի իրականացված բաղադրիչներ՝

- Չնայած մշակվել է «Հակակոռուպցիոն կրթություն» խմբակի ծրագրի նախագիծ, սակայն չեն ստեղծվել հակակոռուպցիոն ակումբներ դպրոցների ընդհանուր թվի 30% հաստատություններում, ինչպես պահանջվում էր թիրախային արդյունքում: Ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ծրագիրը նախատեսվում է ներդնել միայն 2025 թվականին
- ԲՈՒՀ-երում հետազոտություններ իրականացնելու ուղղությամբ տրամադրվել են թեմաներ, սակայն չեն ստեղծվել հակակոռուպցիոն լաբորատորիաներ՝ նշելով, որ «հետազոտությունների հումանիտար բնույթի առանձնահատկությունը չի ենթադրում առանձին ենթակառուցվածքների ստեղծում»: Փաստացի, այս մեկնաբանությունը հակասում է գործողության հիմնական նպատակին, որն ուղղակիորեն նշում է «ԲՈՒՀ-երում՝ հակակոռուպցիոն լաբորատորիաներ» ստեղծելու մասին

Մեթոդոլոգիայի համաձայն, գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մասնակի», քանի որ՝ դպրոցներում հակակոռուպցիոն ակումբների և ԲՈՒՀ-երում հակակոռուպցիոն լաբորատորիաների ստեղծումը, փաստացի չեն իրականացվել: Ավելին, ԲՈՒՀ-երի մասով տրված մեկնաբանությունները փորձում են վերաձևակերպել գործողության էությունը՝ լաբորատորիաների ստեղծումից անցում կատարելով պարզապես հետազոտությունների իրականացմանը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.12. Մշակել և ներդնել հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագիր, այդ թվում՝ հանրային իրազեկման ծրագրի իրականացման արդյունքների գնահատման համակարգ

Միջանկյալ արդյունքներ՝	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող	Համա կատարող	Մտուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման և արդյունք
------------------------	---	---------	--------------	------------------------	--------------------------

ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում		մարմին	մարմին		
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	Հասարակությունը հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագրով սահմանված պարբերականությամբ տեղեկացվում է հակակոռուպցիոն քաղաքականության պետական մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների և պարտականությունների, ազդարարման համակարգի, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության, իրական շահառուների, գնումների և այլ թիրախային թեմաների վերաբերյալ, հետևողականորեն քայլեր են ձեռնարկվում հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ	ԿԳՄ ՄԼ	ԿԿՀ ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններ Իրավապահ մարմիններ ՔՀԿ Հանրային հեռարձակողի խորհուրդ Մասնավոր հեռարձակողներ (համաձայնությամբ)	Տեխնիկական առաջադրանքի առկայություն: Հանրային կարծիքի ուսումնասիրություն: Մշակված և կիրառվող ծրագրեր: Մշակված և կիրառվող գնահատման համակարգ:	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱԼ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ**: Արդարադատության նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 819-Լ հրամանով հաստատվել է 2024-2026 թվականների հաղորդակցման հայեցակարգը և

գործողությունների ծրագիրը և հրապարակվել է ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը³⁵:

Ի կատարումն կատարողական թիրախի՝ Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրությունների մեթոդաբանության մշակման և հաստատման՝ ԿԿՀ-ը 18.10.2024 թ.-ի թիվ 07-Լ որոշմամբ, հաստատվել է հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությունը և հարցաշարը: Միաժամանակ, 2-րդ կիսամյակի կատարողականի թիրախը՝ գնահատման զեկույցի հրապարակումը, ԿԿՀ-ի կողմից առաջարկվել է տեղափոխել 2025 թվականի 1-ին կիսամյակ:

Այսպես, 2024 թ.-ի կատարողականի թիրախում սահմանված պահանջների համեմատ ներկայացված տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրականացվել է միայն Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրությունների մեթոդաբանությունը մշակումը և հաստատումը (ԿԿՀ-ի 18.10.2024 թ.-ի թիվ 07-Լ որոշմամբ): Սրան զուգահեռ, բացակայող կամ թերի իրականացված բաղադրիչներն են՝

- Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքը չի մշակվել և հաստատվել (ստուգման միջոց՝ «Տեխնիկական առաջադրանքի առկայություն» - բացակայում է)
- Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագիրը չի մշակվել և հաստատվել (ստուգման միջոց՝ «Մշակված և կիրառվող ծրագրեր» - բացակայում է)
- Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրերի արդյունքների պարբերական գնահատման համակարգը չի մշակվել և հաստատվել (ստուգման միջոց՝ «Մշակված և կիրառվող գնահատման համակարգ» - բացակայում է)
- Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը չի ավարտվել, և արդյունքների գնահատման զեկույցը չի հրապարակվել (ստուգման միջոց՝ «Մշակված և հրապարակված զեկույց» - բացակայում է, նշվում է, որ ուսումնասիրությունը դեռևս ընթացքի մեջ է, և արդյունքները նախատեսվում է ամփոփել 2025 թվականին)

Մեթոդոլոգիայի համաձայն, գործողությունը գնահատվում է որպես «կատարվել է մասնակի», քանի որ ստուգման միջոցների և սահմանված թիրախային արդյունքների կատարողականի գնահատման հիման վրա ակնհայտ է, որ դիտարկվող ժամանակահատվածի համար գործողությունը կատարվել է մասամբ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.13. Զարգացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունները հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում

Միջանկյալ արդյունքները՝	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող	Համա կատարող	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
-------------------------	---	---------	--------------	------------------------	------------------------

³⁵ <https://www.moj.am/page/583>

ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում		մարմ ին	մարմ ին		
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	2024 թվականի գործողության համար սահմանված չէ ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԿԿՀ	Պետ ական կառա վարմ ան համա կարգ ի մարմ ին ՔՀԿ	2024 թվականի գործողության համար ստուգման միջոց նախատեսված չէ:	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն՝ ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: 2022 թվականի հունիսի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ը անցկացված, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող, «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» Թվինինգ ծրագրի շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներն անցել են վերապատրաստման դասընթացներ: Որպես հատուկ նպատակ՝ ծրագիրն ուղղված է եղել աջակցելու կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կրթական ծրագրերի և հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը: ԵՄ թվինինգ ծրագրով ներգրավված փորձագետների կողմից գնահատվել են Հանձնաժողովի վերապատրաստում անցած աշխատակիցների կարողությունները և գիտելիքները:

Հարկ է նշել, որ սույն գործողության կատարումը նախատեսված էր 2024 թվականի երկրորդ կիսամյակին, ինչը ենթադրում է, որ գործողության կատարմանն ուղղված միջոցառումները պետք է իրականացվեին հիշյալ ժամանակահատվածում: Բացի այդ, առկա չէ տեղեկատվություն այն մասին, թե 2024թ. -ին նախատեսված կատարողական թիրախը՝ կարողությունների հզորացման ծրագիրը, կամվել է, թե՞ ոչ: Նաև պարզ չէ, թե ԵՄ թվինինգ ծրագրով ԿԿՀ-ի վերապատրաստում անցած աշխատակիցների կարողությունների և գիտելիքների գնահատումը ինչքանով կարող է դիտարկվել որպես ԿԿՀ-ի ռեսուրսների գնահատում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3.14. Հզորացնել ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների ցանցերի կարողությունները՝ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆոնդիայթայթման իրականացման նպատակով

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համալսարան	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Ռազմավարության Գործողությունների ծրագրով միջանկյալ արդյունք կամ մասնավոր նպատակ նախատեսված չէ	2024 թ. ավարտին հաստատվել և ֆինանսավորվել է ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ծրագիրը:	ԿԿՀ	Պետական կառավարման համալսարանի մարմին ՔՀԿ	Մշակված և կիրառվող ծրագրեր:	Գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ**: ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի բարեվարքության ծրագիրը նախագծել և ԿԿՀ հաստատմանն է ներկայացրել ՔՀԿ-ների կարողությունների զարգացման համար կազմակերպվող մրցույթի հայտարարությունը, որը հաստատվել է ԿԿՀ կողմից: Հայտարարված մրցույթի արդյունքում ընտրվել է հաղթող կազմակերպություն, որը 2025 թվականից կմեկնարկի հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ծրագիրը՝ ներառելով նաև ֆոնդհայթայթման մեխանիզմները:

Միևնույն ժամանակ, ԿԿՀ-ը հայտնել է, որ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում ՔՀԿ-ների ֆոնդհայթայթման կարողությունների զարգացումը դուրս է իրենց իրավասությունների շրջանակներից, ուստի այն չի կարող ամբողջովին կատարված լինել Հանձնաժողովի կողմից:

Մշտադիտարկման արդյունքներով պարզ դարձավ, որ թեև կատարվել են որոշակի գործողություններ, սակայն դրանք չեն բխում Գործողությունների ծրագրից: Հիշյալ գործողության կատարող մարմինը՝ ԿԿՀ-ն է, իսկ համակատարող մարմինը՝ պետական կառավարման մարմինները: ՔՀԿ-ները կարող են միայն օժանդակիչ դեր ունենալ: Ընդ որում, հիշյալ մարմինները մասնակցել են Ռազմավարության և Գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներին, և հնարավորություն են ունեցել ներկայացնել մեթոդական նկատառումներ այդ փուլում:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**:

«ՀԱՎԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	14	100 %
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	4	29%
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	1	7%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	8	57%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	1	7%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 1-ը համապատասխանում էր սահմանված հատկանիշներին, որոնց գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

IV. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.1. Գործարար ոլորտում ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր՝ զարգացնելով կորպորատիվ կառավարման մշակույթը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Գործարար ոլորտում բարեկարքության ամրապնդում	Կանոնագիրքը հաստատված է իրավասու մարմնի կողմից: Կանոնագրքում ներառված են մոնիթորինգի, հաշվետվողականության, թափանցիկության և վերահսկողության մեխանիզմներ:	Էկոնոմիկայի նախարարություն	ԱՆ Կորպորատիվ կառավարման կենտրոն ՔՀԿ	Իրավական ակտի առկայություն	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** Մշակվել է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի նախագիծը, որը լրամշակվել է 2023 թ.-ին ընդունված G20/SՀԶԿ կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա: Կանոնագրքի նախագծում ներառվել են նաև դրույթներ Կանոնագրքի վերահսկողության մասով: Մասնավորապես, սահմանվել է, որ Կանոնագրքին հետևելը վերահսկվում է կանոնավոր հաշվետվությունների և բացահայտումների միջոցով, որոնք պետք է ներառված լինեն տարեկան հաշվետվությունում:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ այս պահին գործող կարգավորումներով Կանոնագրքին միանալը պարտադիր է միայն ցուցակված ընկերությունների համար՝ բորսայի կանոններով, նույն կանոններով սահմանված են վերահսկողության մեխանիզմներ, այդ թվում արժեթղթերի ցուցակման կասեցում և ապացուցակում:

Էկոնոմիկայի նախարարի 30.07.2024թ. N 1955-Ն հրամանով հաստատվել է Կորպորատիվ կառավարման նոր կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի օգոստոսի 30-ին:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.2. Պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր, կատարելագործել հաշվետվողականության մեխանիզմները

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Գործարար ոլորտում բարեվարքության ամրապնդում	Իրավական ակտով սահմանված է պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար նոր կորպորատիվ կառավարման կանոնադիրքը պարտադիր կիրառելու պահանջ	ԱՆ Էկոնոմիկայի նախարարություն	Ֆինանսների նախարարություն	Իրավական ակտի առկայություն (2025թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Էկոնոմիկայի նախարարության կողմից իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները մեկնարկել են:

Այսպիսով, քանի որ իրավական ակտը դեռևս գտնվում է մշակման փուլում, գործողության կատարման կարգավիճակը գնահատվում է «կատարված է մասնակի»:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.3. Պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգեր

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Գործարար ոլորտում բարեվարքության ամրապնդում	Ռիսկերի կառավարման և գնահատման մեթոդաբանությունը հաստատված է: Օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Կոռուպցիայի կանխարգելման	ԿԿՀ	ԱՆ	Իրավական ակտի առկայություն	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

	հանձնաժողովի մասին» և այլ հարակից օրենքներում հավանության է արժանացել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ԱԺ-ի ընդունմանը: Մեթոդաբանությունը պիլոտային կարգով փորձարկված է առնվազն 3 տարբեր կազմակերպչական ձև ունեցող կազմակերպություններում				
--	--	--	--	--	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մեծամասամբ**: Մշակվել են ««ԿԿՀ-ի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը: Մշակվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը, որը պիլոտային կարգով գործարկվել է պետական մասնակցությամբ մեկ ընկերությունում («Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (ԱՆԻՖ)) և պետական (համայնքային) ոչ առևտրային երկու կազմակերպություններում:

Մշտադիտարկման խմբի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել հետևյալը՝

- Հանձնաժողովը մշակել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը պետք է ԿԿՀ-ին վերապահի համապատասխան լիազորություններ:
- Փաթեթը ներկայացվել է ԱՆ, այնուհետև լրամշակվել և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:
- Օրենսդրական փաթեթը դեռևս չի հաստատվել Կառավարության կողմից և չի ներկայացվել ԱԺ:
- Մեթոդաբանությունը մշակվել է, բայց չի հաստատվել, քանի որ դեռևս բացակայում է համապատասխան իրավական հիմքը:
- Մեթոդաբանության նախագիծը պիլոտային կարգով փորձարկվել է 3 կազմակերպությունում:

Գործողության կատարողականի հետ կապված իրավական ռիսկերը.

- Օրենսդրական մակարդակում ԿԿՀ-ն չունի համապատասխան լիազորություն՝ կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանության մշակման և հաստատման համար:

- Չնայած այդ հանգամանքին, ԿԿՀ-ն մշակել է մեթոդաբանություն և պիլոտային կարգով այն փորձարկել է երեք կազմակերպություններում:
- ԿԿՀ-ն ևս հաստատում է այս իրավական խնդիրը, նշելով որ «Կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանությունը 2024 թվականին Հանձնաժողովի կողմից չի հաստատվել, քանի որ օրենսդրական մակարդակում դեռևս Հանձնաժողովին վերապահված չէ մեթոդաբանության մշակման և հաստատման լիազորությունը»:

Մինչև համապատասխան օրենսդրական փոփոխությունների ընդունումը, ԿԿՀ-ի կողմից մեթոդաբանության մշակումը և պիլոտային ներդրումն ունի իրավական խնդրահարույց հիմք: Հանձնաժողովը փաստացի գործել է ոլորտում, որտեղ օրենսդրորեն չունենալով վերապահված լիազորություն:

Չնայած օրենսդրական լիազորության բացակայությանը, ԿԿՀ-ի կողմից կատարված աշխատանքները կարող են դիտարկվել որպես նախապատրաստական և փորձնական գործողություններ:

Այսպիսով, գործողության կատարողականի գնահատումը համապատասխանում է «կատարված է մասնակի» չափանիշին:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.4. Հգորացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ կարողությունները՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության համատեքստում

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համալսարան	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Գործարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում	ՄԻՊ համապատասխան ստորաբաժանման թափուր հաստիքները համալրված են:	ՄԻՊ	ՔՀԿ	Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Համալրվել են ՄԻՊ գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ստորաբաժանման հաստիքները՝ երկուսով:

Մշտադիտարկման արդյունքում պարզվեց, որ վերապատրաստումներ չեն իրականացվել:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.5. Բարձրացնել բիզնես համայնքի իրազեկվածության մակարդակն իրենց իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության և հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակարգող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Գործարարների իրավունքների պաշտպանության և մեխանիզմների կատարելագործում	2024 թվականի գործողության համար սահմանված չեն ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	Էկոնոմիկայի նախարարություն	ԱՆ ՄԻՊ ՔՀԿ	Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: 2024 թվականի 2-րդ կիսամյակում կազմակերպված «Հայաստանի նոր Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը. կիրարկման և հարկադրանքի հարցեր» թեմայով աշխատաժողովը, ԱՆ-ի նախաձեռնությամբ ԻՀԱ-ի կողմից և ԱՆ-ի մասնակցությամբ իրականացված «Ազդարարի՛ր, Հայաստան» ծրագիրը և ԱՆ-ի կողմից կազմակերպված և Էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ «Հակակոռուպցիոն իրազեկման շաբաթի» միջոցառումն ուղղված էր բիզնես համայնքի շրջանում իրազեկվածության բարձրացման և իրենց իրավունքների արդյունավետ հստակեցմանը:

Ըստ նույն աղբյուրի՝ 2024 թ.-ի ընթացքում ՄԻՊ-ի աշխատակազմի գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության բաժինը իրագործել է գործարարություն իրականացնող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքներ, ընդգրկելով նաև ԶԼՄ-ներին:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ ԻՀԱ-ի կողմից ԱՆ-ի հետ համագործակցությամբ ազդարարման, բարեվարքության, ինչպես նաև այդ հարցերում գործարար ոլորտին առնչվող

առանձնահատկությունների և կարգավորումների վերաբերյալ Երևանում և ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի մարզերում կազմակերպվել են վերապատրաստումներ՝ 72 մասնավոր կազմակերպությունների 101 ներկայացուցիչների մասնակցությամբ³⁶:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.7. Ներդնել իրական շահառուների բացահայտման ինստիտուտի արդյունավետությունը ապահովող մեխանիզմներ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համալսարան	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման ինստիտուտի զարգացում	Իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ-ի ընդունմանը: Ներդրված և կիրառվում են իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգերը: Մշակված և հաստատված են իրավաբանական անձանց ռիսկայնության որոշման մեթոդաբանությունը և տեխնիկական կանոնակարգերը:	ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր	ԱՆ ԿԿ ՔՀԿ	Իրավական ակտի առկայություն	Գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Մշակվել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ

³⁶ <https://moj.am/article/4163>

ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը: Նախագծերը ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Ստացված կարծիքների հիման վրա նախագծերը լրամշակվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Միաժամանակ, նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության թվայնացման խորհրդի կողմից:

Համաձայն նույն աղբյուրի՝ նախագծերը գտնվում են լրամշակման փուլում և առաջիկայում կրկին կներկայացվեն Վարչապետի աշխատակազմ: Նախագծերով փաթեթով հստակեցվում է, որ իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության ստուգումն Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից իրականացվում է վարչական վարույթներ հարուցելու միջոցով: Նախագծով նաև սահմանվում են վարչական վարույթների առանձնահատկությունները, տեսակները, իրավաբանական անձանց ռիսկայնության չափանիշները (red flagging):

Մշտադիտարկման շրջանակներում կատարված վերլուծությունն ըստ թիրախային բաղադրիչների.

- 1. Միասնական կառուցակարգերի ներդրում: Արդյունք՝ միասնական կառուցակարգերի ներդրման իրավական հիմքը ձևավորված չէ, քանի որ.*
 - Թիրախը հստակ պահանջում էր արդեն իսկ «ներդրված» կառուցակարգեր
 - Փաստացի առկա են միայն նախագծային փաստաթղթեր, որոնք մշակվել և շրջանառվել են
 - Նախագծերը դեռ չեն ստացել վերջնական հաստատում
- 2. Մեթոդաբանության և տեխնիկական կանոնակարգերի մշակում: Այս թիրախային բաղադրիչի մասով որևէ առաջընթաց չի արձանագրվել, քանի որ.*
 - Ներկայացված զեկույցում բացակայում է որևէ տեղեկատվություն իրավաբանական անձանց ստուգման մեթոդաբանության մշակման մասին
 - Չկա հիշատակում տեխնիկական կանոնակարգերի պատրաստման վերաբերյալ
- 3. Ուղեցույցում փոփոխությունների կատարում: Այս թիրախային բաղադրիչի մասով ևս որևէ առաջընթաց չի արձանագրվել, քանի որ.*
 - Հաշվետվությամբ ներկայացված չէ որևէ փաստական հիմնավորում, որ ԿԿՀ-ի կողմից ընդունված ուղեցույցում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ
- 4. Իրական շահառու հանդիսանալու բոլոր հիմքերը սահմանված չեն: Այս բաղադրիչի մասով ևս առաջընթաց չի արձանագրվել*

Այսպիսով, թեև որոշակի նախապատրաստական աշխատանքներ կատարվել են օրենսդրական նախագծերի մշակման ուղղությամբ, սակայն դրանք ներկայացնում են միայն գործընթացի սկզբնական փուլը և էականորեն թերի են թիրախի ամբողջական իրականացման տեսանկյունից: Թիրախի երեք հիմնական բաղադրիչներից ոչ մեկը լիարժեք չի իրականացվել, իսկ երկու

բաղադրիչների՝ մեթոդաբանության մշակման և ուղեցույցի փոփոխության վերաբերյալ զեկույցում տեղեկատվություն չկա:

Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ստուգման կառուցակարգերի ներդրման թիրախային գործողությունը հստակորեն չի հասել այն մակարդակին, որն անհրաժեշտ է «մասնակի կատարված» գնահատականի համար: Ուստի, հիմնվելով ներկայացված տեղեկատվության վրա և համաձայն մշտադիտարկման մեթոդաբանության, գործողությունը գնահատվում է որպես «Կատարված չէ»:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.8. Արդիականացնել և կատարելագործել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը և կարգավորումները

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համալստարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման ինստիտուտի զարգացում	Կատարելագործված և արդիականացված են գործող էլեկտրոնային գործիքակազմերը կամ ներդրված են նոր էլեկտրոնային գործիքակազմեր: Վերջիններս կիրառվում են պրակտիկայում:	ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր	ԱՆ ԲՏԱ ԿԿՀ Կենտրոնական դեպոզիտարիա ՔՀԿ	Գործարկվող էլեկտրոնային գործիքներ Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Մշակվել և քննարկման է ներկայացվել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Օրենսդրական նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության թվայնացման խորհրդի կողմից: Ներկայումս այն գտնվում է լրամշակման փուլում և առաջիկայում կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:

Նույն աղբյուրի համաձայն՝ ընթացքի մեջ են տեղեկատվական նոր համակարգի ստեղծման աշխատանքները, որը փոխարինելու է e-register.am համակարգին ձեռնարկատիրական գործունեության գրանցման գործառույթի իրականացման հարցում և կարող է ծառայել որպես հարթակ՝ ձեռնարկատիրական գործունեության հետ կապված բոլոր գործառնությունների իրականացումն ապահովելու նպատակով:

Մշտադիտարկման շրջանակներում կատարվել է վերլուծություն ըստ հետևյալ թիրախային բաղադրիչների.

- 1. Իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի արդիականացում և արդյունավետ գործարկում:** Համակարգը պետք է ապահովեր տվյալների մշակումը, վերլուծությունը, որոնումը, ծանուցումների ինքնաշխատ ուղարկումը, ռիսկային իրավաբանական անձանց նշումը (red flagging) և վերլուծական, մեծածավալ տվյալների գեներացումը:

Փաստացի կատարողական

- Մշակվել են օրենսդրական նախագծեր, որոնք սահմանում են էլեկտրոնային եղանակով վարչական վարույթ իրականացնելու հիմքերը
- Նախագծերը ներկայացվել են, բայց դեռևս չեն ընդունվել
- Ընթացքի մեջ են տեղեկատվական համակարգի կատարելագործման աշխատանքները
- Համակարգում փաստացի դեռևս չեն ներդրվել տվյալների մշակման, վերլուծության, որոնման և այլ նախատեսված գործառույթներ

Արդյունք. Այս բաղադրիչը փաստացի չի իրականացվել, քանի որ ոչ միայն չեն ընդունվել անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները, այլև տեղեկատվական համակարգի արդիականացումը չի իրականացվել:

- 2. Գործնական խնդիրների լուծում:** Պահանջվում էր. ա) բացառել համակարգի տեխնիկական խափանումները, բ) ապահովել օրենսդրությամբ պահանջվող տվյալների պարտադիր լրացումը, գ) ներդնել խելացի գործիքներ, դ) հնարավոր դարձնել ֆիզիկական անձանց առցանց լիազորումը:

Փաստացի կատարողական

- Ներկայացված հաշվետվության մեջ բացակայում է որևէ տեղեկատվություն այս խնդիրների լուծման վերաբերյալ
- Չկա տեղեկատվություն տեխնիկական խափանումները բացառելու նպատակով ձեռնարկված գործողությունների մասին
- Չկա տեղեկատվություն խելացի գործիքների ներդրման մասին
- Չկա տեղեկատվություն առցանց լիազորման մեխանիզմի ներդրման մասին

Արդյունք. Այս բաղադրիչի մասով առաջընթաց չի արձանագրվել, կամ առնվազն այն ներկայացված չէ հաշվետվությունում:

- 3. Բաց տվյալների և բաց աղբյուրների ստանդարտների ներդրում:** Իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը պետք է գործեր բաց տվյալների, բաց աղբյուրների ստանդարտներով, օգտագործողին հարմար և մեքենայական ընթերցվող ձևաչափով:

Փաստացի կատարողական

- Բացակայում է որևէ տեղեկատվություն բաց տվյալների և բաց աղբյուրների ստանդարտներով համակարգի գործարկման մասին
- Չկա տեղեկատվություն օգտագործողին հարմար և մեքենայական ընթերցվող ձևաչափի կիրառման մասին

Արդյունք. Այս բաղադրիչի մասով կատարողական չի արձանագրվել:

Այսպիսով, իրականացվել են միայն նախնական, օրենսդրական նախագծման աշխատանքներ, որոնք դեռևս չեն հանգեցրել փաստացի համակարգային փոփոխությունների: Թեև հաշվետվությամբ գործողությունը գնահատվել է որպես «կատարված է մասնակի», սակայն առկա փաստերը և տեղեկատվությունը չեն բավարարում մասնակի կատարված լինելու շեմը: Ուստի, գործողությունը գնահատվում է որպես «Կատարված չէ»:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.9. Բարձրացնել հարկային վարչարարության արդյունավետությունը, կատարելագործել սովերային տնտեսության դեմ պայքարի գործիքակազմը և մեղմացնել բիզնես-հարկային մարմին փոխհարաբերություններում սուբյեկտիվիզմը ու կոռուպցիոն ռիսկերը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համա կատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկմա և արդյունք
Հարկային և մաքսային ոլորտներում վարչարարության մեխանիզմների կատարելագործում	Առկա գործիքակազմը կատարելագործված է կամ ներդրված են նոր «խելացի» հակակոռուպցիոն էլեկտրոնային գործիքներ:	ՀՀ ՊԵԿ	ԲՏԱ	Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ:** 16.04.2024 թ.- ից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված հարկային մարմնի քննությանը ենթակա հոդվածներով հարկ

վճարողների պաշտոնատար անձանց կատարած իրավախախտումների գործերով վարույթները հարուցվում և վարվում են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգի միջոցով: Մասնավորապես՝ վարույթի շրջանակում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում, համակարգ ներբեռնված ցանկերում ներառված հարկ վճարողներն էլեկտրոնային եղանակով ծանուցվում են հարկային մարմնի կողմից՝ վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ, հնարավորություն ունենում ներկայացնել դիրքորոշում՝ այդ կերպ իրացնելով լաված լինելու իրավունքը: Մի քանի աղբյուրից հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները վերադարձվում են այն ֆիզիկական անձանց, որոնք մի քանի գործատուների մոտ աշխատում են որպես վարձու աշխատող, կամ, միաժամանակ, հանդիսանում են վարձու աշխատող և անհատ ձեռնարկատեր կամ նոտար ու նրանց համար հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարի ընդհանուր գումարը գերազանցում է սահմանված առավելագույն չափը:

Այսպիսով, կատարողական թիրախի շրջանակներում ներդրվել և գործարկվել են երկու էլեկտրոնային համակարգեր՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների համակարգը և սոցիալական վճարների գերավճարների վերադարձման ինքնաշխատ համակարգը: Այս առումով կարելի է փաստել, որ թիրախի ձևական պահանջները բավարարված են: Սակայն ներդրված համակարգերի արդյունավետության և գործառնության որակի տեսանկյունից առկա են մտահոգիչ խնդիրներ: Մասնավորապես, էլեկտրոնային ծանուցման համակարգը չի ապահովում պատշաճ ծանուցման հնարավորություն, ինչը վտանգում է անձանց՝ լաված լինելու իրավունքը: Տեխնիկական առումով համակարգը կարող է չապահովել փաստաթղթերի կազմման ժամանակագրական ճշգրտությունը, ինչը կարող է առաջացնել չարաշահումներ:

Վերը նշված խնդիրները վկայում են, որ թեև էլեկտրոնային համակարգերի ներդրումն ինքնին կարող է դրական համարվել, սակայն առանց պատշաճ վարչարարական երաշխիքների, դրանք կարող են ստեղծել նոր ռիսկեր և չարաշահումների հնարավորություններ: Հետևաբար, նոր համակարգերը պահանջում են հետագա կատարելագործում՝ վարչարարության սկզբունքների և քաղաքացիների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով: Ուստի, գործողությունը գնահատվում է «մասնակի կատարված»:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.10. Կատարելագործել հանրային գնումների ոլորտում շահերի բախման և հակակոռուպցիոն կառուցակարգերը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համա կատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Պետական գնումների գործընթացում բարելավրության,	Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Պետական	Ֆինանսներ ի նախ	ԱՆ ԲՏԱ	Իրավական ակտի առկայություն (2025թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

հաշվետվողականության և թափանցիկության կատարելագործում	գնումների մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:	արարությունը	ԿԿՀ		
--	---	--------------	-----	--	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: Ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակման գործընթաց: Նախագծով նախատեսվում է ներդնել շահերի բախման ավելի առարկայական գործիքակազմ: Պետական գնումների գործընթացներում պետական բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների, վերջիններիս հետ փոխկապակցված անձանց ուղղակի և անուղղակի մասնակցությունը բացառող համապատասխան օրենսդրական փոփոխությունները դեռևս ընթացքում են:

ՖԽԲ-ի ընթացքում պարզ դարձավ, որ մշակված շահերի բախման կառուցակարգերի վերաբերյալ նախագծում «շահերի բախում» հասկացության և փոխկապակցված անձանց շրջանակի հստակեցումը դեռևս գտնվում են քննարկման փուլում: Բացի այդ, դեռևս պարզ չէր, թե արդյո՞ք իրականացվել է կամ նախատեսվում է քննարկում իրավաբանական անձանց՝ կոռուպցիոն հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսելու մասին:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.11. Կատարելագործել մրցակցության ոլորտի իրավա խախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերը, մշակել այդ գործիքների կիրառման ուղեցույցներ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Պետական գնումների գործընթացում բարելավրքության, հաշվետվողականության և թափանցիկության կատարելագործում	Մշակված են տնտեսական շուկայում իրավախախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերի և այլ գործիքների տեխնիկական բնութագրերը:	ՄՊՀ (համաձայնությամբ)	ԲՏԱ	Տեխնիկական բնութագրերի առկայություն Կիրառվող էլեկտրոնային գործիքներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

	Համապատասխան էլեկտրոնային գործիքները ներդրված են և կիրառվում են պրակտիկայում:				
--	---	--	--	--	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: ՄՊՀ-ի կողմից իրականացվել են ՄՊՀ-ի գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի և պաշտոնական կայքի կատարելագործման, արդիականացման աշխատանքներ: Մասնավորապես՝ կատարելագործվել է գների մոնիթորինգի գործիքակազմը, կատարելագործվել է մի շարք պետական մարմինների փոխգործելիությունը ՄՊՀ-ի էլեկտրոնային համակարգի հետ, ապահովվել է ՄՊՀ-ի որոշումների կատարումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը՝ հարթակի յուրաքանչյուր օգտատիրոջ մոտ իր մասով համապատասխան հասանելիության տրամադրման միջոցով:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.13. Շարունակաբար կատարելագործել հանրային գնումների գործընթացների թափանցիկության և հրապարակայնության համակարգերը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համա կատարող մարմին	Մտուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկմա և արդյունք
Պետական գնումների գործընթացում բարեվարքության, հաշվետվողականության և թափանցիկության կատարելագործում	Էլեկտրոնային գործիքակազմի ներդրման կամ թարմացման տեխնիկական առաջադրանքը մշակված և հաստատված է:	Ֆինանսների նախարարություն)	ԿԿՀ ԱՆ ԲՏԱ	Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային և հաշվետվություններ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: Ավարտվել են էլեկտրոնային գնումների նոր համակարգի

տեխնիկական առաջադրանքի նախագծի մշակման աշխատանքները: Նախագիծը դրվել է հանրային քննարկման, ինչպես նաև պատվիրատուների, քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի ներկայացուցիչների հետ կազմակերպվել են քննարկումներ: Տեխնիկական առաջադրանքը քննարկվել և հավանության է արժանացել Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից: Մրցույթի կազմակերպման նպատակով մշակվել և հաստատվել է «Գնման գործընթացի կազմակերպման առանձնահատկություններ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում, որից հետո հայտարարվել է երկփուլ մրցույթ: Նախատրակավորվել են չորս կազմակերպություններ՝ AWS, Oracle, Ebidtopay և European Dynamics, որոնց հետ ներկայումս բանակցություններ են իրականացվում տեխնիկական առաջադրանքի և որակավորման չափանիշների գնահատման մեթոդաբանության վերաբերյալ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է:**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.14. Կատարելագործել և բարելավել հանրային գնումների ոլորտում հաշվետվողականության կառուցակարգերը՝ հանրության և մասնավոր ոլորտի շրջանում գնումների գործընթացի վերաբերյալ վստահության բարձրացման և ամրապնդման ուղղությամբ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համալսարան	Մտուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Պետական գնումների գործընթացում բարեվարքության, հաշվետվողականության և թափանցիկության կատարելագործում	Մշակված և հաստատված է իրազեկման միջոցառումների պլանը:	Ֆինանսների նախարարություն	ԱՆԿԿՀ	Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է Ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ՍՄԲՈՋԱԿԱՆ:

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: Ֆինանսների նախարարության կողմից մշակվել է իրազեկման միջոցառումների պլան, համաձայն որի՝ քաղաքացիական հասարակության և լրագրողների համար պարզեցվել է գնումների գործընթացի վերահսկողությունը: Բացի այդ, Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է շուրջ 17 հանրային իրազեկման միջոցառումներ, այդ թվում՝ հարցազրույցներ, քննարկումներ, սեմինարներ և այլն:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ իրազեկման միջոցառումների պլանը հասանելի չէր բաց աղբյուրներում: Առանց այս փաստաթղթին հասանելիության հնարավոր չէ գնահատել, թե որքանով է այն եղել համապարփակ, արդյունավետ ու միտված գնումների ոլորտում հանրային վստահության բարձրացմանը:

Բացի այդ, տրամադրված չեն հետևյալ էական տվյալները 17 հանրային իրազեկման միջոցառումների վերաբերյալ՝

- 1. **Միջոցառումների տեսակների մանրամասն նկարագրություն** - չի հստակեցվել, թե քանի հարցազրույց, քննարկում, սեմինար և այլ տեսակի միջոցառումներ են անցկացվել, դրանց տևողությունն ու մասշտաբը:
- 2. **Տարածման ուղիների վերլուծություն** - բացակայում է տեղեկատվությունն այն մասին, թե ինչ տեսակի հարթակների (առցանց, տպագիր մամուլ, ռադիո, հեռուստատեսություն) և կոնկրետ որ ԶԼՄ-ների ու սոցիալական ցանցերի միջոցով են իրականացվել միջոցառումները:
- 3. **Հասանելիության չափման ցուցանիշներ** - չկա տեղեկատվություն դիտումների, մասնակիցների քանակի, լսարանի ներգրավվածության աստիճանի վերաբերյալ, որը կօգնե գնահատել միջոցառումների ազդեցությունը:
- 4. **Մասնակցության ներառականություն** - կազմակերպված քննարկումներին ու միջոցառումներին ներգրավված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, ինչը չի թույլատրում գնահատել շահագրգիռ կողմերի ներգրավման համապարփակությունը:
- 5. **Ազդեցության գնահատում** - չեն ներկայացվել որևէ ցուցանիշներ, որոնցով հնարավոր կլինեք չափել, թե իրազեկման միջոցառումներն ինչպես են նպաստել գնումների գործընթացի վերահսկողության պարզեցմանը կամ թափանցիկության բարձրացմանը:
- 6. **Հետադարձ կապի մեխանիզմներ** - բացակայում է տեղեկատվությունն այն մասին, թե արդյոք առկա էին հետադարձ կապի մեխանիզմներ և ինչպես է այդ հետադարձ կապը օգտագործվել իրազեկման աշխատանքների բարելավման համար:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՍԲՈՂՋԱԿԱՆ, այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել պետական գնումների գործընթացում բարելավաբության, հաշվետվողականության և թափանցիկության կատարելագործմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4.15. Կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման արդյունավետության բարձրացման նպատակով շարունակաբար զարգացնել և կատարելագործել ինստիտուցիոնալ կառուցակարգերը և մեխանիզմները

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի)	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Մտուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք

մակարդակում					
Կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման արդյունավետության բարձրացում	2024 թվականի գործողության համար սահմանված չեն ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	Արդարադատության ակադեմիա	ՊՎԾ Հաշվեքննիչ պալատ ՀՀ ՔԿ	Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ Վերապատրաստումների զեկույցներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ Ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՍԲՈՂՋԱԿԱՆ
			ՀՀ գլխավոր դատախազություն	Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ	
			ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե	Մամուլի հաղորդագրություններ ԶԼՄ հրապարակումներ	

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: 2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում «Տնտեսական հանցագործությունների որակման հիմնահարցեր» թեմայով դասընթացի շրջանակներում վերապատրաստվել է 28 դատախազ, «Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան» թեմայով՝ 72 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, իսկ «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» վերադասարան դասընթացի շրջանակում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի 19 քննիչ: 2023 թվականին «ՀՀ-ում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ընդունվել է Փողերի լվացման գործերի քննության ուղեցույցը: ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի հետ համագործակցությամբ տարվում են աշխատանքներ կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների քննության վարման ուղեցույցների մշակման ուղղությամբ:

Մշտադիտարկման շրջանակներում կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ վերապատրաստումներում ընդգրկվել են հիմնականում դատախազներ և քննիչներ, սակայն հաշվեքննիչ պալատի, ՊՎԾ-ի և ՄՊՀ-ի պաշտոնատար անձանց վերապատրաստման

վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Բացի այդ, կատարողականի թիրախում էր նաև կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների քննության վարման ուղեցույցների և պրոտոկոլների մշակումը՝ ապահովելով քննչական գործողությունների միատեսակ պրակտիկա: 2023 թվականին միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ընդունվել էր «Փողերի լվացման գործերի քննության ուղեցույցը»: ԱՄՆ դեսպանատան հետ համագործակցությամբ տարվում են աշխատանքներ կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների քննության վարման ուղեցույցների մշակման ուղղությամբ:

Մշտադիտարկման շրջանակներում իրականացված որակական վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև վերապատրաստումների քանակական ցուցանիշները մասնակի կատարվել են (շուրջ 119 դատախազ, քննիչ և ՔԿ-ում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք մասնակցել են վերապատրաստումներին), սակայն գործողության որակական բաղադրիչների մասով առկա չեն վերապատրաստումների արդյունավետության (ազդեցության) չափման արդյունքներ՝

- Բացակայում են գնահատման հաշվետվությունները և աշխատակիցների շրջանում կատարված հարցումները, որոնք նշված էին որպես ստուգման միջոց
- Չկա տեղեկատվություն գիտելիքների ստուգման արդյունքների վերաբերյալ, այդ թվում՝ նախնական և վերջնական ստուգումները

Այսպիսով, ԱՆ-ի կողմից գործողության գնահատումը որպես «ամբողջությամբ կատարված» չի արտացոլում փաստացի կատարողականը, քանի որ ուղեցույցների և պրոտոկոլների մշակման ուղղությամբ առկա է միայն մասնակի առաջընթաց, թիրախային ոչ բոլոր խմբերն են վերապատրաստվել, իսկ վերապատրաստումների արդյունավետության գնահատման մեխանիզմները բացակայում են:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ** է:

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ, այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման արդյունավետության բարձրացմանը:

«ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 4-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՑԻՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	13	100 %
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	5	38.46%
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	0	0.00%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	6	46.15%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	2	15.38%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 2-ը համապատասխանում էին սահմանված հատկանիշներին, որոնց գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	2	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	2	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

Վ. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.1. Գործարկել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակ

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի կատարելագործում	Համապատասխան կազմակերպության կողմից փոփոխվել է հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմը, նախնական տարբերակը ներկայացված է ԱՆ	ԱՆ	ԲՏԱ	Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակը շահագործող մարմինների շրջանակում	Գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված չէ**: Դռնոր կազմակերպության կողմից աջակցության կասեցման արդյունքում 2024 թվականի ավարտին կանգ են առել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակման ուղղությամբ տարվող աշխատանքները: Աջակցության տրամադրման դեպքում հնարավոր կլինի ավարտին հասցնել տեխնիկական առաջադրանքի մշակումը և ապահովել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման հարթակի ստեղծումը:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.2. Բարելավել մոնիթորինգի և գնահատման իրականացման ընթացակարգը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք

Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի կատարելագործում	Մոնիթորինգի և գնահատման մեթոդական փաստաթղթերը բարելավման ուղղված փաստաթղթերը մշակված են: Հակակոռուպցիոն ռազմավարությամբ ամրագրված են մոնիթորինգի և գնահատման բարելավված կարգավորումները:	ԱՆ	ՀԿ	Իրավական ակտերի առկայություն Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային և հաշվետվություններ ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի 5-րդ գնահատման արդյունքների կատարման վերաբերյալ ՀՀ կատարողականի վերաբերյալ զեկույց	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ
---	---	----	----	---	-----------------------------------

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: ԱՆ-ի կողմից մշակվել է «ՀՀ կառավարության 26.10.2023թ. N 1871-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է հաստատել 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունը ՏՀԶԿ կողմից սահմանված ցուցանիշներին համապատասխան: Նախագիծը ներկայացվել է շահագրգիռ մարմինների և ոլորտային ՀԿ-ների կարծիքի, և ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Նախագծի լրամշակման աշխատանքները ընթացքի մեջ են:

Մշտադիտարկման արդյունքում բացահայտվեց, որ հարթակի հետ կապված կան թվայնացման դժվարություններ, իսկ աշխատանքների մեծ մասը ֆինանսավորման հետ է կապված: Նախագիծը արդեն մշակվել է, և փորձագետներ են ներգրավվել դրա վերաբերյալ կարծիքների արտահայտման համար: Այդ կարծիքների հիման վրա նախագծի լրամշակում կարվի, և այն կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.3. Վերանայել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությանն առնչվող կարգավորումները և ներառականության շրջանակը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի կատարելագործում:	2024 թվականի գործողության համար սահմանված չեն ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշներ	ԱՆ	Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամներ	Իրավական ակտի առկայություն (2025թ)	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: ԱՆ-ի կողմից մշակվել է «ՀՀ վարչապետի 24.06.2019 թ.-ի ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը, որով առաջարկվում է բարելավել հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունը, սահմանել խորհրդի գործունեությանը ՀԿ-ների ներգրավման բարելավված կառուցակարգեր:

Մշտադիտարկման արդյունքները ցույց տվեցին, որ բացի իրավական ակտի նախագծի մշակումից, կատարողականի թիրախում էր նաև նախագծերի քննարկումը Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամների հետ, ինչը տեղի չի ունեցել:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.4. Սահմանել կոռուպցիայի դեմ պայքարի, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման կառուցակարգերը և ապահովել դրանց իրագործումը

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման	2024 թվականի գործողության համար սահմանված չեն ուղղակի	ԱՆ	ԿԿՀ	Իրավական ակտի	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

կառուցակարգերի կատարելագործում:	արդյունքային և քանակական ցուցանիշներ			առկայություն (2025թ)	
---------------------------------	--------------------------------------	--	--	----------------------	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**: ԵՄ հետ համագործակցության շրջանակներում մեկնարկել են կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման վերաբերյալ մեթոդաբանության մշակման աշխատանքները: ԱՆ-ի կողմից մշակվել, ինչպես նաև շահագրգիռ մարմիններին կարծիքի է ներկայացվել «ԿԿՀ-ի մասին օրենքում» լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվել է Հանձնաժողովին տալ պարբերական հարցումներ իրականացնելու իրավասություն:

ԿԿՀ-ի կողմից 18.10.2024թ.-ի թիվ 07-Լ որոշմամբ հաստատվել է կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությունը:

Մշտադիտարկման արդյունքներով պարզ դարձավ, որ ԿԿՀ-ի կողմից հաստատված մեթոդաբանությունը մշակվել է՝ կիրառելով Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանի կողմից իրականացվող հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդաբանությամբ նախատեսված մոտեցումները:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.5. Զարգացնել Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունները՝ վերապատրաստումների իրականացման և ուղեցույցների մշակման եղանակներով

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման ինստիտուցիոնալ համակարգի հզորացում	Հավաքագրվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու նշանակած պետական մարմինների և ՏԻՄ մարմինների առնվազն 80%-ի կարիքները:	ԱՆ	Պետական կառավարման համակարգի մարմիններ Վարչապետի	Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ Ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՆ ՈՉ

	Վերապատրաստումների ն մասնակցել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու պետական մարմինների և ՏԻՄ մարմինների՝ առնվազն 80%-ը: Վերապատրաստումներն իրականացվել են առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 90% իմացություն: Մշակվել և հաստատվել է Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների համար առնվազն 1 ուղեցույց:		աշխատակազմ ՀՀ նախագահի աշխատակազմ ԱԺ աշխատակազմ Անկախ և ինքնավար մարմիններ ՏԻՄ մարմիններ	ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում հրապարակումներ Ուղեցույցի առկայություն	ԱՄԲՈՂՋԱԿԱՆ :
--	---	--	---	---	---------------------

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է մասնակի**, սակայն ավելի ուշ վերանայված և հրապարակված հաշվետվությամբ գործողությունը գնահատվել է **ամբողջությամբ կատարված**: ԱՆ-ի կողմից մշակվել է հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործունեության ուղեցույցը: Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների համար անցկացվել է վերապատրաստման 2 դասընթաց նախատեսված ժամաքանակին համապատասխան:

Մշտադիտարկման արդյունքում տրամադրվեց տեղեկատվություն, համաձայն որի ուղեցույցները մշակվել են ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ, որոնց հրապարակումը իրականացվել է ԱՆ-ի պաշտոնական կայքում: Վերապատրաստումները կազմակերպվել են ուղեցույցների մշակման գործընթացի ընթացքում՝ նպատակ ունենալով հասկանալ, թե որոնք են հիմնական խնդիրները, որոնք պետք է ընդգրկվեն ուղեցույցներում:

Մշտադիտարկման շրջանակներում իրականացված որակական վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև գործողության թիրախները մեծամասամբ իրականացվել են, սակայն առկա են որոշակի բացթողումներ, որոնք սահմանափակում են գործողության իրական ազդեցության գնահատման հնարավորությունը:

1. Վերապատրաստումների ազդեցության գնահատման մեխանիզմների բացակայություն

- Չի նշվում, թե քանի հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու է մասնակցել վերապատրաստումներին
- Բացակայում է տեղեկատվությունը վերապատրաստումների արդյունավետության չափման մեխանիզմների մասին, այդ թվում գիտելիքների աճի
- Չկան տվյալներ, որոնք ցույց կտային, թե ինչպես են զարգացել հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունները

2. Հանրային իրազեկման և լուսաբանման հարցեր

- Որպես ստուգման միջոց նշված են ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում հրապարակումները, սակայն տեղեկատվություն չի տրամադրվել այդպիսի հրապարակումների առկայության վերաբերյալ
- Բացակայում է տեղեկատվությունը, թե որքանով են այս գործողությունները նպաստել հանրային վստահության բարձրացմանը հակակոռուպցիոն ծրագրերի նկատմամբ

Այսպիսով, թեև ձևական առումով գործողությունը մեծամասամբ իրականացվել է, սակայն դրա իրական ազդեցությունը և արդյունավետությունը հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունների զարգացման վրա հնարավոր չէ գնահատել՝ համապատասխան տվյալների և գնահատման մեխանիզմների բացակայության պատճառով:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ:**

Ազդեցության մակարդակի (որակական) արդյունքներով գործողությամբ ռազմավարական խնդիրը (արդյունքը) ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ, այս գործողության շրջանակներում իրականացված գործողությունները ամբողջապես չեն նպաստել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման ինստիտուցիոնալ համակարգի հզորացմանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5.6. Դոնորների բնականոն աշխատանքների համակարգման մեխանիզմի ապահովում

Միջանկյալ արդյունքները՝ ռազմավարական խնդրի (մասնավոր նպատակի) մակարդակում	Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ (2024թ)	Կատարող մարմին	Համակատարող մարմին	Ստուգման միջոց (2024թ)	Մշտադիտարկման արդյունք
Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման ինստիտուցիոնալ համակարգի հզորացում	Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափը և ընթացակարգը հաստատված են ՀՀ ԱՆ-ի	ԱՆ	Փոխվարչապետի գրասենյակ	Իրավական ակտի առկայություն Դոնորների աշխատանքներ	Գործողությունը ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ

	համապատասխան հրամանով: Վերոնշյալ ակտի հաստատումից հետո տարեկան կտրվածքով իրականացվում է դոնորների աշխատանքների համակարգ ման առնվազն 3 նիստ, դրանց արդյունքների արձանագրությունները հրապարակվում են:			համակարգման նիստերի արձանագրությո ուններ Կիսամյակային և տարեկան մոնիթորինգայի ն հաշվետվությու ններ	
--	---	--	--	---	--

Համաձայն ՀՀ ԱՆ-ի կողմից հրապարակված հաշվետվության՝ գործողությունը գնահատվել է **կատարված է ամբողջությամբ**: ԱՆ-ի կողմից մշակվել է «Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման կարգը և ձևաչափը», որը հաստատվել է Արդարադատության նախարարի 19.06.2024 թ.-ի 19-ի N 348-Լ հրամանով:

Նույն աղբյուրի համաձայն՝ Ռազմավարությունից բխող գործողությունների իրականացման շրջանակներում պարբերաբար տեղի են ունեցել հանդիպումներ դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնց մասին տեղեկատվությունը հրապարակվել է ԱՆ կայքում:

Ըստ մշտադիտարկման արդյունքների, որպես այդպիսին, դոնորների հետ նիստեր չեն կազմակերպվել, դրանք եղել են երկկողմ հանդիպումներ: Արձանագրություններ առկա չեն, հրապարակվել են միայն հանդիպման մասին լուրեր³⁷: Բացի այդ, աշխատանքների համակարգման կարգը և ձևաչափը հաստատելու մասին իրավական ակտը չի քննարկվել ՔՀԿ-ների հետ, չնայած այն հանգամանքին, որ ՔՀԿ-ները որպես համակատարող մարմիններ/կառույցներ ընդգրկված են Ռազմավարության տարբեր գործողություններում: Ավելին, կարգում նախատեսված չեն ՔՀԿ-ների հետ համագործակցության որևէ ձևաչափ կամ մեխանիզմ:

Այսպիսով, գործողության քանակական կատարողականը չի հասնում այն մակարդակին, որն անհրաժեշտ է այն ամբողջությամբ կատարված համարելու համար:

Ընթացակարգային (քանակական) գնահատումների արդյունքներով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ**:

³⁷ <https://www.moj.am/article/4077> , <https://www.moj.am/article/4067> , <https://www.moj.am/article/4011>

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ» ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	6	100 %
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	0	0.00%
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	1	16.67%
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	4	66.67%
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	1	16.67%

Համաձայն մշտադիտարկման մեթոդոլոգիայի՝ ազդեցության մակարդակի (որակական) գնահատման համար ընտրված խումբ գործողություններից 1-ը համապատասխանում էր սահմանված հատկանիշներին, որոնց գնահատումը ներկայացված է ստորև.

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.		
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0	0%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	1	100%
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0	0%

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Ռազմավարական նպատակները	Ընթացակարգային (քանակական) ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ		Ազդեցության մակարդակի (որակական) ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	
	Գնահատված գործողությունների թիվը	Գործողությունների կատարողական ցուցանիշը	Գնահատված գործողությունների թիվը	Գործողությունների կատարողական ցուցանիշը
ՌՆ 1	21	33.33%	-	-
ՌՆ 2	15	33.33%	3	0%
ՌՆ 3	14	29%	1	0%
ՌՆ 4	13	38.46%	2	0%
ՌՆ 5	6	0%	1	0%

2. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Ընթացակարգային (քանակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	69
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	21
ՈՐԻՑ ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ	9
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	33
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	6
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	30.43%

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ցուցանիշ 2023-2024թթ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	7
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է	0
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ Է ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ	7
ՈՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉԷ	0
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	0%

3. ՎԵՐ ՀԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Մեթոդական խնդիրներ և առաջարկներ

- 1) Գնահատման համակարգում առկա է կառուցվածքային անհամապատասխանություն. վերջնական գնահատման փուլի համար մշակված են ստուգման գործիքներ, սակայն միջանկյալ գնահատման փուլում նմանատիպ ստուգման մեթոդներ բացակայում են: Այս բացը հանգեցնում է միջանկյալ փուլում չկանխատեսված խոչընդոտների առաջացմանը և կարող է բարդություններ առաջացնել լրիվ և բազմակողմանի գնահատման, ինչպես նաև օբյեկտիվ կատարողական ցուցանիշ վերհանելու հարցում:

Առաջարկ

Վերանայել գործողությունների միջանկյալ գնահատման ցուցանիշները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը վերջնական գնահատման մեթոդաբանությանը:

Առաջիկա նոր Հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակման փուլում հաշվի առնել ներկա փորձի թերությունները և ապահովել միջանկյալ ու վերջնական գնահատման գործիքների միջև կառուցվածքային համապատասխանություն՝ նախատեսելով միջանկյալ փուլերի համար նույնպես համակարգված և արդյունավետ ստուգման մեխանիզմներ:

- 2) Գործողություն 3.14-ի կատարող մարմինն է ԿԿՀ-ը, սակայն ըստ հանձնաժողովի՝ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում ՔՀԿ-ների ֆոնդայաթայթման կարողությունների զարգացումը դուրս է իրենց իրավասությունների շրջանակներից, ուստի այն չի կարող ամբողջովին կատարված լինել հանձնաժողովի կողմից: Այս իրավիճակը ցույց է տալիս ռազմավարության նախագծման փուլում թույլ տրված հիմնարար թերություն՝ ոչ բավարար ուշադրություն է դարձվել կատարող մարմինների իրավասությունների վերլուծությանը և գործողությունների հետ դրանց համապատասխանության ապահովմանը: Կատարողականի փուլում այս թերի պլանավորումը հանգեցրել է լուրջ խնդրի՝ հիմնական կատարող մարմինը հայտնում է, որ իր վրա դրված գործողությունը չի կարող իրականացնել՝ բացակայում են համապատասխան իրավասությունները:

Առաջարկ

Իրականացնել կատարող մարմինների իրավասությունների համապարփակ վերլուծություն և վերանայել գործողությունների հետ դրանց համապատասխանությունը: Առաջիկա նոր Հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակման փուլում հաշվի առնել ներկա փորձի թերությունները և ապահովել կատարող մարմինների իրավասությունների մանրամասն քարտեզագրում, անհամապատասխանության դեպքերում նախօրոք ապահովել իրավասությունների ընդլայնում կամ գործողության վերահասցեագրում այլ կատարողի:

- 3) Գործողություն 4.4-ով նշված էր 2024 թվականի համար կազմակերպել 2 վերապատրաստում: Սույն գործողության ուղղակի արդյունքային և քանակական ցուցանիշները նշվում են ոչ թե կոնկրետ տարվա համար, օրինակ՝ 2024 թվականին

կազմակերպվել են երկու դասընթաց, այլ ընդհանուր, օրինակ՝ Կազմակերպված և իրականացված են առնվազն 6 վերապատրաստման դասընթացներ (2026թ.):

Նմանապես 4.15 գործողության շրջանակներում է նախատեսված:

Այս մոտեցումը թույլ է տալիս, որ նախատեսված տարում չկազմակերպվեն միջոցառումները, բայց դրա փոխարեն ծրագրի ավարտին ունենալ ամբողջը կազմակերպված՝ արդյունքում ստեղծելով ուշացած կատարման իրադրություն և խափանելով ռազմավարության համաչափ իրականացումը:

Առաջարկ

Վերանայել արդյունքային ցուցանիշների ձևակերպումը՝ ապահովելով դրանց տարեկան բաշխումը և կոնկրետ ժամկետների սահմանումը: Առաջիկա նոր ռազմավարության մշակման ժամանակ ապահովել, որ յուրաքանչյուր գործողության արդյունքային և քանակական ցուցանիշները լինեն տարեկան կտրվածքով տարբերակված՝ բացառելով ուշացած կատարման հնարավորությունը և ապահովելով ծրագրի տարեկան հավասարաչափ կատարողականը:

- 4) Ռազմավարության Գործողությունների ծրագրով նախատեսված վերապատրաստումների ոլորտում առկա են որակական գնահատման և արդյունավետության չափման համակարգային բացեր: Թեև վերապատրաստումների քանակական ցուցանիշները կատարվում են, բացակայում է դրանց որակական գնահատումը և ազդեցության չափման գործիքները: Չեն ստուգվում ձեռք բերված գիտելիքները, չկան ելակետային տվյալներ համադրության համար և բացակայում են փաստեր վերապատրաստումների իրական ազդեցության մասին: Այս իրավիճակը հանգեցնում է վերապատրաստումների ոչ ամբողջական իրականացմանը և սահմանափակում է ռազմավարական նպատակների ամբողջական իրագործումը:

Առաջարկ

Մշակել վերապատրաստման որակական գնահատման և արդյունավետության չափման համապարփակ համակարգ: Ստեղծել ելակետային տվյալների հավաքագրման մեխանիզմներ և մշակել ձեռք բերված գիտելիքների ստուգման գործիքներ: Սահմանել վերապատրաստումների ազդեցության գնահատման պարբերական ընթացակարգեր, որոնք կապահովեն վերապատրաստումների իրական ազդեցության փաստագրումը: Ապահովել վերապատրաստումների մոնիթորինգի և գնահատման շարունակական գործընթաց՝ ռազմավարական նպատակների ամբողջական իրագործման ապահովման համար:

Բ. Բովանդակային խնդիրներ և առաջարկներ

- 5) Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության ապահովման ոլորտում առկա են համակարգային խնդիրներ, որոնք բխում են օրենսդրական կարգավորումների անկատարությունից և գործնական իրականացման թերություններից: Նշանակման և պաշտոնանկության գործընթացների անհստակությունը, մրցութային խորհրդի անդամների միջև շահերի բախման կարգավորման անբավարարությունը օրենսդրական մակարդակում ստեղծում են իրավական բացեր: Այս համակարգային խնդիրները

հանգեցնում են Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ անկախության խաթարմանը, ինչը վտանգում է հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը և հանրային վստահությունը մարմնի նկատմամբ:

Առաջարկ

Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության ապահովմանն ուղղված գործողությունները՝ հաշվի առնելով սույն զեկույցում բարձրացված խնդիրները և ՏՀԶԿ-ի Ստամբուլյան գործողությունների ծրագրի 5-րդ փուլի զեկույցի 8.3 ցուցիչի դիտարկումները:

Հստակեցնել պաշտոնանկության հիմքերը, մասնավորապես՝ «քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքի խախտման» չափանիշները և վերանայել մրցութային խորհրդի կազմավորման կարգը՝ ապահովելով ՔՀԿ ներկայացուցիչների անկախությունը և բացառելով մրցութային խորհրդի անդամների միջև բոլոր տեսակի շահերի բախման հնարավոր դրսևորումները:

Անհրաժեշտ է ձևավորել այնպիսի մոտեցումներ, որոնք կնպաստեն ընթացակարգերի ինստիտուցիոնալ ամրապնդմանը, իրավաչափության ապահովմանը, ինչպես նաև քաղաքական և այլ ազդեցություններից ազատ՝ անկախ հակակոռուպցիոն համակարգի կայացմանը:

- 6) Մրցութային խորհուրդը, որը հանդիսանում է ԿԿՀ անդամների ընտրության գործընթացի առանցքային մեխանիզմ, չի ապահովում բավարար արդյունավետություն, իսկ ԱԺ մեծամասնության չմասնակցությունը քվեարկությանը էականորեն խաթարում է ընտրության գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունը: Թեև շրջանառության մեջ է դրվել օրենսդրական փոփոխությունների նախագիծ, սակայն այն չի լուծում մրցութային խորհրդի և ԱԺ-ի մասնակցության համակարգային խնդիրները: Բացի այդ, նախագծով կարգավորված չէ մրցութային խորհրդի անդամների միջև շահերի բախման բացառումը: Այս իրավիճակը վտանգում է ԿԿՀ անկախությունը և գործունեության արդյունավետությունը:

Առաջարկ

ԱԺ-ի մասնակցության խնդիրը բխում է քաղաքական համակարգային առանձնահատկություններից և հանդիսանում է մեծամասնության քաղաքական որոշման արդյունք, որը չի կարող լուծվել բացառապես օրենսդրական փոփոխությունների միջոցով, անհրաժեշտ է ձևակերպել այս խնդրի համակարգային բնույթը որպես ԿԿՀ ինստիտուցիոնալ անկախության սահմանափակող գործոն:

Մշակել մրցութային խորհրդի գործունեության բարելավված ստանդարտներ և սահմանել հստակ կանոններ մրցութային խորհրդի անդամների շահերի բախման կանխարգելման համար:

- 7) Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման ընթացքում առկա են ժամկետային համակարգային խնդիրներ, որոնք արտահայտվում են գործողությունների ոչ ժամանակին կատարման մեջ: Ներկայիս ռազմավարության գործողությունները չեն իրականացվում նախատեսված ժամկետներում, ինչը խաթարում է ընդհանուր

ռազմավարական նպատակների իրագործումը: Միաժամանակ, այն դեպքում, եթե չկատարված գործողություններ մեխանիկական եղանակով տեղափոխվի առաջիկա ռազմավարություն, դա ևս չի լուծում հիմնական խնդիրը՝ ռազմավարական պլանավորման և իրականացման արդյունավետության ոչ բավարար մակարդակը: Այս մոտեցումը հանգեցնում է խնդիրների կուտակմանը և ռազմավարական մակարդակում ցուցանիշների անիրագործելիությանը:

Առաջարկ

Ապահովել ներկայիս ռազմավարության չկատարված գործողությունների համապարփակ վերլուծություն և դրանց չկատարման պատճառների բացահայտում: Մշակել ռազմավարական պլանավորման բարելավված ներքին մեթոդաբանություն, որը կներառի իրատեսական ժամկետներ, հստակ պատասխանատվություն և շարունակական մոնիթորինգի մեխանիզմներ: Սահմանել առաջնահերթ գործողություններ, որոնք անհրաժեշտ է ավարտել ներկայիս ռազմավարության շրջանակներում՝ նախքան նոր ռազմավարության մշակումը: Ստեղծել ռազմավարական իրականացման արդյունավետության գնահատման և կարգավորման համակարգ, որը կապահովի գործողությունների ժամանակին կատարումը և կանխի հետագա ռազմավարություններում նմանատիպ խնդիրների կրկնությունը:

- 8) Ազդարարման վիճակագրության հավաքագրման և մշակման ոլորտում առկա են տվյալների որակի և հուսալիության համակարգային խնդիրներ: ՄԻՊ գրասենյակը սահմանափակվում է տարբեր գերատեսչություններից ստացված թվային տվյալների մեխանիկական հավաքագրմամբ և ամփոփմամբ՝ առանց բովանդակային վերիֆիկացիայի: Բացակայում են երկաստիճան ստուգման և վերիֆիկացիայի մեխանիզմները, ինչը հանգեցնում է հաշվառման տարբերությունների և անհամապատասխանությունների: Հրապարակված 2024 թվականի ՄԻՊ տարեկան հաղորդմամբ³⁸ առկա են տվյալների թափանցիկության և ճշգրտության խնդիրներ (օրինակ՝ պարզ չէ, արդյոք նշված կոռուպցիոն բնույթի 10 դեպքերը հենց հարթակի միջոցով են ստացվել, թե նաև այլ իրավասու մարմիններից են ներկայացվել: Նմանապես՝ 2024թ. նոյեմբերի դրությամբ ստացված 293 ազդարարումների, դեկտեմբերին ստացված 57 ազդարարումների³⁹ և տարեկան 380 ազդարարումների միջև թվային անհամապատասխանություն), որոնք սահմանափակում են վիճակագրության հուսալիությունը և օգտագործման արդյունավետությունը:

Առաջարկ

Մշակել ազդարարման վիճակագրության հավաքագրման և վերիֆիկացիայի բարելավված համակարգ: Ստեղծել տվյալների երկաստիճան (իրավասու մարմին/ՄԻՊ) ստուգման և վերիֆիկացիայի մեխանիզմներ, որոնք կապահովեն տարբեր գերատեսչությունների տվյալների համադրելիությունը և կբացառեն տարբերություններն ու անհամապատասխանությունները:

³⁸ 2024 թվականի ՄԻՊ տարեկան հաղորդումը հասանելի է հետևյալ հղմամբ.

<https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf>

³⁹ <https://azdararir.am/hy/statistics>